



ԱՄՈՆ

ՅՈՒՆՈՒԱՐ - ԱՊՐԻԼ

ԹԻԻ 1 - 4

ՄԻՈՆ

ԽԷ. ՏԱՐԻ - ՆՈՐԾՈՐԱՆ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԴԵՍԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԹՈՒԹԵԱՆ

1973

Յունուար - Ապրիլ

Թիւ 1 - 4

1973

January - April

No. 1 - 4




S I O N

VOL. 47

**OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM
A BIMONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY**

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem

Editor-in-chief: Bp. Shahe Ajamian Editor: Ara Kalaydjian



St. James Press
Jerusalem

Handwritten purple scribble or signature.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ

1973 Ապրիլ 2 թուակիր Հաղորդագրութեամբ մը, Ալեք Մանուկեան Մշակութային Հիմնադրամի Գործադիր Մարմինը կը հրատարակէ «Հ. Բ. Ը. Միութեան Ա. Մանուկեան Գրական Մրցանակի վերջնական արդիւնքները»: Երկար այս տեղեկատուութիւնը իր բովանդակութեամբ խորհրդածութեան կը մղէ մեզ եւ հետաքրքրական քանի մը երևույթներ կը սլարդէ արտասահմանի մեր կեանքէն:

Անցեալ դարու երկրորդ կէսէն սկսեալ, զանազան երկիրներու մէջ եւ տարբեր առիթներով մրցանքներ կազմակերպուած են, գրական եւ բանասիրական նիւթերու շուրջ: Ամենէն արդիւնաւորն ու տեսականը եղած է Պոլսոյ Յովսէփ Իզմիրեան Գրական Մրցանքը, Հայոց Պատրիարքարանի հովանաւորութեամբ: Անոր ներկայացուած բանասիրական եւ պատմական երկերը, նոյնիսկ անոնք որոնք մրցանակի արժանացած չեն եւ որոնց բնագիրները այժմ կը պահուին Ս. Աթոռիս գիւմար, մեծ արժէք ներկայացնող ուսումնասիրութիւններ են, մեկեկեաններու օժանդակութեան սպասող հրատարակուելու համար: Իզմիրեան մրցանքին մասնակցած են հմուտ բանասէրներու կողքին՝ սիրողներ (amateur) եւս, որոնց մտահոգութիւնը եղած է յաճախ անձնական փառասիրութենէ տարբեր՝ իրենց տրամադրութեան տակ եղած կարեւոր նիւթեր հանրութեան ու շաղրութեան բերելու փափաք մը: Իսկ նոյն մրցանքին գրական բաժինը միշտ ալ խեղճ եղած է, ոչ մէկ ակնառու ստեղծագործութիւն ներկայացուած ըլլալով, որովհետեւ առաջին օրէն Իզմիրեան մրցանքը հետաքրքրուած է բանասիրական—պատմական գործերով, քան զուտ գրական երկերով: Եւ արդէն ամէն տեսակէտէ նպատակայարմար պիտի ըլլար որեւէ մրցանքի դաշտը սահմանափակել, կեդրոնանալ զուտ գրական, զուտ բանասիրական, կամ զուտ պատմական նիւթերու վրայ, որպէսզի մէկ կողմէ երկուութիւն չստեղծուէր, եւ միւս կողմէ ալ լուազոյն արդիւնքներու տիրացուէր:

Ալեք Մանուկեան մրցանքն ալ նախորդներուն կը հետեւի, եւ ունի բանաստեղծութեան, պատմուածքի, վէպի, թատրերգութեան եւ ուսումնասիրութեան անջատ բաժիններ: Մակայն տարբեր միւսներէն՝ իւրաքանչիւր նիւթի համար դատական առանձին մարմիններ նշանակուած են, հետեւաբար գործնականօրէն ամէն մէկ նիւթ անջատ մրցանք մըն է: Իսկ ինչ որ զայն բոլորովին կ'անջատէ միւսներէն՝ նիւթական վարձատրութեան աստիճանն է: Էականը վարձատրութեան այս սխտեմին մէջ, առաջնութիւն

194-98



19389 ահ

չահած երկին սպազբութիւնն է, Հիմնադրամին նիւթական միջոցներով: Ծանօթ է թէ Հայ գրողը կամ բանասէրը իր երկերը տպագրելու միջոցներէն զուրկ եղած է բոլորովին. այս իրողութեան խօսուին փաստերը չե՞ն պարբերական մեր մամուլին հասարածաները, ուր կը մնան, գրեթէ ամբողջական մոռացութեան մէջ, գրողէաներու կամ ուսումնասիրողներու գործերը, առանց հատորով հրատարակուելու բախտը վայելելու: Բայց միւս կողմէ, շատ առատաձեռն վարձատրութիւն մըն ալ, առաջնութիւն չահած երկի հեղինակին տրուած, բարոյական քաջալերանքին կը միացնէ նոյնքան կարեւոր եւ անհրաժեշտ նիւթական սպահնութիւնը եւ: Անարդար եւ սպարարոյ է Հայ գրողէն ակնկալել — յաճախ պահանջել ստեղծագործական բեղուն եւ անբնօճէջ կեանք, բոլորովին անտես առնելով ենթակաշին նիւթական սպահնաները: Այդպէս եղած է անցեալին, այդպէս կը շարունակուի ներկայիս, շատ քիչ բացառութեամբ: Մեռած Հայ գրողին «գրպանէն սփռու եւ հաց գտան» բանաձեւը լատպոյն վկայականը չե՞նք նկատած Պարսնեանին օրերէն: Որքա՞ն աւելի ճոխ եւ հարուստ սիրտի բլլար մեր գրականութիւնը, եթէ Հայ գրողներուն համար ստեղծած բլլայինք նիւթական բարեկեցութեան ամենէն տարրական պայմանները: Այս շատ կրկնուած իրողութիւնը կը ստիպուինք դարձեալ մէջտեղ բերել Ալեք Մանուկեան Գրական Մրցանակին տրութիւնը, որովհետեւ բազմութիւններ այս ցաւը մասնանշած եւ գրողներուն ցուակից բլլալով հանդերձ, Լ. Բ. Ը. Միութեան մեծանուն Նախագահն է որ իր սեփական օրինակով բոլորիս ցուց կու տայ գործնական քայլի գիտելու կերպերը: Բարոյական կեղծ ըմբռնումի մը համաձայն, մեր ժողովուրդին մէջ քիչ չէ թիւր անոնց՝ որոնք համոզուած են թէ գրողը վեր է նիւթէն, գրամին մասնագիտութիւնը պէտք չէ ունենայ. հետեւաբար, այսպիսիներ մեղքին սեւով կ'ուզեն ծածկել նիւթական վարձատրութեան իւրաքանչիւր արարք: Այսպէս է որ, հայ թերթերու այնքան ժրջան աշխատակիցները չեն վարձատրուիր նիւթապէս, ոչ ալ մեր գրողները քանի մը սակիւ չահ կ'ընեն իրենց գիրքերու վաճառումով. թերթի աշխատակցութիւնը «սոցալային պարտականութիւն» է, իսկ գիրք հրատարակելը — է՛հ, անտեղի արարք մը, որուն պատիժը արդէն կը կրէ հեղինակը...:

Մեր գրականութեան մէջ չէ պատահած պարագայ մը, երբ տաղանդաւոր եւ արուեստագէտ գրող մը ուզէ իր կարողութիւնը գործածել՝ նիւթական սպահով կեանքի հասնելու համար. թերեւորս միւս իրողութիւնն է ճիշդը, երբ անհատ մը իր ունեցած խնայողութիւնն ալ կը ծախսէ գիրքի ու թերթի համար. Գրիգոր Արծրունին «Մշակ»ը հրատարակեց՝ քիչ քիչ «ուտելով» հօրենական իր կալուածներն ու հարստութիւնը: Հետեւաբար ընչաքաղցութեամբ կարելի չէ մեղադրել Հայ գրողը, որ ընդհակառակը՝ նիւթականի առօրեայ մասնագիտութեան մէջ խորամուխ, ընդհանրապէս իր արիննով կը ստեղծագործէ, կամ յաճախ ալ հիասթափութեամբ տապալած, ա՛լ կը զաղբի գրելէ: Գրողը ամենէն առաջ սահմիւրայ է, ուղի բացող, ժողովուրդի մը մտածումը, տենչերը, իղձերը հունատորոզ՝ իրրեւ այդպիսին, ան բոլորին յարգանքին պէտք է

արժանանայ, իսկ նման յարգանք մը կը յառաջանայ միա՛յն երբ սորվինք նախ յարդել գրողին արժանապատուութիւնը, երբ վարժուինք գրողը ընդունիլ իրրեւ մէկը որ կրնայ մեզի «Հաւասարակից» ըլլալ, այսինքն տիրանալ հանդիստ կեանք մը ապրելու իրաւունքին: Իսկ գրողին արժանապատուութիւնը կը յարդենք՝ երբ զայն կը քաջալերենք բարոյապէս եւ նիւթապէս. երբ զինք չենք կապեր բարոյական պարտաւորութիւններու եւ «երախտագիտութեան» շղթաներով, երբ, ի վերջոյ, կը ստեղծենք անկաշկանդ եւ ազատ ստեղծագործութեան պայմանները գրողին համար: Այլք Մանուկեան ահաւասիկ ճիշդ այս կ'ընէ, երբ առանց աւելորդ թմբկահարութեան հայ մտաւորականներու օգնութեան կամ գրական մրցանքներու Փօնտեր կը հաստատէ, իր միակ «չա՛ճ»ը ըլլալով սրտի եւ խղճի գոհունակութիւնը:

* * *

Սակայն մրցանքի արդիւնքները յայտարարող հաղորդագրութիւնը քանի մը կէտեր կը մատնանչէ, որոնք հրապարակային քննարկումի կարօտ են: Այսպէս, շատ մեկին բառերով, յայտարարութեան մէջ կ'ըսուի. «Ճարեց, եւ անունի հասած մեր գրողներէն շատերը չմասնակցեցան մրցանքին», ապա պատճառները կը մատնանչուին այս բացակայութեան: Ինչ ալ ըլլան այդ պատճառները, իրողութիւնը կը մնայ նոյնը, խոսվող եւ մեզի մտածել տուող: Արդեօ՞ք հրասթափութիւնը սկսած է արդէն իր քանդումը, արդեօ՞ք ստեղծագործական կիրքը մարելու մօտ է, եւ կամ ներշնչումի կրա՞կն է որ յաւէտ չիջած է: Եթէ երէց եւ համրաւի տիրացած հեղինակները չեն մասնակցիր գրական շարժումին, ո՞վ ուղղութիւն պիտի տայ նորերուն, սկսնակները օտա՞ր արուեստներէն պիտի վերցնեն իրենց տիպարները կամ ներշնչումները:

Եւ արդէն Այլք Մանուկեան Գրական Մրցանակին արդիւնքները մեզի խորհիլ չե՞ն տար այս մտաւախութիւններուն շուրջ: Պատմուածքի եւ վէպի բաժինը, ամենէն կարեւորը թերեւորս, «առաջնութեան աստիճանին հասնող երկի մը չգոյութեան պատճառով» մրցանակ չունի, մինչ բանաստեղծութեան եւ թատրերգութեան մրցանակները կը յատկացուին բոլորովին անձանօթ երկու գրողներու: Եթէ այսպէս շարունակուի, յաջորդ մրցանքներուն դատական մարմինները կա՛մ մրցանակ պիտի չյատկացրնեն, եւ կամ առաջնութեան պիտի արժանացնեն այնպիսի երկեր՝ որոնք բարձր արուեստի եւ խորունկ ներշնչումի կնիքը չեն կրեր:

Գրականութեան կարեւորութեան համոզուած եւ մեր ժողովուրդին բարօրութեամբ մտահոգ բոլոր հայերուն փափաքն է որ արտասահմանի հայ արուեստագէտ գրողները նորողուած եռուանդով եւ ներշնչումով բեղմնաւորեն իրենց ստեղծագործական կեանքը եւ աւելի մեծ թիւով մասնակցին Այլք Մանուկեան Գրական Մրցանքին՝ որուն օգուտները վեր են ամէն գնահատանքէ:

Ա. Գ.

ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ԶՕՐ ԺՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

Բ Ե Թ Ղ Ե Հ Է Մ Ի Ս Ո Ի Բ Բ Ա Յ Բ Է Ն

ԺՈՂՈՎՈՒՐԿ ՀԱՅՈՅ ՈՐ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

Ե Ի Ի ՍՓԻՒՌՍ ԱՇԽԱՐՀԻ

Մեր Տիրոջ Սուրբ Ծննդեան այս խորհրդաւոր գիշերուան մէջ՝ նորէն կը լեցուինք սիրոյ, յոյսի եւ ուժի յաւերժական ժայթքով, որովհետեւ աստուածայայտնութեան խորհուրդը քեւաւոր վերելքով մը կը հանէ զմեզ երկրէն երկինք, հանդիսատես քննելու մարմնով երեւցող Աստուծոյ գորութեանը:

Ունայն արտայայտութիւն մը չէ, «այսօր երկիրս երկինք եղեն» բացայայտութիւնը, գոր սրբազան եղբ կ'արձատարէ մեզնի տարի մեր Տիրոջ Ծննդեան առիթով: Մարդուն կեանքը շրմորհիւ այդ Յայտնութեան նոր նշանակութիւն կ'ստանար:

Ծնունդը սրտառուչ եւ գեղեցիկ դրուագ մը չէ միայն, մին անոնցմէ՝ որոնք յանախ յուզիչ եւ մեծ յիշատակներով կը հարստացնեն կեանքը, այլ սկիզբը նոր կարգի մը՝ մարդկային տարմութեան մէջ: Աստուածայայտնութեան խորհուրդը քեւաւոր վերելքով կը հանէ զմեզ երկրէն երկինք, հանդիսատես քննելու մարմնով երեւցող Աստուծոյ գորութեանը: Մարդ կրնայ մնալ նոյն կաւէ կանթեղը, հողագանգուած իրականութեամբ, քշուտութեամբ եւ վշտով առ լի, բայց յոյսին բերկրանքովը յաւեւ շոյափայլ:

Յիսուսի Ծնունդը մարդուն եւ Աստուծոյ երջանիկ հանդիպման տօնն է, ոսկի օղակը երկնքի եւ երկրի: Մահուկը որ կուգար իրեն իբրեւ օրօրոց ընտրելու բովանդակ աշխարհը, մարմնացած սէրն էր, աշխարհը տախցնող հոգին, որ կը բանար երկնքին սիրտը եւ մարդուն արգանդը, սփանչելի եւ նոր խորհուրդով մը:

Աշխարհը պէտք ունէր այս գիշեր մարմին առնող այդ Սուրբ Հոգիին, որ կրակի պիտի վերածէր մեր կաւը, պղտոր եւ գունատ մեր խորհուրդներուն պարգեւելու ստեղծումի սուրբ երբաշէր: Հոգին որ չի գար մեզի այս աշխարհի ուժերէն, որ յաւերժական ժայթքն ու բխումն է լոյսի եւ սիրոյ, որ մեզի կը բերէ հաւաստիքը թէ մարդուն տրուած է այլեւս իր կեանքը այլակերպելու, պայծառակերպելու Աստուածայինին մէջ, եւ գայն տանելու յաւերժին:

Գիտեմ թէ դուն կը հաւատաս, հաւատացած ես միշտ, ժողովուրդ Հայոց, արդարութեան, սիրոյ, խաղաղութեան եւ անոնց փրկարար եւ անկորնչելի փառքին: Քու պատմութիւնը արնագեղ եւ հսկայամարտ ֆերքուածն է այդ խոյանքին: Գարեր շարունակ արիւն և երագ իբրեւ սրտայոյց պատգամներ շողացին վառ ի վառ քու գաւակներուդ ողբերգութեանց վրայ, բայց դուն կրքար պահել քու հաւատքդ, որովհետեւ գիտցար հաւատալ Բեթղեհէմի խորհուրդին եւ ամէն տարի մանկացեալ Աստուծոյ հետ կրքար մայրացնել քու հոգիդ:

Ի՞նչ փոյթ գառանցանքը մարդերու, շռտաչիւնը կործանումներու, պաշտամունքը ուժին եւ մամոնային: Մենք կը հաւատանք որ իր տիեզերական սէրը, ցանուած մարդոց հոգիներուն մէջ, կ'անի եւ կը մեծնայ ամէն օր, ըլլալու հսկայ ծառը եղբայրութեան, իր հովանիին ներքեւ առնելու ամբողջ մարդկութիւնը. նամաճայն իր պատգամին:

Խաղաղութեան իդճերու եւ ռազմաշունչ կիրքի խառնուրդ մըն է կեանքը, եւ ատոր համար թերեւս գեղեցիկ: Բարիին ու չարին հակամարտութեան հանդէսն է անիկա, ուր արդարութիւնը իր ուժը կը փորձէ ամէն ֆայլափոխի, հակառակ իր առջեւ ցցուող արգել քններուն:

Այս ըմբռնումին առջեւն է որ կ'աղուորնայ կռիւին գաղափարը. առանց աղարտելու խաղաղութեան սրբութիւնը: Սակայն ատոր համար կարեւոր է որ մարդիկ կարենան հոգեկան ոլորտի մը մէջ փոխադրել գայն, բարոյական պայքարի մը վերածելով պատերազմի կիրքը:

Առաքեալին բացատրութեամբ «բարւոյ պատերազմի» ծրրագիրն է որ սլէտք է իրագործուի հոն ամէն վայրկեան: Յամբ բայց ամուր զնացնով մարդկութիւնը դէպի անարիւն պատերազմ. այսինքն կենդանի խաղաղութեան կ'երթայ, ցից ու դերբուկ հաւաքաներով:

Ժողովուրդ Հայոց որ ի սփիւռս աշխարհի. նուիրական այս գիշերով, կեցած նորէն Սուրբ Ծննդեան վեհավայրին մէջ, քեզի կը փոխանցեմ անտիսը, որուն հաւատքը քսան դարերէ ի վեր կը լեցնէ եւ կը զօրացնէ մեր ֆրիստոնէական կեանքը: Անտիսը, զոր օր մը հովիւներ և հրեշտակներ տուին աշխարհին, տակաւին կ'արծագանգէ կարծես այս սրբագան աշրին խորը: Զայն քեզի կը փոխանցեմ նոյնութեամբ՝ իբրեւ Տիրոջ արիւնով քաթախուած նշխարը: Ան եւ պահէ իբրեւ սպեղանի ֆաղերութեան եւ սլատգամ միսիքարութեան բովանդակ կեանքիդ համար: Շարունակէ հաւատալ յսերժին, Յիսուսի Ծննդեան եւ մարդուն աստուածացումին, եւ մայրացուր հոգիդ այս գիշերուան մեծ խորհուրդովը, նը-

ման ֆու պապերուդ՝ որոնք դարեր շարունակ կաւէն ու հողէն վարդեր հանեցին, գեղումի բերելով գիշերները, բանալով դուռները երկնքին՝ իջեցնելու Աստուծոյ Որդին իրենց սիրտերուն մէջ եւ Մսուրի գաղջ ընտանութեան:

Անկա օր մը ծնա պատմութեան մէջ, բայց կրնայ ամէն օր ծնիլ մեր սիրտերուն մէջ, իբրեւ խորհուրդ մեծ եւ սփանչելի, մեր սիրտերէն անգամ մը եւս խլելով փաղցր աղաղակը, Քրիստոս ծնա եւ յայտնեցաւ, մեզ եւ ձեզ մեծ աւետիփ:

(Faint, mirrored bleed-through text from the reverse side of the page, appearing upside down and mirrored.)

(Faint, mirrored bleed-through text from the reverse side of the page, appearing upside down and mirrored.)



ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Նորին Ամենապատուութիւն
Տ. եղիշէ Արքեպիսկոպոս Տէրսէրեան
Պատրիարք Հայոց Երուսաղէմի
Երուսաղէմ

Սիրելի Սրբազան,

«ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԻ ԵՒ ՅԱՅՏՆԵՅԱԻ»

Այս մեծախորհուրդ պահին, երբ Նոր Տարին իր հետ է բերում մեծ աւետիսը մեր հոգիների Փրկչի Ծննդեան ու Յայտնութեան, եղբայրական սիրով լի Մեր հայեացքը ուղղում ենք դէպի Ձեր Առաքելական Սուրբ Աթոռը եւ Ձեր զինուորեալ միաբանութիւնը որ Ձերդ Սրբազնութեան հոգեշէն դեկավարութեան ներքոյ գործում է բարի ներշնչումներով եւ ջերմ եռանդով հաւատարիմ իր հոգեւոր, մշակութային ու կրթական պատմական առաքելութեան:

Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան շնորհները թող առատապէս բաշխուեն Ձեր Սուրբ Աթոռի ուխտապահ միաբաններին ու հաւատացեալ ժողովրդին ի փառս բազմադարեան Հայ Երուսաղէմի:

Ազօթող ենք նաեւ որ Մեր Տիրոջ խաղաղութեան ոգին յուսաւորի աշխարհը համայն, եւ մարդիկ ու ժողովուրդներ այդ յոյսի տակ նանաչեն զիրար ու գործեն միասին իբրեւ եղբայրներ եւ իբրեւ որդիները միեւնոյն Երկնաւոր Հօր:

Շնորհք, սէր ու խաղաղութիւն Տեսնն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ. ամէն:

Օրհնութեամբ՝

Վ Ա Զ Գ Է Ն Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Դեկտեմբեր 1972

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ
Մ Ե Մ Ի Տ Ա Ն Ն Կ Ի Լ Ի Կ Ի Ո Յ

Անթիլիաս - Լիբանան

Ամենապատիւ

Տ. Եղիշէ Ս. Արքեպիսկոպոս

Պատրիարք Հայոց Ս. Երուսաղէմի

Ե ր ո ս ա ղ է մ

Ամենապատիւ Եղբայր Ի Քրիստոս,

Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան շնորհաբեր տօներուն առթիւ կը փութանք Ձեզի ներկայացնել Մեր ջերմ շնորհաւորութիւնները ու սրտալից մաղթանքները:

Կ'աղօթենք ի խորոց սրտի որ Աստուածորդւոյն սուրբ ծընունդը խաղաղութիւն պարգեւէ համայն մարդկութեան, և սիրով ու միութեան բարի ոգիով ջերմացնէ սիրտերն ու հոգիները հանուր Հայութեան՝ որ ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի:

Մնամ հեղբայրական սիրոյ ջերմ ողջունիւ

Աղօթակից

Խ Ո Ր Է Ն Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵՄԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Անթիլիաս

14 Դեկտեմբեր 1972

MESSAGE OF HIS HOLINESS POPE PAUL VI FOR THE CELEBRATION OF THE DAY OF PEACE

JANUARY 1st, 1973

You upon whose shoulders rests the responsibility for guiding the vital interests of mankind: statesmen and diplomats; and you, representatives of the nations of the world; men of philosophy, science and letters, industrialists, trade unionists, military men and artists, all you whose work influences the relations among peoples, states, tribes, classes and among the families of the human race; and you, citizens of the world; young people of this rising generation, students, teachers, workers, men and women; you who know what it means to search, to hope, to despair, to suffer; and you who are poor, who are orphans or victims of the hatred, selfishness and injustice that still exists in our world — do not be surprised if again you hear our voice. It is a voice that is weak but yet strong, like the voice of a prophet of the Word standing over us and filling us. We are your advocate who seeks not his own interest, for we are the brother of every man of good will, a Samaritan to whoever is weary and waits for help, a Servant — as we call ourself — of the servants of God, of truth, freedom, justice, development and hope. In the year 1973 we raise our voice to speak to you again of Peace. Yes, of Peace! Do not refuse to listen to us even though Peace is a theme about which you may be fully informed.

Our message is as simple as an axiom: peace is possible! A chorus of voices assails us: we know it. Indeed it besets us and stifles us — peace is not just possible, it is real. Peace is already established, we are old. We still must grieve for the numberless victims of war whose blood has stained this century more than all centuries past, this century which is the highpoint of progress; the horrible scars of recent wars and civil strife still mark the faces of our adult generation; and even the still open wounds renew in the limbs of the new population a shudder of fear at the thought of the mere hypothesis of a new war.

But wisdom has finally triumphed; weapons are still and are rusting in the armouries, useless instruments of a madness which has been overcome; worldwide and serious institutions guarantee safety and independence to all; international life is organized by now undisputed documents and instruments which immediately work to solve, through a listing of rights and justice, every possible controversy; dialogue between peoples is continuous and sincere; and, in addition, an immense intertwining of common interests brings about solidarity among peoples. Peace has now come to civilization. Do not disturb that peace, we are told, by calling it into question. We have other new and original questions which need to be treated: peace is a fact, peace is secure; it is no longer a matter for discussion!

Really? Would that it were so!

But then the voice of these spokesmen of peace victorious over every contrary reality becomes more timid and uncertain, and admits that there are truly unfortunate situations here and there, where war continues to rage fiercely even yet. Alas! It is not a question of wars buried in the sands of history; it is a question of wars here and now. Nor is it a question of passing episodes, but of wars which have been going on for years; nor is it a matter of superficial disturbances, because these wars weigh heavily upon the ranks of well-armed men and upon the unarmed masses of the civilian population. Nor are they easy to solve; they have exhausted and rendered impotent all the skills of negotiation and mediation. Nor is the general equilibrium of the world left undisturbed, since they breed an ever growing amount of injured prestige, of unrelenting desire for revenge and of endemic and organized disorder. They are not something that can be ignored, as though they will solve themselves with time, because their poison seeps into souls, corroding humanitarian ideologies, becoming contagious and transmitting itself to the youngest generation and carrying with it a fatal inherited commitment to revenge. Violence becomes fashionable again, and even clothes itself in the breastplate of justice. It becomes a way of life, abetted by all the ingredients of treacherous evil-doing and by all the wiles of cowardice, extortion and of complicity, and finally presents itself as an apocalyptic sceptre armed with the unheard of instruments of murderous destruction. Collective selfishness comes to life again in the family, society, tribe, nation and race. Crime no longer horrifies. Cruelty becomes fatal, like the surgery of hate, declared legal. Genocide is seen as the possible monster of a radical solution. And behind all these horrible visions there grows through cold-blooded and unerring calculations the huge economy of arms, with its hunger-producing markets. And so politics resumes its unrenounceable programme of power.

And peace?

Yes, peace! Peace, it is said, can survive equally in and to some extent exist side by side with the most unfavourable conditions of the world. Even in the front-line trenches, or in the lulls in warfare or amid the ruins of all normal order there are quiet corners, quiet moments. Peace immediately adapts itself to them and, in its own way, flourishes. But is this vestige of vitality, which we can speak of as true peace, mankind's ideal? Is it this modest and wonderful capacity for recovery and resistance, this desperate optimism that can slake man's supreme aspiration to order and the fullness of justice? Shall we give the name of peace to its counterfeits? *Ubi solitudinem faciunt pacem appellant* (Tacitus). Or shall we give the name of peace to a truce, to a mere laying down of arms, to an arrogant exercise of power beyond revoke, to an external order based on violence and fear, or to a temporary balance of opposed forces, to a trial of strength consisting in the immobile tension of rival powers? This would be a necessary hypocrisy, with which history is filled. It is certainly true that many things can prosper peacefully even in precarious and unjust situations. We must be realistic, say the opportunists; the only

possible kind of peace is this: a compromise, a fragile and partial settlement. Men, they say, are incapable of a better sort of peace.

And so, at the end of the twentieth century, will mankind have to be content with a peace deriving from a diplomatic balance and from a certain regulation of rival interests, and nothing more?

We admit that a perfect and stable *tranquillitas ordinis*, that is, an absolute and definitive peace among men — even if they have progressed to a universal high level of civilization — can only be a dream, not vain, but unfulfilled, an ideal, not unreal but still to be realized. This is so because everything in the course of history is subject to change, and because the perfection of man is neither univocal nor fixed. Human passions do not die. Selfishness is an evil root that can never be completely removed from man's psychology. In the psychology of all peoples this evil commonly takes on the form and power of a *raison d'être*. It acts as a philosophy of ideals. For this reason we are menaced by a doubt, a doubt that could be fatal: is peace ever possible? And in the minds of some this doubt very easily changes into a disastrous certainty: peace is impossible!

A new, indeed an ancient anthropology arises: man is made to fight against man: *homo homini lupus*. War is inevitable. The arms race — how can it be avoided? It is a basic political necessity. And then it is a law of the international economy. It is a question of prestige. First the sword, then the plough. It seems as though this conviction prevails over every other, even for some developing peoples, which are struggling to enter into modern civilization, which are imposing upon themselves enormous sacrifices in the resources essential for life's basic needs, cutting down on food, medicine, education, road-building, housing and even sacrificing true economic and political independence, so that they can be armed and can inflict fear and slavery on their own neighbours, often with no more thought of offering friendship, cooperation, a common well-being, but showing a grim face of superiority in the art of offence and war. Peace, many people believe and say, is impossible, either as an ideal or as a reality.

Here on the contrary is our message, your message too, men of good will, the message of all mankind: peace is possible! It must be possible!

Yes, because this is the message that rises from the battlefields of the two world wars and the other recent armed conflicts by which the earth has been stained with blood. It is the mysterious and frightening voice of the fallen and of the victims of past conflicts; it is the pitiable groan of the unnumbered graves in the military cemeteries and of the monuments dedicated to the Unknown Soldiers: peace, peace, not war. Peace is the necessary condition and the summing up of human society.

Yes, because peace has conquered the ideologies that oppose it. Peace is above all a state of mind. Peace has at last penetrated as a logical human need into the minds of many people, and especially of the young. It must be possible, they say, to live without hating and without killing. A new and universal pedagogy is gaining ascendancy — that of peace.

Yes, because the maturity of civilized wisdom has expressed this obvious fact: instead of seeking the solution to human rivalries in the irrational and barbarous test of blind and murderous strength in arms, we shall build up new institutions, in which discussion, justice and right may be expressed and become a strict and peaceful law governing international relations. These institutions, and first among them the United Nations Organization, have been established. A new humanism supports them and holds them in honour. A solemn obligation unites their members. A positive and worldwide hope recognizes them as instruments of international order, of solidarity and of brotherhood among the peoples. In these institutions peace finds its own home and its own workshop.

Yes, we repeat that peace is possible, since in these institutions it finds again its fundamental characteristics, which a wrong idea of peace easily makes one forget. Peace must be based on reason not passion; it must be magnanimous, not selfish. Peace must be not inert and passive but dynamic, active and progressive according as the just demands of the declared and equitable rights of man require new and better expressions of peace. Peace must not be weak, inefficient and servile, but strong in the moral reasons that justify it and in the solid support of the nations which must uphold it. There follows an extremely important and delicate point: if these modern organizations which are to promote and protect peace were not fit for their specific function, what would be the fate of the world? If their inefficiency were to cause fatal disillusionment in the minds of men, peace would thereby be defeated, and with it the progress of civilization. Our hope and our conviction that peace is possible would be stifled, first by doubt, then by mockery and scepticism, and in the end by denial. And what an end this would be! One shrinks from thinking of such a downfall. It is necessary to repeat once more the basic statement that peace is possible, in these two complementary affirmations:

Peace is possible, if it is truly willed; and

If peace is possible, it is a duty.

This involves discovering what moral forces are necessary for resolving positively the problem of peace. It is necessary to have — as we said on another occasion — the courage of peace. Courage of highest quality: not that of brute force, but that of love. We repeat: every man is my brother; there cannot be peace without a new justice.

Men of strength and conscience, who through your collaboration have the power and duty to build and defend peace; you especially who are leaders and teachers of peoples: if ever the echo of this heartfelt message reaches your ears, may it enter also into your hearts and strengthen your consciences with the renewed certainty that peace is possible. Have the wisdom to fix your attention on this paradoxical certitude; devote your energy to it and, in spite of everything, give it your trust; with your powers of persuasion make it a theme for public opinion, not in order to weaken the spirits of the young but to strengthen them to more human and virile sentiments. Establish and build up in truth, in justice, in love and in freedom peace for the coming centuries; beginning with the year 1973, vindicate its possibility by accepting its reality. This

was the programme which our predecessor John XXIII traced out in his Encyclical "Pacem in Terris," the tenth anniversary of which will fall in April 1973. And just as ten years ago you listened with respect and gratitude to his paternal voice, so we trust that the memory of that great flame which he kindled in the world will strengthen hearts to new and firmer resolutions for peace.

We are with you.

To you, brothers and sons and daughters of the Catholic communion, and to all united with us in Christian faith, we extend once more the invitation to reflect upon the possibility of peace. We do this by indicating the way in which such reflection can be greatly deepened: through a realistic knowledge of anthropology, in which the mysterious causes of evil and good in history and in man's heart reveal to us why peace is always an open problem, always threatened by pessimistic solutions and at the same time always encouraged not only by the obligation but also by the hope of happy solutions. We believe in the real, though often hidden sway of an infinite Goodness, which we call Providence and which rules over the destinies of humanity; we know the strange but tremendous reversibility of every human situation in a history of salvation;¹ we bear engraved upon our memories the seventh beatitude of the Sermon on the Mount: "Happy the peacemakers: they shall be called sons of God;"² absorbed in a hope that does not deceive,³ we hear the Christmas proclamation of peace for men of good will;⁴ we have peace ever upon our lips and in our hearts as a gift and greeting and a biblical wish deriving from the Spirit, for we possess the secret and unfailing fount of peace, which is "Christ our peace."⁵ And if peace exists in Christ and through Christ, it is a possibility among men and for men.

Let us not allow the idea of peace to perish, nor the hope of peace, nor the aspiration towards it, nor the experience of it; but let us renew the desire for peace in men's hearts, at all levels: in the inmost sanctuary of consciences, in family life, in the dialectic of social conflicts, in relations between classes and nations, in the support of initiatives and international institutions that have peace as their banner. Let us make peace possible by preaching friendship and practising love of neighbour, justice and Christian forgiveness; where peace has been cast out let us open the door to it through honest negotiations brought to a sincere and positive conclusion; let us not refuse any sacrifice which, without offending the dignity of any generous person, will make peace quicker, more heartfelt and more lasting.

To the tragic and insuperable contradictions that seem to make up the grim reality of history in our day, to the attraction of aggressive force, to the blind violence that strikes the innocent, to the hidden snares that work to speculate on the big business of war and to oppress and

¹ Cf. *Rom* 8:28.

² *Mt* 5:9.

³ Cf. *Rom* 5:5.

⁴ Cf. *Lk* 2:14.

⁵ Cf. *Eph* 2:14.

ensave the weaker nations, to the anguished question, finally, that ever besets us: is peace ever possible among men? true peace? — to this question there springs from our heart, filled with faith and strong with love, the simple and victorious response: Yes! It is a response that impels us to be peacemakers, with sacrifice, with sincere and persevering love for mankind.

Let this be an echo to our response, carrying with it blessings and good wishes in the name of Christ: Yes!

8th December 1972.

PAULUS PP. VI.



With the humble shepherds of Bethlehem we greet again at Christ-
mas the words of comfort and joy. The light of God's glory
shines around us. We bow our heads in love in adoration in awe.
The resources of His gift are inexhaustible. God calls us out of our
darkness into the light of His grace. Here is good news, and for us only,
but for all people. The love we celebrate will lay the birth of the Son,
who will bring healing and wholeness to all mankind.
Our hearts are moved to the depths of our being by the shepherds of our
time and their message and the light they bring us. We are reminded of
the words of David to "see the things that are hidden, that the Lord has
made known to us." We gaze on our newborn Saviour. We bow our
heads in worship. In Him we find peace and joy and hope. He brings
healing and forgiveness to our souls. We are healed, forgiven and made
whole. He saves us and sets us free. He is Christ the Lord, our Saviour,
the Prince of Peace.
As we ponder on the mystery of our salvation, we join with the
shepherds in glorifying and praising God for all we have heard and
seen. As shepherds of His people we refer to you with their own
joy at the birth of our Saviour, who has brought His peace to us and to
all men. May His blessing be with you, Your Beatitude, and with your faithful
people as with gratitude and praise we celebrate this Holy Christmas.

With warmest personal greetings,


Your Beatitude's beloved brother in Christ,

† MICHAEL

Archbishop of Canterbury

Primate of All England and Metropolitan

His Beatitude Yeghise Dandanyan
Armenian Patriarch of Jerusalem
P. O. Box 14001
Jerusalem



LAMBETH PALACE, LONDON, S.E. 1

CHRISTMAS 1972

Your Beatitude,

Beloved Brother in Christ,

"Be not afraid: for behold I bring you good news of a great joy which will come to all the people: for to you is born this day in the city of David a Saviour, who is Christ the Lord."

(St. Luke, 2: 10-11)

With the humble shepherds of Bethlehem we hear again at Christmastide these words of comfort and of joy. The light of God's glory shines around us. We bow our heads in fear, in guilt, in shame, in awe. He reassures us. "Be not afraid", he cries. God calls us out of our darkness into the light of his presence. Here is good news, not for us only, but for all people. He bids us celebrate with joy the birth of the Saviour, who will bring healing and wholeness to all mankind.

God knows our need to be delivered from the darkness of our fear and guilt and shame and sin. He brings us with the shepherds to the city of David to "see this thing that has happened, that the Lord has made known to us". We gaze on our new-born Saviour. We bow our heads in worship. In Him we find peace and joy and hope. He brings healing and forgiveness to our souls. We are judged, forgiven and made whole. He saves us and sets us free. He is Christ our Lord, our Saviour, the Prince of Peace.

As we ponder on the mystery of our salvation, we join with the shepherds in "glorifying and praising God for all we have heard and seen". As shepherds of God's people we return to share with them our joy at the birth of our Saviour, who has brought his peace to us and to all men. May His blessing be with Your Beatitude, and with your faithful people as with gratitude and praise we celebrate this Holy Christmastide.

With warmest fraternal greetings,

Your Beatitude's beloved brother in Christ,

† MICHAEL

Archbishop of Canterbury

Primate of All England and Metropolitan.

His Beatitude Yegishe Derderian
Armenian Patriarch of Jerusalem
P. O. Box 14001
Jerusalem

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

Կեդրոնական վարչական ժողով

Ամենապատիւ Տ. Եղիշէ Արք. Տէրտէրեան

Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Երուսաղէմ

Ամենապատիւ Սրբազան Հայր,

Մօտ է Քրիստոսի Ծննդեան սուրբ տօնը և Բեթղեհէմի յուսր առաջին առիթով պիտի յուսադրէ Սուրբ Տեղեաց Աստուածակոյս վայրերը, ի շարս որոնց նաեւ Հայոց Պատրիարքական Աթոռը, որուն գահակալն էք այսօր Դուք: Թոյլ տուէք այս առիթով շնորհաւորել Ձեր Ամանորը, Ս. Ծնունդը եւ Աստուածայայտնութիւնը, անձնապէս եւ յանուն Հ. Բ. Ը. Միութեան աշխարհացրի անդամներուն ու մարմիններուն:

86-161

Երուսաղէմի Պատրիարքական Աթոռը սահմանուած է ազգային ու եկեղեցական պատմական դերի մը եւ կը յուսանք որ խաղաղութեան պայմաններուն տակ եւ Ձեր իմաստուն առաջնորդութեամբ այդ առաքելութիւնը կը պսակուի պողաբեր արդիւններով:

Նոր Տարուան սեմին կանգնած մեր սրտագին մաղթանքն է որ Քրիստոսի Ծննդեան այդ սրբազան վայրերը վայելեն օրհնաբեր խաղաղութիւն մը, որպէսզի Հայոց Պատրիարքարանն ու վանքը եւս կարողանան իրագործել շինարար եւ ստեղծարար կեանք մը:

Ձեզի անձամբ, Ս. Աթոռիդ միաբանութեան ու ժողովուրդին կը մաղթենք երջանիկ ու խաղաղ տարի մը:

Լաւագոյն զգացումներով՝

Ա. Մ Ա Ն Ո Ւ Կ Ե Ա Ն

Նախագահ

Նիւ Եորք

Դեկտեմբեր 17, 1972



Հ Ա Ղ Ո Ր Գ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն


Ամենայն Հայոց Հայրապետի որոշումով Մայր Աթոռում վերականգնակերպուեց «Հայաստանեայց Եկեղեցու Միջեկեղեցական Յարաբերութիւններ» բաժինը, հիմնական նպատակ ունենալով առաել գործօն կերպով բերելու Հայ Եկեղեցու մասնակցութիւնը համաշխարհային Էկումենիկ շարժմանը եւ աշխարհի խաղաղութեան ամրապնդման գործին, սերտ յարաբերութիւններ մըշակելով եւ գործակցելով քրիստոնեայ եկեղեցիների, Եկեղեցիների Համաշխարհային հորհրդի եւ այլ կրօնական եւ Էկումենիկ կազմակերպութիւնների հետ:

«Հայաստանեայց Եկեղեցու Միջեկեղեցական Յարաբերութիւններ» բաժնի պատասխանատու վարիչ է նշանակուած Մայր Աթոռիս միաբան Հոգեշնորհ Տ. Արսէն Ծ. Վրդ. Բերբերեանը:

Գ Ի Ի Ա Ն Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ւ Ի


11 Յունուարի 1973 թ.

Ս. Էջմիածին



*International greetings,
dear friend. Your Beatitude's beloved brother in Christ,
+ MICHAEL
Archbishop of Canterbury
Primate of All England*

*The Beatitude Yeghikhe Dandanyan
Assistant Patriarch of Jerusalem
P.O. Box 1000
Jerusalem*



ԿՐՕՆԱԿԱՆ

Ո՞Վ Է ՍԱՏԱՆԱՆ

Մատթէոսի Աւետարանին մէջ կը կարգանք թէ Պետրոս, Քրիստոսի Աստուծոյ որդիութեան հանգամանքը յախուսն կը բարձր խոստովանելէ քիչ ետք՝ «Եւսիս պնա, սատանայ» խարանոց յանդիմանութիւնը կը լսէ Աստուծո՞րդիէն :

Արդ, ինչպէ՞ս կ'ըլլայ որ նոյն այդ առաքելայր, որուն արքայութեան բանալիները յանձնելու խոստումը բրած էր Յիսուս, քիչ յետոյ կ'ընդունէր այդպիսի ծանր որակում մը, որ մարդկային իմացողութեամբ խտացումն է երկրիս վրայ գոյութիւն ունեցող բոլոր շարիքներուն, ուրիշ խօսքով՝ մարմնացումն է Չարին :

Նախ պէտք է ի մտի ունենայ թէ Քրիստոս սոսկական անհատ մը չէ, որ պէտքի չափազանցութիւն մը նկատէինք իր արտայայտութիւնը : Մարդիկ առ հասարակ հակամէտ են բարկութեան կամ դերպարգոյութեան պահուն պատշաճութեան սահմանները դիւր անցնելու, չափազանցութեան մէջ իյնալու եւ անճիշդ ու անարդար որակումներ րնելու իրենց ընդդիմախօսին : Նոյնը կարելի չէ ըսել Քրիստոսի համար, քանի որ ան նոյն ատեն թէ՛ Աստուած էր եւ թէ՛ մարդ : Ուրեմն Պետրոս իսկապէս արժանի՞ էր ծանր այդ որակումին, իր այդ պարզ արտայայտութեան համար : Բայց ի՞նչ էր Պետրոսի արտայայտութեան միտք բանին, ու ի՞նչ է սատանան :

Աւետարակոյս որ Պետրոսի արտայայտութիւնը կը բխէր բարի տրամադրութենէ մը : Ան չէր ուզեր որ իր պաշտած ու դաւանած Վարդապետը հանդիպէր որեւէ վտանգի կամ դժուարութեան : Պոռոտ ու մեծխօսիկ, ան չէր կրնար մնալ անտարբեր երբ Տէրը կը խօսէր այն բոլոր շարժարանքներուն մասին՝ որոնց սահմանուած էր ենթարկուելու, մարդկային ազդի փոխութեան համար : Բայց ահա ճիշդ հոս է Պետրոսի յանցանքին մեծութիւնը . Աստուածային տնօրինութեանց միջամտել, դերպարոյն իմաստութեամբ նախասահմանուած դէպքերու ընթացքէն դժգոհել, մեղք մըն է անտարակոյս :

Պատասխանելով վերոյիշեալ հարցումներէն առաջինին, անուղղակի կերպով արդէն պատասխանած եղանք երկրորդին : Մատանան Տիրոջ կամքին ենթարկուիլ չուզող, Անոր տնօրինածին ու կարգադրածին դէմ լմբոստացող անհատն է :

Տէրը դիտէր Պետրոսի բարեմտութիւնը, վստահ էր Իր հանդէպ անոր ունեցած անսահարկ սէրն էր պատճառ՝ յախուսն իր այդ յայտարարութեան : Տէրը Իր այդ որակումով սատանաներու — շարագործներու — կարգին իջեցնել չէր միտեր Իր աշակերտներու խումբին է՛ն երէց ու կարկառուն անդամը : Տէրը եթէ սատանայ կոչեց Պետրոսը, անոր բողոքական անխորհուրդ խօսքին համար էր միայն : Ու նաև հասկնցնելու համար թէ ի դին ամէն դժուարութեան հարկ է համակերպիլ աստուածային տնօրինութեանց ու անխմաստ միջամտութիւններով չփորձել հակառակիլ անոնց բարերար ընթացքին :

Սատանաները նախապէս հրեշտակներ էին : Եթէ անոնք այդ առանձնաշնորհէն զրկուելով անդունդ զլորեցան՝ պատճառը անոնց անհնազանդութիւնն էր : Եւ ինչպէս զանոնք ի վերջոյ կամբքին :

Մենք ալ Պետրոսի զիրքին մէջ կը դնենք մեր անձերը եւ Տիրոջ կողմէ «սատանայ» որակումին կ'արժանանանք ամէն անգամ որ կ'անտեսենք Իր պատուիրանները եւ կամ կ'ընդդիմանանք զերազոյն իմաստութեամբ տնօրինուած Իր կարգադրութիւններուն :

Սատանան իր ընկերը մոլորեցնող, անոր բարեմատութիւնը շահագործող, անոր մաքուր ու ազնիւ մտածումները պղտորող անհատն է : Իր զուակիր Աստուծոյ սիրովն ու շնորհքովը մեծցնելու փոխարէն՝ իր կեանքի ընթացքով չար օրինակ հանդիսացող ու զայն անուղղայ ու ամբարիշտ կենցաղի մը առաջնորդող ծնողքն է : Իր խնամքին յանձնուած աշակերտներուն մտադաշուողները անկրօն ու սկեպտիկ զաղափարաբանութեամբ թունաւորող ուսուցիչը կամ զաստիասուն է : Իր մեծերուն հնազանդիլ շուրջող, ամէն առթիւ իր կամքը պարտադրել ուղղող, հետ ու խարդաւանող պաշտօնեան է : Իր յաճախորդներուն միամտութիւնն ու անդիտութիւնը շահագործող խարդախ ու կեղծապարիշտ վաճառականն է :

Եւ արդէն իւրաքանչիւր անհատ բանիւ եւ գործով ամէն օր եւ ամէն տեղ կա՛մ Քրիստոսն է որ կը ներկայացնէ եւ կա՛մ սատանան : Պարզ խօսելով, կ'ընէ այն՝ ինչ որ պիտի ընէր Քրիստոս եթէ իր տեղը եղած ըլլար, եւ կամ սատանան :

Կ'արժէ ուրեմն որ ամէն ժամանակ եւ մանաւանդ մեր դժուարութեան¹ պարագաներուն հարց տանք մենք մեզի թէ ի՞նչ պիտի ըլլար Քրիստոսի կեցուածքը նմանօրինակ առիթներով : Ասոր պատասխանը գտնել դժուար չէ իւրաքանչիւր զիտակից անհատի համար, եթէ իր բանականութիւնը Աւետարանի լոյսով լուսաւորելու իմաստութիւնն ունի :

ԳԷՈՐԳ Ս. ՃԻՆԻՎԻՉԵԱՆ

ՆԱՀԱՏԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՍԵՄԱՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Կէս գիշեր է: Այցի եկեր ես ինձ՝ նորէն,
 Ու կը նայիս ինձի այնպէս մըտերմօրէն,
 Գըլուխիդ շուրջ կը տեսնեմ ես փառքի պըսակ,
 Ձայնըդ ա՛յնպէս փաղցր ու յըստակ:

Ու կը խօսիմք, քեզ՝ հետ կեանքի, մահուան մասին,
 Ու կը խօսիմք սիրոյ մասին ու երագին,
 Երագներուդ՝ որ քողուցիր դուն կիսկատար,
 Ու արիւնով մըկըրտուեցար:

Ու ես յանկարծ մտերմօրէն քեզի կ'ըսեմ,
 Կ'արժէ՞ր՝ նոյնիսկ գաղափարի մ' համար վըսեմ,
 Սիրտ մ'որ եղած էր մանկութեանըդ օրօրան,
 Ընել ընդմիշտ սուգի խորան:

Կ'արժէ՞ր միքէ՛ ուրիշ սիրտ մ'ալ ընդմիշտ խոցել,
 Իր հետ՝ մէկտեղ արեան գետեր էիք անցեր,
 Ու գիրկ-գրկի, իր հետ մէկտեղ էիք լացեր,
 Յետոյ մէկտեղ ալ քեւածեր՝

Դէպի կատարն աստուածային Ողիմպոսին,
 Որ խաւարէն ու փռուէն ելլէք լոյսին,
 Որ մեզ՝ բերէք անըրջային աշխարհներ նոր,
 Ու նոր երագ, ու նոր օրօր:

Ու կը լըսեմ պատասխանն որ կ'ուտաս ինձ՝ դուն.
 «Ի՞նչ է կեանքը, արժէ՞ն ի՞նչ է կեանքին մարդուն,
 Լա՞ւ չէ միքէ՛ խոյանգով մը մահուան զընալ,
 Քան քէ քըծնիլ, ըստըրկանալ,

Այրիներու ու որբերու ողբը լըսել,
 Կըրեայի պէս պատեան փաշուիլ ու ըսպասել,
 Եւ ըսպասե՞լ՝ շուրջդ ժանիքներն երբ կը սըրբուին...
 Ոնիրները՝ արիւնով լոկ կը մաքրուին:

Նահատակուած, շիրիմագուրկ բնկերներուս,
 Յան ու ցրրի անխններէն ծագեցաւ լոյս,
 Ու գոյներով կամար կապող ծիածանի,
 Յաւերթօրէն պիտ' ծածանի:

Ըսէ արփուոյն ք'ինչո՛ւ շողերն իր կը սրփոտէ,
 Ձէ՛ սրփոտելով լոյսն այդ՝ իր կեանքն ան կը սպառէ,
 Եւ ինքնագոհ նուիրումովը իր բարի՛,
 Պիտի օր մ'ալ իսպառ մարի:»

Այնպէ՛ս յըստակ, այնպէ՛ս քաղցր կը խօսիս դուն՝
 Զոհողութեան, նուիրումին մասին՝ մարդուն.
 Կ'ըսես «կեանքս, եթէ նորէն աշխարհ գայի,
 Նոյն խտէպին պիտի տայի:

Մայրըս քող իր գաւկին մահովն հրապարտանայ,
 Թող արեւուն, ծառ ու ծաղկին նորէն բանայ
 Սիրտն որ եղած էր մանկութեան իմ օրօրան,
 Ընէ քող գայն լոյսի խորան:

Իսկ միւս սիրտն այն որ ինձ՝ համար եղաւ բուրվառ
 Ու պահեց իմ յիշատակը մըշտապէս վառ,
 Բաւ է որ ալ նահատակիս մահն աւաղէ
 Եւ սուգիս մէջ սիրտն իր քաղէ:

Երկու խոցոտ սիրտերուն այդ ահա կ'ըսեն՝
 Թէ կամաւոր նուիրումէն բարձր ու վըսեմ
 Ոչինչ կայ սուրբ: Թող վեր նային, գոհին խաչէն
 Լոյսի շողեր կը նահանջեն:»

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ա Մ Ա Ն Ո Ր Ի Խ Ո Հ

Սիրելիի մը դիակին առջեւ
 Ինչպէս մենք կ'ողբանք յուսահատ, նկուն,
 Նոյնպէս, հին տարի, քեզ այս իրիկուն
 Կ'ողբամ, կ'ափսոսամ անցքդ կարնատեւ :

Հին տարին ո'րքան արժամ ըլլայ սուղ,
 Ու նորը քրտի վառ ու պերնագեղ,
 Հինը կը մնայ վատնուած արժէք,
 Յաւէտ կորսուած դրամագլուխ :

Հինն որքան եղած ըլլայ դառն, ժլատ,
 Նորն քրտի շոյլ ու բազմախոստում,
 Հինը կը մնայ կազնի հաստարմատ,
 Նորը՝ օդին մէջ քեւածող քոչուն :

Հինը կը մնայ կազնի հաստարմատ,
 Հասակն որուն բայց շանթն է տապալեք .
 Ու կը մտածեմ, բեկուած ու վհատ,
 Թէ արմատն նորէն պիտի տա՞յ նիւղեր :

Գ. ՃԱՐՏԱՐ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՍԻՄԵՈՆ ԵՊՍ. ՍԿԵԻՌԱՑԻ

(1210? — 1280?)

Օր. Սիրարփի Տէր Ներսէսեան շահեկան յօդուած մը անի Revue des Etudes Armeniennes Գ. Հատորին մէջ (1967), Un Evangile Cilicien de 13e Siecle վերնագրով: Այդ յօդուածով ներկայացուած Աւետարանը կը գտնուի Իսթամպուլ, Թօփթարուի Թանգարանին մէջ (թ. 122): Աւետարանը գրուած է Սկեւոսայի առաջնորդ տէր Սիմեոնի հրամանաւ, 1273 թուին, Սկեւոսայի մէջ: Գրելը կը կոչուի Ստեփանոս, նկարելն է Յովասափ:

Օր. Տէր Ներսէսեան ծանօթագրութեան մը մէջ կ'ըսէ թէ տէր Սիմէոնի մասին ուրիշ յիշատակութիւն չէ գտած:

Արդ, վերջերս Երեւան եկան քանի մը յիշատակութիւններ Սկեւոսայի Առաջնորդ Սիմէոն Եպիսկոպոսի մասին, այսպէս.

Ստեփանոս քահանայ Խաղզիրք մը օրինակած է Սկեւոսայի մէջ, 1272-ին, «ի խնդրոյ ... Գրիգորի քահանայի, ի վայելումն անձին եւ յիշատակ ինքեան եւ ծնողաց իւրոց ... եւս առաւել սնուցչին իւրոյ հոգեւոր տեառն եւ վարժապետի տէր Սիմեոնի, առաջնորդի Սրբոյ Ուխտիս Սկեւոսայի, ուրանաւր եւ ձեռահիւստ աւարտեցաւ ... ի հայրապետութեան տեառն Յակոբայ քաջահանձար հոտորի, եւ յարքայութեան բարեպաշտն Ղեւոնի՝ որդւոյ Հեթմոյ...»: — Յուցակ Զեռագրաց Ս. Յակոբեանց, Ե. Հատոր, 1971, էջ 485:

Գէորդ Սկեւոսցի Վարադայ Ս. Խաչին նուիրուած քարոյ (դանձ) մը գրած է նոյն Սիմէոնի խնդրանքով. «Քարոյ Վարադայ Սուրբ Խաչին, ի խնդրոյ տեառն Սիմէոնի Սկեւոսայ մեծի ուխտին առաջնորդի, ի Գէորդեայ վարդապետէ Լամպրունցոյ եւ Սկեւոսացոյ».— Սիոն, 1969, էջ 124:

Այս փոքր տեղեկութեանց վրայ մեծ յաւելում մը կը բերէ Թօփթարուի Թանգարանին Աւետարանը, որուն յիշատակարանին մէջ կը կարդանք. «Որ նոյն ինքն եւ ի նուազել ժամանակիս յառաջացեալ ի քահանայապետական սպասահարկութիւն եւ յաշտիճան Եպիսկոպոսութեան սրբոյ աթոռոյս եւ հոշակաւոր ուխտիս Սկեւոսայի, զարժանապատիւ առաջնորդս զտէր Սիմէոն, որ յաղապատուածաւ կամաց իւրոց ի պէտս հոգեւոր հրճուանաց եւ սրբաւայելուչ պատուասիրութեան սուրբ եւ աստուածաբանակ մաւրս մերոյ կաթողիկէ Եկեղեցոյս, ընդ այլ նշանաւոր եւ ականաւոր զարդուցքն յիշատակաց, ստացաւ եւ զայս պանծալի քարս պատուական եւ զմարգարիտս զեկեղիկ ... որ քերթողարէն ստուգարանութեամբ կոչի Աւետարան ... Որոյ յօքնատենչ բղձից փափաքմամբ նախաչիշատակեալ տէրս Սիմեոն, մեծածախ պատրաստութեամբ հոգ տարեալ սուրբ մագաղաթի, եւ զեղապանձ գրով, արհեստակիրտուած ուրրակաւք, բարձրապայծառ զարդուք, սքանչելափառ խորանաց, սկեւոսայի խառնուածով, յօքնբանդ ծաղկանց, պճնապաճոյճ յարիւնուածով, սկեղիք գրոշմածիւք զտէրունական անուանն փառադարձեալ, վերըն-

ծայրաց սրբոյ տաճարիս, ի բերկրումն հոգեւոր եւ ի հրճուանս ժխիթարութեան զգալի աչաց սրբազան դասուց մանկանց նոր Սիւնիս, ե յիշատակ պաճայի հոգեւոր եւ մնացական իւր՝ եւ ծնողաց իւրոց եւ բոլոր զարմից բառ մարմնոյ: Չայսու ժամանակաւ հանդիպիւր թուական ՉԻԲ, յորում զղիտապետական դահազխութիւնն վարէր տէր Յակոբ քաջահանճար հետտր եւ սրբազան կաթողիկոս»:

Այդ միջոցին խումբ մը դասադիր իշխաններ կ'ուղեն նենդութեամբ սպաննել Լեւոն թագաւորը: Դասադիրներուն գրուին էր «Վահրամ իշխան տէր Համուսին»: Դասադիրութիւնը կը ձախողի եւ դասաճանները կը սպաննուին: Միւս կողմէ Լեւոն թագաւոր փութով կ'արձակէ «նախասացեալ տէրս Սիմէոն յամուրն Պեհեստնի՝ կասկածելով զի մի ապստամբեցեն բնակիչք բերդին, յորում ի պահեստի կայր մանկիկ մի փոքրիկ՝ ապրտամբին Վահրամայ: Եւ սորա զփտանց ծերութեանն անտես արարեալ, շտապով անդը հասանէր եւ զառաջի եղեալ զործն բարեք մճարէր՝ ընդ ձեռամբ արքային զամուրն գրաւեալ...: Եղև աւարտ գրչութեան Սրբոյ Աւետարանիս ի Սուրբ Ուխտս Սկեւոյ, ի ձեռն Ստեփանոսի ամենամեղ զրչի, ե Յովասափի նկարչի, հրամանաւ տեսան Սիմեոնի...»:

Վերոգրեալ հատուածին մէջ զրիչը կը յիշէ Սիմէոն Եպիսկոպոսին ծերացած ըլլալը: Հետեւաբար, պիտի մտածէինք թէ, ան բուսական կանուխ պէտք է ստացած ըլլայ Եպիսկոպոսական աստիճան: Արդ, 1272—3 թուականէն զէպի ետ երթալով կը հանդիպինք արգարեւ Սիմէոն Եպիսկոպոսի մը, Բարձրբերդցի Կոստանդին Կաթողիկոսի հրամանով 1244ին գրուած մէկ Աւետարանին յիշատակարանին մէջ, այսպէս. «Ընդ արժանաւոր յիշատակելոցս ի սրմա՝ յիշեսջիք զարեան մերձաւորն՝ դասաքեյաչնորհ Եպիսկոպոսն զտէր Սիմէոն» (Յիշտ. Չեռագրաց, Անթիլիաս, էջ 965): Յատուի անուններու ցանկին մէջ այս Սիմէոն Եպիսկոպոսը կը ներկայացուի իբրև «սոցյոսկան Կոստանդին Ա. Բարձրբերդցի Կաթողիկոսի», հարցանկանով տեղադրուած՝ «Հոսմկայսրում» (էջ 1224):

Վերոգրեալ յիշատակարանին մէջ զիտելի կարեւոր պարագայ մըն է Սիմէոն Եպիսկոպոսին արեան մերձաւոր ըլլալը Բարձրբերդցի Կոստանդին Կաթողիկոսին, որ հռչակուած է իբրև մեծ հովանաւոր արուեստագէտներու եւ ստացող շքեղապարզ Աւետարաններու: Արդ բնական կը թուի որ իրեն արեւնակից ազգական Սիմէոն Եպիսկոպոսն ալ տէր եղած ըլլայ գեղարուեստական թանկագին յիշատակներ ունենալու բարձր ձգտումին, որուն կը վկայէ Ստեփանոս զրիչը, ինչպէս տեսանք իր օրինակած Աւետարանին յիշատակարանին մէջ: Այս նկատումներով յոյժ հաւանական կը գտնենք վերոյիշեալ երկու Սիմէոն Եպիսկոպոսներու նոյնացումը:

Իսկ թէ Սիմէոն Եպիսկոպոս ե՛րբ գտնուած է Հոսմկայ, եւ կամ ո՛րչափ ժամանակ ապրած է Սկեւոյ, յայտնի չեն: Սկեւոյի Վանքի իր առաջնորդութիւնը նկատի ունենալով, եւ ուրիշ համանուն Եպիսկոպոսներէ զանազանելու համար, զինքը անուանեցինք Սկեւոցի:

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՍՐԲՈՅՆ ԵՓՐԵՄԻ

Ի ՅՈՒՍԷՓ ԵԻԹՆ ՎԱՅԱՆԳԻ

Ստորև Սիմնի յարգելի ընթերցողներուն կը ներկայացնենք շահեկան գրութիւն մը, որ կը գտնուի Ս. Յ. Թիւ 1925 (էջ 513բ—521ա) եւ 1934 (թղ. 38ա2—44ա2) Աստուածաշունչներուն մէջ:

Նկատելով որ անոնցմէ առաջինը օրինակուած է ժ. Գ. դարուն, իսկ երկրորդը անկէ մօտաւորապէս չորս դար ետքը, նախապատուութիւնը տուինք Հնագոյնին:

Այդ բնագիրը սակայն լման չէ, կը պակտի վերջին մասը. ուստի Հարկադրուեցանք լրացնել դայն երկրորդ Աստուածաշունչին պարունակած բնագրով:

Գրութեան առաջին մասը, որ առնուած է թ. 1925 Աստուածաշունչէն, Համեմատեցինք երկրորդ բնագրին հետ, եւ տարբերութիւնները՝ մասամբ նշանակեցինք տողատակի ծանօթութիւններով. թ. 1925ին յատկացնելով Ա. եւ թ. 1934ին Բ նշանատուերը:

Այն պարագային որ Բ ունէր յայտնապէս աւելի ուղիղ ընթերցում մը քան Ա, բնագրին մէջ գրինք Բի ընթերցումը եւ Աինը զետեղեցինք վարը իրբեւ ծանօթութիւն:

Թիւ 1925 Աստուածաշունչի գրչութեան մէջ աչքի դարձող ուղղադրական պարագաներէն յատկապէս կ'արժէ յիշել թէ գրիչը անցեալ դերբայի նալ վերջաւորութեան փոխարէն ընդհանրապէս կը գրէ նլ. այդ կարգի բառերէն քանի մը հատ նշանակեցինք, եւ միւսները զանց ըրինք, նկատելով որ ներկայ բացատրութենէն ետք զիրահասկնալի կը գտնար այդ պարագան: Այդ ձեւով վարուեցանք նաեւ ուղղադրական այլ տարբերութիւններու նկատմամբ:

Ս. Եփրեմի անունը կրող այս գրուածքը յիշուած չէ Ջարբհանէյեանի «Մատենադարան Հայկ. Թարգմ. Նախնեաց» երկին մէջ: Ներկայ գրութիւնը կը պարունակէ կարգ մը նորակերտ բառեր որոնք կը պակսին Հայկազեան Նոր Բաղիւրբի մէջ: Մեզի անհասկնալի մնաց վերնագրին «Վահանգի» բառը:

Ոսկեգարեան շունչով այս նշխարին ընթերցումը կը կարծենք թէ անհաճոյ պիտի չըլլայ անոնց որ կը սիրեն Ստորի մեծանուն հեղինակը եւ անոր ժրամիտ Հայ Թարգմանիչը:

Ա. Յ. ՍՐՃՈՒՆԻ

Աստուած Աբրահամու, Աստուած Սահակա, Աստուած Յակոբբա, որ ընդրեցեր¹ դուստրն ծառայից քոց Աբրոց, որք սիրեցիքն զքեզ, պարզեւեւ եւ ինձ Փրկիչ, զի բոլիսեցեն եւ յիս ցնցուղք² շնորհաց քոց առատապէս, որպէս զի կարացից պայծառագոյնս եւ մեծագոյնս պատմել զհանդէս ամենալուսին Յովսեփա, եղևոյն միշտ պարկեշտին³, որ միանդամայն եւ ցուփ ծերութեան⁴ էր Հայրապետին մերոյ Աբրոյն Յակոբբա: Սա ինքն մանուկ, սա ի նորահասակի տպաւորէր զերկրորդ զգալուստն Քրիստոսի, նկարագրեց, առաջինն եղևի⁴ ի Կուսէն Մարիամա, զհանդերձեալն դարձել զալ հարկանել զընդհանուրս: Արդ այսուհետեւ իբրեւ զսիրելիք Քրիստոսի հաստատուն եղել հոգով, որպէս զի առանց վայրացածուկ⁵ լինելոյ, լսել եւ տեսանել զայսպիսի դարձանութիւն մանգանն⁶:

Բայց եւ, եղբարք, ոչ միայն դայս ասեմ, Եթէ վայելուչ է մանուկն, այլ միանդամայն մեծ եւ սքանչելի, եւ եղբարք⁷ պարկեշտութեան, եւ բարի մրցման յաղթական⁸ դարձանալի, յազպոս որոյ առաւել աւերինակ եղև մեծին այնմիկ Տեառն գալստեան, ի բաց հանցէ իւրաքանչիւր ոք յոգոց⁹ դամենայն զընդունայնական հոգս աշխարհիս այսորիկ, եւ ընդալցի ցանդութեամբ զբազմրական զիրս, քանզի է եւ հոգեւորական ուրախացուցանելով զոգի:

Արդ զոր աւերինակ Տէր առաքեցաւ առ մեզ ի ծոցս հաւր, ապրեցուցանել դամենիսն զմեզ, այսպէս եւ մանուկն Յովսեփի ի հայրենի ծոցոյն Յակոբբա առաքեցաւ ի տեսանել զեղբարոն: Եւ որպէս եղբարքն Յովսեփա տեսին ըզնա մերձեցեալ, եւ սկսան խաւսել շարութիւն զմամնէն, եւ մանաւանդ խաղաղութիւն բերելով նոցա ի հաւրէն:

Այսպէս եւ հրեայքն խստախրոք միանդամայն տեսել զՓրկիչն ասէին. Սա է Հաստատութեամբ¹⁰ ժառանգն նորա, սպանցուք զսա եւ եղիցի մեր ամենայն: Ըստ որում եւ եղբարքն Յովսեփա ասէին. սպանցուք զսա, եւ վճարեացուք յերազո նորա: Եղբարքն Յովսեփա ճաշելով, միանդամայն վաճառեցին զնա սպանանել կամաւքն: Այսպէս ըստ նմին աւրինակին եւ հրեայքն պիղծք ուտելով զգատիկն սպանանէին զՓրկիչն:

Իջանելն Յովսեփա յեղիպտոս նշանակէ զՓրկիչին մերոյ զիջումն յերկնից, եւ որպէս Յովսեփի էր ի ներքս ի սենեկին՝ յամաթ արար դամենայն դարութիւն մեզաց, եւ պայծառագոյն երեւեցոյց զյաղթութեանն զպսակն ընդ դէմ եղիպտուհոյն¹¹ իւրոյ տիկնոջն: Այսպէս եւ փրկիչն ոգոց¹² մերոց իւրով իշխանութեամբն իջնել ի դժոխս անդ¹³ դամենայն դարութիւնն իւրոյ ըզդժընդակութեան մահու եւ դժոխոց առ ի գոռոզն: Եւ վասնզի մեզացն յաղթեց Յովսեփի ի բանդին մինչ ի ժամանակ պսակաց, այսպէս եւ Տէրն զի բարձրցէ դամենայն զմեզ¹⁴ աշխարհիս՝ ի գերեզման դնի:

Յովսեփի ի բանդին զերկեմեան մին, որ աւրինակաւ առնէ կացել մե-

1 Բ. Յակոբբայ, որ ընտրեցիք
 2 Բ. ցաղի
 3 Ա. ծերութեան
 4 Բ. նկարագրեաց, գառաջիցն եղևալ
 5 Բ. վայրածածուկ
 6 Բ. մանգանն
 7 Բ. եղբոր
 8 Ա. յաղթանակ
 9 Բ. յոգուց
 10 Բ. հաստատութեան
 11 Բ. եղիպտուհոյն
 12 Բ. ոգուց
 13 Ա. անդ
 14 Բ. մեզս

* ՀՃՃ. Տաշեան. Բ. Զեռ. Վիսննայի. Ի. 126:

ծաղկաւ ընդարձակութեամբ : Իսկ Տէրն մեր զերիս աւուրս ի դժոխս եղեալ¹⁵, որպէս զգաւրաւոր զի մի կրեցէ ապականութիւն : Յովսէփ ի բանդին հրամանաւ փարաւունի ելանէ պատուարաբ ճշմարիտ աւրինակութեամբ, մեկնելով զիւրաւար զերազոցն լուծումն, զիսութիւն նշանակելով զճանդերձեալն լինել : Իսկ Տէրն մեր որով զարութեամբ յարուցել ի մեռելոց եւ զերկ զդժոխս տարել ցուցանել¹⁶ : Հար իւրում զմերոյ Հաշտութիւն քարոզելով յարութիւն : Յովսէփ նստաւ ի կառան փարաւունի առել զիշխանութիւն ի վերա ամենայն Եգիպտոսի, իսկ Փրկիչն մեր թաղաւոր յախտենից, վերացել ի յերկինս¹⁷ լուսաւորական պատուով ընդ աջմէ Հար նստի փառաւք, ի վերա քրորէիւ իրրեւ զմոր զի միածին :

Իսկ թաղաւորն Յովսէփայ Եգիպտոսի, առնու իշխանութիւն ի վերայ թշնամեց իւրոց, եւ ածել լինին ակամա իւր եղբարքն առաջի բեմին ըստ պանելոյն ի նոցանէն, մտանէն երկիւղիւ եւ զողութեամբ երկիր պապանել վաճառելոյն ի նոցանէն ի ծառայութիւն, եւ երկիւղիւ երկիր պապանեն առաջի նորա, զորոյ ոչ կամէին զթաղաւորե(ա)լն ի վերա ինքեանց : Մանուցել Յովսէփայ զիւր եղբարսն, եցոյց զպապանդան միով բանիւ իւրով, եւ ուսել նոցա կային ամաթով յիմարեալք, եւ ու իշխեալք հայելք շունելով զլլուխսն ի վեր¹⁸ ամենեւին բացարանելք ինչ, զիտացելք¹⁹ ստուգապէս զիւրեանց զմեղսն : Ի ժամուն ի յայնմիկ, յորում վաճառեցին գնա, կարծեցին հաստատութեամբ աշուհեակ մեռանել, իսկ որ թուեցաւ ի նոցանէն, ապականել²⁰ ի դժոխս, գտաւ յանկարծաւրէն թաղաւոր ի վերա նոցա :

Այսպէս եւ Տէրն, յորժամ եկեցէ աւղաւք ամբաւք²¹, նստի յաթոս իւրոյ թաղաւորութեան, եւ ածել լինին յահաւոր հրեշտակաց ամենայն թրշնամիք նորա առաջի բեմին, որք ոչն կամեցան²² զթաղաւորն ի վերա ինքեանց, քանդի²³ կարծէին երբեմն անաւրէն հրէայքն, զի թէ խաչեցի՝ մեռանի իրրեւ զմարդ : Ոչ հաւանել²⁴ թշուառականքն, եթէ Աստուած եկեալ է ի փրկութիւն անձանց մերոց :

Եւ զոր աւրինակ Յովսէփ ստէրառ իւր եղբարսն համարձակութեամբ, երկուցելոցն եւ զարհուրեցելոցն²⁵, եթէ ես եմ Յովսէփ զոր դուքն վաճառեցէք²⁶ ի ծառայութիւն, եւ ահա այժմ թաղաւոր եմ ձեր ոչ կամելով : Այսպէս եւ Տէրն ցուցանէ, եւ զիսան աւրինակաւ լուսոյ իւրոց խաչողացն. եւ ճանաչեն յայնժամ զիսան եւ զՅիսուսն Այ. զխաչելի(ա)լն ի նոցանեն : Տեսէք քստուգապէս զերդ եղեւ Յովսէփ աւրինակ ճշմարտութեան իւրում Տեառնն. վասն զի առաքինութիւն ծաղկեցոյց ի յինքեան ի նորահասակէն կամաւոր բարեւքն²⁷ : Ակիրքն առնել այսուհետեւ եկեցուք պատմել զսրբոյ մանդանն արտաղբելով զառաքինութիւնն* :

Այս երանելիս զութուտասն ամ վարեցաւ առաքինութեամբ ի հայրենի տանն, յառաջանալով հանապաղ ի յերկիւղն Այ. եւ բարի համեստութեամբ եւ պատուով ծնաւդացն եւ տեսանելով անիրաւութիւն ի յեղբարսն

15 Բ. Ելեալ
 16 Բ. ցուցանել
 17 Բ. վերացելս յերկինս
 18 Ա. ի վերա
 19 Բ. զիտացելս
 20 Բ. ապականելս
 21 Բ. ամպօք եւ
 22 Բ. կամէին
 23 Բ. քան
 24 Բ. հաւանել
 25 Բ. զարհուրելոցն
 26 Բ. վաճառեցիք
 27 Բ. բարեւքն

* Հմմտ. նոյն, էջ 411ր :

իւր²⁸, պատմէր հաւրն սակաւ ինչ ի բարձրաց: Քանզի ճշմարտացէս առաքել-
նութիւն չկարէ հաւանել ընդ անիրաւութեան, վասն զի անտեղի է: Եւ վասն
այնորիկ առէին նոքա զՅովսէփ, զի աւտար էր ի շարութեանէ, եւ ամենարարի
եղելոյ մանդանն ունելոյ ի յինքեան զՍուրբն Այ: Երազ տեսանելոյ զհան-
դերձելոցն ինչ պատահել նմա ըստ տնաւթէնութեան Այ. բարձրելոյն:

Իսկ հայրն Յակովբ չզխտացել զճաճուկ ատելութիւն առ Յովսէփ,
պարզմտութեամբ վարէր, առաքելութեամբ վայելչացել ի նորահասակէն, եւ
յարածել նոցա զոչխորսն ի Սիբեմ²⁹: Իսկ հայրն նոցա Յովսէփ, իրրեւ հայր
որդեակէր, հոգայր վասն նոցա, յորժամ էին ի Սիբեմ²⁹, եւ առ Յովսէփա իւ-
րում սիրելոյն. Եկ զնա, որդեակ իմ, առ եղբարսն քո, եւ տես հաստատու-
թեամբ զեղբարսն քո միանգամայն եւ զհաւտիցն՝ փութապէս դառնալոյ:

Եւ առեալ Յովսեփա զպատուէր հաւրն, երթայր ինդութեամբ առ եղ-
բարսն իւր, տանելոյ³⁰ խաղաղութիւն ի զիմաց հաւրն, միանգամայն եւ ըզ-
խնամն³¹ զոր ունէր վասն նոցա, եւ յերթայն իւրում մոլորի ի յանապատին,
ոչ գտել զեղբարսն հանդերձ հաւտիւքն իւրեանց, եւ տրտմել նորա, պատա-
հէր նմա այր, որ եցոյց զճանապարհսն, եւ յորժամ հեռագոյն զնոսա ետես
Յովսէփ, երթայր ինդութեամբ ցանդացել ամենեցուն, եւ յերթայն նորա տե-
սին զնա, եւ իրրեւ զազանք վայրենիք սղանանել կամէին: Եւ Յովսէփ երթայր
իրրեւ զդառն անմեղ անդանել ի ձեռս զայրոց: Եւ յորժամ մերձեցաւ առ նոսա,
ողջունեց բարեմտութեամբ, հարցանելոյ ի խաղաղութիւն: Իսկ նոքա վաղ-
վաղակի յարուցեալք վաղվաղակի մերկացուցին զպատմուճանն զոր սղեց-
եալն³² էր, եւ կրճտէին ի նա կենդանոյն կլանել զնա, խտապոյժն³³ եւ անու-
ղորմ³⁴քն՝ իւրեանց ամբարշտութեամբն, եւ զպարկեշտն զայն, որ ոչ ինչ մե-
ղուցել, զանազան տանջէին վասն ամբարշտութեանն:

Ո Ի Թ Վ Ա Հ Ա Ն Գ Ի

Իսկ տեսել Յովսեփա զինքն ի շարշարանսն մատնել¹, քանզի ամենե-
ւին ոչ ոք էր որ ողորմելոյ եւ կամ զթալոյ յաղաչանսն՝ այնուհետեւ դառ-
նայր եւ յարտասուս եւ ի հեծութիւնսն, եւ նա բարձրացուցել զճայնն իւր մաղ-
թէր նոցա ասելոյ, վասն էր էք զուք զայրացել, աղաչեմ զամենեւին² զձեզ
անսացէք ինձ փոքր մին³, զի պատմեցից⁴ ձեզ եղբարք իմ: Գիտէք զի եւ Ռաբ-
ուէլ մայր իմ ննջեց, եւ Յակովբ հայրն մեր մինչեւ ցայժմ սպա վասն նորա,
զամենայն զոր եւ կամիք այլեւս տրտուութիւն⁵ զարթուցանել հաւրն մերում
առաջի ի նմանէն մնացելոյ, աղաչեմ զամենեւին զձեզ, զի մի եւ ես մեկնե-
ցայց⁶ ի Յակովբա, եւ մի ի ջջէ ձերութիւն նորա կենդանոյն ի զժոխս, երզմ-
նեցուցեալ զամենեւին զձեզ յԱձ. Հարցն Արրահամու, Սահակա, Յակովբա,

28 Ա. իւր
29 Բ. Աեֆեմ
30 Բ. տեսանելով
31 Բ. ի զիմաց հորն եւ զխնամն
32 Բ. զզեցեալն
33 Բ. խտապոյժն
1 Բ. մատնեալ
2 Բ. զամենեւինսն
3 Բ. մի
4 Ա. պատմեցի
5 Բ. ալ եւ սրտմտութիւն
6 Բ. մի եւս մեկնեցայց

յայն որ ի սկզբանն կոչեց զԱրրահամ եւ ասէ . ել ի յերկրէ քումէ⁷ եւ ի տանէ հաւր քում, եւ բազմացուցից զգաւակ քո որպէս զատուկս երկնից եւ որպէս զաւազ ծովու որ ասանց թուոյ, բարձրեալն որ եւ համբերութիւն Արրահամու համբերել ի փորձութեան միածնի որդոյ⁸ իւրոյ, յաժարարար մատուցանել զիսահակ ի զոճ աւրհնութեան, զի համարեացի համբերութիւնն⁹ Արրահամու ի պարծանս պատարազին Այ . եւ վրկեց զիսահակ ի մահուանէն, իսոյ կախել¹⁰ փոխանակ նորա, ի պատարազ հաշտութիւն¹¹ ընդունելի:

Իսկ սուրբ շառուեղն աւրհնութեանն¹² Յակոբրա, բերանով Սահակա հաւր իւրոյ որդոյ, Աձ . որ էջն ընդ Յակոբրա ի նկուսութեանցն, եւ ասաց սոյ նմա զաւրհնութիւնն Արրահամու, մի քակեցայց ի Յակոբրա, որպէս Հաւրուէն քակեցաւ, մի սպացէ զիս հայրն, որպէս զՀաւրուէն սպաց, եւ մի զարձել խաւարեացին աշքն Յակոբրա, սպասելով ի զրանն, տեսանել զմուտ իմ առ ինքն խաղաղութեամբ եղել: Քանզի ահաւասիկ այժմ սպասէ ողջուկից համբուրից բերանոյ իմոյ խաղաղութեամբ առ ինքն, զարտասուս իմ ընկալել՝ խաղաղութեամբ առաքեցէք զիս առ նա:

Չայտսիկ նորա երզմնեցուցել ի յԱձ . հարցն, առժամայն արկանեն զնա ի բանդ, ոչ յԱյ . երկուցեալք եւ ոչ ի յերզմանցն պատկառեալք, եւ մահուանդ զի պատելով զամենեցուն¹³ ոտիւքն, եւ թանալով արտասուաւք ըզգարչապարս անողորմիցն, զոչելով եւ ասելով . եղբարք իմ, սղորմեցարուք ինձ: Եւ ընդեցեալ զՅովսէփի ի դուքն յանապատին¹⁴, զառնադոյն արտասուաւք եւ ողորմ ձայնիւ սպայր զինքն եւ զՅակոբր զհայրն իւր, եւ լալով ասէր անժառնչ . հեծութեամբք, զիս(ի)էիր¹⁵ հայր իմ Յակոբր զպատահումն որդոյ¹⁶ քո, զի ահաւասիկ ի զփի¹⁷ կամ իբրեւ զսպանող . դու ահա սպասես զառնալով ինձ առ քեզ հայր, եւ այժմ եւ ես¹⁸ ի զփիս արգելել եմ իբրեւ զմեռել:

Դու հայր ասացեր ինձ զնա եւ տես զեղբարսն հանդերձ հաւախքն, վութապէս զառնալով . եւ ահա սոքա որպէս զայլք¹⁹ եղեն, բաժանեցին զիս ի քէն . ո՞ր բարի հայր իմ, ոչ եւս տեսանես զիս, եւ ոչ ձայնի իմոյ լսես, եւ ոչ զարձեալ ձերութիւնդ քո յիս հանդչի, եւ ոչ տեսանեմ զարձել զուրբ զալիսդ քո, զի ի մեռելոյ թաղեցելոյ ոչինչ եմ եւ զանաղանել: Լաց հայր զորդի քո, եւ քո որդի լացցէ²⁰ զձերութիւնդ քո . զի այսպէս ի մանկութենէ զերծայ²¹ ի դրկաց քոց: Ո՞ր տայր ինձ աղանի խաւսող բարբառող, զի եկեալ պատմեսցէ ձերութեանդ քում զողորմն իմ, եւ ասացէ քեզ, զի եկեացես եւ տեսցես զիս ի նկուսութեանս իմում, ցուցցէ²² քեզ եւ զդուքս յոր ընդեցելս եմ, եւ յառել ի դուքս տեսցես զիս, եւ լուիցես զլալուն իմ, եւ զորքս զառն սղորմանս, սպասիք ոչ յանուրջս տեսանես զիս, եւ այսուհետեւ ոչ տեսանես զիս:

7 Բ. քումել
 8 Բ. որդույ
 9 Բ. համբերութիւն
 10 Բ. կախեալ
 11 Բ. հաշտութեան
 12 Բ. շառուիզն օրհնութեան
 13 Բ. ամենեցուն
 14 Բ. անապատին
 15 Բ. հեծութեամբք. ո՞ր գիտէիր
 16 Բ. որդույ
 17 Բ. գրի
 18 Բ. այժմ եւս
 19 Բ. զգայլք
 20 Ա. լացէ
 21 Բ. զերծար
 22 Բ. ցուցէ

Արդ այսուհետև պակասեցին ո՞հայր, արտասուքս իմ եւ հեծութիւնքս, նուազեց անձն իմ եւ ոչ սքէ որ աւզնէ ինձ: Ոյ երկիր, որ գոչեցեր²³ առ Սուրբն Ած. յաղպս Արեւի արդարոյն, սպանեցելոյն ի Կայենէ, որպէս աւանդեցաւ ի նախահարցն, զի երկիր գոչեց մասն արեան արդարոյն, եւ այժմ եւ դու բողոքէ առ Յակովբ հայր իմ²⁴, ծանուցանել նմա ստուգապէս, զիմ ըզպատահումն ի յեղբարցն: Եւ իրբև արկին խակոն²⁵ զՅովսէփ ի դուրն, նստան ուտել եւ բմբել ուրախութեամբ զոր աւրինակ յաղթել ուրուք պատերազմող հարցէ:

Այսպէս եւ նոքա ուրախութեան սրտիւ ուտէին եւ բմբէին զուարճացեալք ամենեքեան, եւ յանկարծարէնս համբարձել զաշս իւրեանց տեսին եկեալս զվաճառականս խմակացիս, որք երթային յեզրկպոսս, ունէին ուղոս բարձել խունգս, եւ ասեն²⁶ առ միմեանս՝ առաւել լաւագոյն է վաճառել զՅովսէփ աւտարաց, այսոցիկ վաճառականաց, զի երթեալ վախճանեացի յաւտար²⁷ աշխարհի, եւ մի մերձեացի յեղբայրն մեր ձեռն մեր, եւ յարուցեալք²⁸ ամենեքին ձեզեցին հանել զնա ի գիտոյն, զիւրեանց եղբարցն²⁹ իրբև զաղանք վայրենիք, եւ առել զզինս՝ ի բաց ետուն վաճառականացն, ոչ յիշեցել զհարն³⁰ իւրեանց զհողեւոր արամութիւն:

Իսկ վաճառականացն ճանապարհորդել հասին ի ճանապարհին ասպարիսին ի ձիրնթացիկ ի տեղին, ուր էր գերեզմանն Ռաքուէլի³¹, քանզի անդ մեռաւ ի ճանապարհին ասպարիղին, զարձելոյն Յակովբա ի Միջագետաց: Եւ իրբև ետես Յովսէփ զգերեզմանն Ռաքուէլի, մաւր իւրոյ, ընթացաւ անդանել ի վերա գերեզմանին, եւ համբարձել զձայնն իւր ողբայր արտասուաւք, եւ զոչէր դառնացեալ անձամբն³² զանուն նորա, Ռաքէլ, Ռաքէլ, մայր իմ, արի՛ ի հողոյդ, եւ տես զՅովսէփ որ³³ սիրէիրտ եթէ զի եղև, ահա ես ինքն գերի վարեալ յեզրկպոսս, ի ձեռս աւտարաց մատնեալ իրբև զշարագործ, զի եղբարքն իմ զիս մերկ ամենեկն ետուն ի ծառայութիւն, եւ Յակովբ ոչ զիտաց: Բաց ինձ, մայր իմ, եւ ընդալ ի գերեզմանդ, եղիցի գերեզմանդ մի մահի՞ք ինձ եւ քեզ, ընդալ, Ռաքուէլ, զորդի քո զոր առաւել սիրէիր քան զքեզ, ընդալ Ռաքուէլ զգերեալս³⁴ զի մի բնամիտ ահ եղևաց, ընդալ մայր իմ զյանդարձաւրէնս զերծեալս ի Յակովբա, զոր աւրինակ եւ ի քէն ի մանուկներէ մեկնեցաւ: Լուր մայր իմ դառն ողբոցս եւ հեծութեանս, եւ ընդալ ի ներքս առ քեզ, քանզի ոչ եւս³⁵ տանին զարտասուս իմ աշս, եւ ոչ անձն իմ զարէ ողողանալ հեծութեամբ, Ռաքուէլ, Ռաքուէլ, ոչ լսես որդոյ³⁶ քում Յովսէփա, ահա բռնադատել³⁷ տանին եւ ոչ կամիս զիս ընդունել. զՅակովբ կարգացի եւ ոչ լուաւ ձայնի իմում, ահաւասիկ եւ զքեզ կոչեմ եւ ոչ կամիս լսել ինձ, աստ մեռայց ի վերա գերեզմանիս քո, զի յերկիր աւտար մի երթայց իրբև զշարագործ:

23 Բ. գոչեցիր
 24 Բ. առ հայրն իմ Յակոբ
 25 Բ. արկին եղբարքն
 26 Բ. ասէին
 27 Բ. վաճառեացի ցտար
 28 Բ. յարուցեալ
 29 Բ. իւրեանց եղբայրն
 30 Բ. ոչ իշխեցեալ գիտոյն
 31 Բ. Հոսեփուէլի
 32 Բ. ամձամբ
 33 Բ. զոր
 34 Բ. գերեալս
 35 Բ. բանգի եւ ոչ եւս
 36 Բ. որդւոյ
 37 Բ. բռնադատեալ

Ո Ի Թ Վ Ա Հ Ա Ն Գ Ի

Իսկ իբրև տեսին ամենեքին ի միասին արք իսմայելացիք, որք առին զՅովսէփ, եթէ այսպէս ընթացեալ անգաւ ի յերեսան՝ ի վերա գերեզմանին Ռաբուէլի մաւր իւրոյ, առին առ միմեանս. Պատանին այս կախարդութիւն կամի առնել, որպէս զի կարացէ փախչել ի մէնջ մերով ոչ զիտացել, զի աներևոյթ լինիցի, կալցուք զգա եւ սրուչութեամբ կասկեցուք, զի մի զամենխոնն՝ զմեզ անսոյս արասցէ: Եւ մատուցեալք առ նա ասեն սաստով. արի այսուհետեւ եւ զաղարէ ի կախարդելոյդ, զի մի հարցուք զքեզ ի վերա գերեզմանին, եւ կորուսցուք զոսկին զոր տուաք ընդ քո:

Եւ յարուցեալ նորա տեսին ամենեքին՝ այտուցեալ զղէման նորա ի դառն լալոյն⁴: Եւ սկսան իւրաքանչիւր ոք հարցանել հեղարար. զի՞ է պատանի զի այդպէս լաս. քանզի դառնութեամբ արտմել ես յորմէ հետէ տեսեր ըզգերեզմանդ զայդ. ի մէջ ձիւնթացիկ ճանապարհին, քաջալերեց ասա մեզ, ի բաց զնելով զերկիրդ. զի՞նչ գործ է քո, ասա մեզ զամենայն⁵, ընդ՞ որ արար ի ձեռս մեր: Նորա հովիւքն յորժամ տային զքեզ մեզ այսպէս ասացին. Զուշազարուք զմա, զի մի փախիցէ ի մէնջ (որ) ի ճանապարհին, զի ամենազօնէ՞ է ի տղայական տիոց. ասպ թէ զերձանի ի մէնջ մեք անպարտք եմք: Քանզի յառաջագոյն ասացաք զդորա զշարագործութիւնդ⁷:

Յայտնէ մեզ ոյր⁸ ծառայ եղեր, նոցա հովիւացն⁹, եթէ այլ ուրուք ազատի, եւ ծանոյ մեզ եթէ վասն էր այդպէս ի վերա գերեզմանիդ անգար: Մեք զքեզ զնեցաք եւ տարք քո եմք, պատմէ¹⁰ մեզ իբրև զծառա զամենայն ինչ զբէն. միթէ զողացար ինչ զքո տերանցն, եւ ատելի եղել¹¹ վաճառեցար որպէս զանպիտան, կամ զայլոյ իրս թաղուցել ըմբռնեցար՝ ոչ կարացել փախչել, կամ եթէ ի մէնջ թաղուցանես զղիպումսն քո ում այլում ծանուցանես: Քանզի մեր¹² այսուհետեւ ծառայ ես, եւ ըստ որում ասացին որք զքեզն վաճառեցին, փախչել ի բաց կամիս ի մեր յուրացելոցս: Այլ միթիթարեցիր¹³ եւ յայտնէ զամենայն¹⁴ վասն քո. քանզի երեսիս ազատ, եւ ոչ կարեմք այսուհետեւ վարեալք իբրև զծառա, այլ որպէս եղբայր¹⁵ մեր եւ սրդի սիրելեաւ: Քանզի տեսանեմք ի քեզ զբարերարութիւն մեծ, եւ առաւել սղաւնութիւն բազում համեստութեամբ: Եւ արդարև արժանի ես առաջի թաղաւորաց կալոյ, եւ ընդ մեծամեծս պատիւ առնուլ, ով մանուկ: Զի զեղեցկութիւնդ քո մեծվայելուչ է, եւ յիշխանութիւն զքեզ հասուցանէ վաղվազակի, եւ եղիցիս ան զմեր բարեկամ եւ ծանաթ, ուր տանիմք զքեզ լինել յարախութիւն քեզ:

- 1 Բ, երեսուն
- 2 Բ, զամենեքին
- 3 Բ, ամենեքին
- 4 Բ, լալոցն
- 5 Բ, քո, զամենայն ասա մեզ
- 6 Բ, ամենազօնի
- 7 Բ, զշարագործութիւնն
- 8 Բ, յայտնեա, որ
- 9 Բ, հովուացն
- 10 Բ, պատմեա
- 11 Բ, եղար
- 12 Բ, քի ի մէնջ բախուցանես: Քանզի մեր
- 13 Բ, միթիթարեցիր
- 14 Բ, զամենայն
- 15 Բ, զեղբայր

Ո Ի Թ Վ Ա Հ Ա Ն Գ Ի

Եւ սրտատախանի տուել Յովսէփա ասէ Հեծութեամբ. Ոչ ծառայ եղէ
 Եւ ոչ զոզ Եւ ոչ կախարդ, Եւ ոչ մեղուցեալ ինչ մատնեցա ի ձեռս ձեռ, աչ յոր-
 դի սիրելի եղեալ եմ հաւր իմոյ, նմանապէս Եւ մաւր իմոյ բոլորովիմ սիրե-
 ցել, Եւ միամաւր. Իսկ նոքա հոգիւքն եղբարք իմ, Եւ հայր իմ առաքեաց զիս
 տեսանել զողջ(ն)ութիւն նոցա, քանզի իբրեւ զհայր հոգայր յաղագս նոցա,
 նեղել վասն յամելոյն իւրեանց ի լերին: Վասն այսորիկ առաքեաց ի հաւրէն
 տեսանել զնոսս. Իսկ նոցա կայել զիս ի ծառայութիւն զԺնէ(ն) նախանձով
 վարեալք՝ մերժեցին զիս ի հաւրէն ոչ բերելով զսէրն, զոր սիրէրն զիս հայ-
 րն իմ:

Իսկ զերեզմանս որ աստ է մաւր իմն է Ռաքելա, քանզի երբեմն հայր
 իմ ի Սառանա գալով ընդ այս անց, Երթեալ ի տեղին ուր այժմ բնակեալ է: Եւ
 յանցանելն հաւրն մեռաւ աստ մայր իմ Եւ թաղեցաւ ի զերեզմանիս զոր զուր
 տեսանէք. Եւ լուել նոցա լացին վասն նոցա¹ Եւ ասեն ցնա. մի երկնչիբ սր-
 տանի, քանզի ի սրտիս մեծ երթաս զու յնիդիպոսս, Եւ կերպարանք քո վկաէ
 վասն քո ազատ ծէ(ն)ղեանդ. քաջայոյժ այր լեր առաւել վճարել նախանձուէ
 Եւ մանաւանդ սրպէս ասացեր յատեցող եղբարց:

Իսկ եղբարք Յովսէփա յորժամ զնս վաճառեցին, ածել քուշ զինին
 յաւժարարաբ², Եւ շաղախել զպատմուճանն Յովսէփա սրբոյ, վտիթով առա-
 քեցին հաւրն իւրեանց, Եւ ասացեալք³ զայս զտաք բնդեղեայ յանապատին⁴,
 Եւ վաղվաղակի ծանեաք եթէ այս սղեստ Յովսէփա եղբարք մերում, զոր սղե-
 նոյր, Եւ ի արտմութեան եմք ամենեքին ոչ զտել զեղբայրն⁵ մեր, բայց միայն
 զպատմուճանն ամենալաւին Յովսէփա, յաղագս այսորիկ ատ քեզ հայր առա-
 քեցաք զպատմուճանդ, ծանիր, եթէ սրդոյ⁶ քո է այդ⁷, քանզի մեք զիտացաք
 նորս զոլ զպատմուճանդ:

Եւ իբրեւ Լոեա Յակոբ զպատմուճանն Յովսէփա, զոչեաց լալով Եւ
 դատնապէս Հեծութեամբ. ասէ՝ Յովսէփայ որդոյ իմոյ է սղեստս այս, զազան
 չար եկեր զորդին իմ, Եւ ողբալով ասէր անտանելի Հեծութեամբ, ընդէր ոչ Ես
 քո փոխանակ զազանակուր⁸ եղէ, ընդէր ոչ վաղվաղակի զիպեցաւ ինձ զազանն
 Եւ զտա կերակուր ի նմա, փոխանակ քո, ով Յովսէփ, վա՛յ ինձ, վայ ինձ, զի
 աղիքս իմ խորովին վասն Յովսէփա. վայ ինձ, վայ ինձ, ուր կելբաւ զորդեկն
 իմ, զի երթեալ կոտորեցից⁹ զալիս իմ ի վերայ տեղոյն¹⁰ նորս Եւ ոչ կամիմ
 կել¹¹ վայրկեան մին առանց Յովսէփա. երթայց Եւ զոչեցից յանապատին զու-
 րութեամբ իմով Հեծելով, զի ժողովեցին զազանքն¹² Եւ ընդ իս սգասցեն, Ես
 եմ պատճառք¹³ մահուան որդոյ իմոյ, Ես եմ որ կուրացուցի զիմ լուսաւոր
 աչսս, Ես որդեկ իմ զքեզ սպանի, ասել¹⁴ զնա ի հաւտն տեսանել զեղբարս քո
 Հանդերձ Հաւտովքն, լացից այսուհետեւ Եւ սգացից զամենայն ժամանակս,

1 Բ. վասն նորա
 2 Բ. յոժարար
 3 Բ. ասացեալ
 4 Բ. անապատիս
 5 Բ. զեղբայր
 6 Բ. որդւոյ
 7 Ա. էէ այդ
 8 Բ. զազանակեր
 9 Ա. կոտորեցի
 10 Բ. տեղւոյն
 11 Բ. կեալ
 12 Բ. զազանք
 13 Բ. պատճառ
 14 Ա. առել

ով որդեակ, մինչև իջից ի դժոխս առ քեզ, ով որդեակ, եւ փոխանակ մարմնոյդ, եղից առաջի աշաց իմոց զպատմուծանդ քո եւ սղացայց զքէն սուղ մեծ, ով որդեակ իմ, զի ողջ եւ առանց պատասելոյ է, եւ զի ոչ եկեր զքեզ զագան, սիրելի իմ, այլ առաւել ի ձեռաց մերկացել սպանար:

Քանզի եթէ¹⁵, որպէս ասեն եղբարք քո, զագանակեր եղեր, պատմուծանս քո ըստ մասին պատասել լինէր ի դագանէն, զի ոչ յառաջադոյն մերկանալ ի քէն զագանն անսայր, եւ յետոյ ի մարմնոց քոց յաղենալ, որդեկ իմ: Եւ եթէ դարձեալ նախ մերկացուցանէր եւ սպա յետոյ ուտէր, անչազոյս մնացել լինէր յարենէ պատմուծանս քո, քանզի ոչ ժանեց ցրցտումն, եւ ոչ ճիրանաց¹⁶ ցելումն ի պատմուծանիս գտանի: Իսկ ուստի է արիւնս, իբրև զի ոչ է արուեստ զարանաց, մերկացուցանել նախ եւ յետոյ սպայ պատասել: Իսկ եթէ զագանն, որ եկեր զՅովսէփ, սա միայն պատահեցաւ, զամենայն միանդամայն գործելով, սովաւ ինձ միայնում(ն)ս կոծ մեծ, զի սղացայց զՅովսէփ. եւ կոծեցայց զպատմուծանս, երկու սուղ, երկու լալիք, եւ կոծք զառնագոյնք, Յովսեփա եւ պատմուծանիս, եւ եթէ զիրար¹⁷ մերկացաւ եւ կամ զիրար¹⁷ սպանաւ: Մեռ(աւ)այց այտահետեւ եւ ես, որդեակ իմ Յովսէփ, լոյս իմ եւ նեցուկ, եւ պատմուծանս քո ընդ իս իջցէ ի դժոխս, քանզի ոչ եւս տեսանել կարեմ զլոյս¹⁹ զայս առանց քո, պակասեցէ ոգի իմ ընդ ոգոյ²⁰ քում, որդեակ իմ Յովսէփ:

Ո Ի Թ Վ Ա Հ Ա Ն Գ Ի *

Իսկ Իսմակելացիքն իջուցին փութով եւ խնդութեամբ մեծաւ զՅովսէփ յեղիպտոս, խորհելով միանդամայն վասն զեղեցկութեան Յովսեփա, ընչից պատահելոյ ընչից մեծամեծաց, եւ յանցանելն նոցա ընդ մէջ քաղաքին, ահա Պետարէս վաղապահի պատահեց նոցա, եւ տեսել զՅովսէփ հարցանէր ցրնոսա, ասացէք վաճառականք, ուստի է պատանիս այս, քանզի ոչ նման է ձեզ, քանզի ամենեքին Իսմակելացիք էք, իսկ այս պատանիս ամենեւին զեղաւոր է: Եւ նոցա պատասխանի տուել յոյժ աղատ (տա?)նէ է¹ ասեն, եւ բարում իմաստութիւն ունի մանուկս: Եւ տուել նոցա զին բարում, առատութեամբ, և ցանդութեամբ զնեց զՅովսէփ, եւ տարել զնա ի տունն իւր փորձէր ուսանել զվարս նորա: Իսկ սա ճամբարտութենէ շառաւել² Սրբոյն Աբրահամու եւ Սահակա եւ Յակոբա, յառաջէր յառաքինութիւն արքայաւորէ, եւ ժամէ³ ժամ ի տանն Պետարէի⁴ նահատակէր հաստատութեամբ հայեցուածով եւ բանիւ աշտիճան⁵ բարէպաշտութեան լինելով ամենայն պարկեշտութեամբ, եւ անպակասարար ունելով առաջի աշաց իւրոց զքննող սրտից մարդկան, զԱստուած հարցն, որ փրկեց⁶ զնա ի դիոյն մահուանէ յեղբարցն⁷ իւրոց, բայց սակայն ի սրտին իւրում արտում էր տխրագոյն յաղազս հաւրն իւրոյ Սրբոյն Յակոբա:

15 Բ. Բէ
 16 Բ. ճիրացան
 17 Ա. գերդ
 18 Ա. այտոստէ
 19 Բ. Կր պակաս զլոյս
 20 Բ. ողւոյ
 1 Բ. ազատել է
 2 Բ. ճամբարտութեան շառաւել
 3 Բ. եւ ժամէ ի
 4 Բ. Պետրափէի
 5 Բ. աստիճան
 6 Բ. փրկեացն
 7 Բ. յեղբարց

* Ձեռ. Վիեննայի Բ. 126 ունի շեւրք Վահան զի»:

Եւ տեսել Պետափրէկի⁴ զմանդանն կազմութիւն եւ զլաւարարութիւն, բազում առաքինութեամբ եւ մտաւորութեամբ, զամենայն որ ինչ իւր ստացել էր՝ եւ Յովսէփա, իբրև մտերիմ որդոյ, եւ ամենեւին ոչ զխտէր զոր ինչ առնէրն Յովսէփի, զամենայն իրս մինչ բանիւ միոյ, բայց միայն հացին զոր ուտէրն ի ժամու, քանզի գիտէր զՅովսէփ⁸ եթէ հաւատարիմ է, մանաւանդ ըզփորձ առել, զի բազմանային ինչք նորա ի ձեռն Յովսէփա, եւ ինդութիւն մեծ էր ծառայից եւ ազախնաից⁹, բազում բարութեամբք ի նմանէն եղելոց :

Իսկ տիկինն իւր տեսել զՅովսէփի, զեղով եւ մտաւորութեամբ զարդարել, խոցեցաւ տօփանաւք եւ զիւական մուրութեամբ, եւ յոյժ ցանկայր ննջել ընդ նմա, եւ զպարկեշտն զայն եւ զեղբարն սգաստութեան¹⁰ ի խորս գիծութեան ընդենուլ փութայր, բիւր մեքենաւք եւ զարդարմամբքն¹¹ կարծէր միանգամայն անխնայարար զործել, ստէպ ստէպ հանդերձս փոփոխելով, ըզդէմն փողիփողունս առնելով, ոսկով պճնելով, սատանայական ակնարկութեամբ, զիճական պատրանաւք¹² զեղէր իժն զսուրբ զհայեցումսն¹³, քանզի կարծէր նայ այսոքիկ կերպարանաւք զիւարար որդայթիւլ զողիս սրբոյն :

Իսկ Յովսէփ ի զողմանի եղեալ, եւ երկիրդին¹⁴ Այ. պարապեալ, եւ ոչ տեսեամբ անգամ զակնն¹⁵ ի նա հարկանէր : Եւ տեսել նորա եթէ արուեստք արդարանաց զատարգանան առ Յովսէփի, առաւել եւս տուրէր, եւ սաստկարար բորբոքէր, ոչ եւս գտանելով¹⁶ թէ զինչ արասցէ նմա : Այնուհետեւ¹⁷ ըզմտաւ ածէր յանդգնարար բանիւ կոչել զնա ի զործ անարգալութեան¹⁸ եւ գիտել¹⁹ միանգամայն իբրև իժ մոյկեան, հեղուլ ի վերայ նորա զթիւնս²⁰ զիծութեան, առել լըբութեամբ՝ ննջէ ընդ իս, մի վատարտեր, այլ համարձակէ²¹ մի վատարտեր²², [ղ]ի վայելցից ի գեղոյ քումէ²³ մինչև ի լրումն, յապեցիր զու ի յիմէ գեղեցկութենէս. սենեկք բազումք ձեռնտու²⁴ են մեզ, իշխանութիւն ունիս զու բոյսր տանս. այլ ոք ոչ իշխէ ամենեւին առ մեզ մտանել, եւ ոչ իմանա ոք զզործեցեայսն մեր :

Իսկ անգամանդէ հոգով²⁵ եւ մարմնով, այսպիսի ալեկոծութեան ոչ նուաստացաւ մտաւք, այլ ի բաց մերժեց զամենայն եղեալսն վասն երկիրդին Այ., իբրև զյայտնիս զձաճուկսն : Համարել, եւ վայելուչ համեստութեամբն իւրով, հաւանեցուցանէր զնա սուրբ բանիւք, ոչ է զայս արժան զործել, ով կին զու, զմեղս ընդ քեզ տիկնոջա, քանզի երկնչիմ ես յԱստուծոյ : Արդ²⁶ ահա Տէր՝ իժ զամենայն ինչս իւր հաւատաց ինձ ի տան եւ ի յանդի²⁷, եւ ոչ ինչ է որ ընդ իմով իշխանութեամբ շիցէ բայց²⁸ ի քէն ի տիկնոջէս, յոյժ անպա-

8 Բ. Յովսէփ
 9 Բ. ազախնեաց
 10 Բ. զգաստութեան
 11 Բ. զարդարմամբքն
 12 Ա. պրանաւք
 13 Ա. զհայցումսն
 14 Բ. երկիրդին
 15 Բ. գակն
 16 Բ. գիտելով
 17 Բ. այնու
 18 Բ. արդարութեան
 19 Բ. գիտեալ
 20 Բ. զբոյսն
 21 Բ. համարձակեա
 22 Ա. վատարտես
 23 Բ. զի ... քումմէ
 24 Բ. ձեռնտու
 25 Բ. անդամանդեա հոգեով
 26 Բ. Արդ շուրհ
 27 Բ. եւ յանդի
 28 Բ. բաց

տե՛հ էլ գայտալիսոյ տեսան զոչրս արհամարհել, որ այնչափ զիս սպասուեց , և զիս¹րդ արարից գայտալիսի մեզս առաջի Այ. որ քննէ զսիրտս :

Այտալիսի սուրբ բանս միշտ ասէր Յովսէփ առ կինն խրատելոյ , աղա-
շելոյ , սաստելոյ , մեղադրելոյ , և ոչ ընդունէր ունկն իղին²⁹ , այլ՝ ևս ա-
ռուել ըրրբքէր հոացումն ի նմա չար ցտնգութեանց , և միշտ զիտէր գտա-
նել զիսոց ժամանակ և բռնարարել զնա :

Ո Ի Թ Վ Ա Հ Ա Ն Գ Ի

Եւ տեսել Յովսէփս եթէ այնպէս լըրի կինն , և ի վերս զոյ ապակա-
նել զնա , առ Ած . չարցն իւրոց համբարձ գաշտն իւր և խտտագոյնս¹ աղաշէր
ղկատուած բարձրեալն ասելո՛ւ . Որ չարցն իմոց Արբաշամու , Սահակ և Յա-
կորա , Ած . մեծ և ահաւոր , փրկէ² զիս ի դազանէս , ահաւասիկ³ զու տեսանես
ղմորութիւն կնոջս , զիսրդ դաղտարար սպանանել զիս կամի անօրայելուչ
գործոյք , զի եղէց մեռեալ ի մեզս նոյա միանդամայն , և կատարելապէս
բաժանեցայց ի Յակոբրա անաւրինելոյս , որ⁴ փրկեցեր զիս ի մահուանէ իմոց
եղբարցն , փրկէ⁵ զիս դարձեալ և աստի ի մոլէկան դազանէս , զի մի⁶ աւտար
եղէց գործոյք իմոյք , և հեծելոյք՝ զՅակոբր ցտնգութեամբ կարգայր ասելոյ :

Ո՛ւյ Յակոբր , աղաթէ⁷ և զու առ Ած . վասն որդոյ քո Յովսէփս , զի
սաստիկ սպտերադ՝ յարեալ ի բաժանել զիս ի յկատուծոյ , քանզի այս զժնա-
դոյն է մահս կնոջս , առուել քան որում եղբարքն խորհեցան սպանանել զիս ,
զի այն մահն զմարմինն սպանանէր , իսկ այս մահս զոզիս իմ բաժանէ յկատու-
ծոյ :

Ահա զու ինքնին զիտես , զի աղաթք քո վասն իմ ելին առ Ած . ոյ
չայր , և զիսն այսորիկ փրկեցա⁸ ի դրոյ մահուանէն , և այժմ դարձեալ ա-
ղաշէ⁹ զբարձրեալն , չայր , զի ապրեցայց ի կանաց¹⁰ դազանէս , որ կամի զորդի
քո սպանանել , և ոչ ունի զերկիւզն Աստուծոյ յինքեան , զի որպէս զրկեցայ¹¹
ի ծոցս քումէ մարմնոյս , մի զուցէ ոզոյս իմոյ¹² աւտա(ւ)ր եղէց յորոյ
քումէ : Աս եղբարսն իմ չոզա , և դադանք եղեն , և իրբև դայք գտոինք¹³
աւտարացուցին զիս ի քէն , ի յեղիպտոս իջի ի ձեռս աւտարաց , և ահա դարձ-
եալ աստ պատահեց ինձ դազանն , եղբարքն իմ յանապատին սպանանել զիս
խորհեցան , և սա¹⁴ դարձեալ յըշտեմարան¹⁵ պատուել զիս կամի , աղաթէ⁷
չայր ամէնասուրբ յաղազս որդոյ քում Յովսէփս , զի մի մեռայց տառջի Աս-
տուծոյ չարցն իմոց :

Եւ իրբև ոչ կամէր այնուհետե Յովսէփ լսել բանի կնոջն , որ բռնարար
յամենայն ժամ , իրբև զիմ զայրենի անամաթարար զիտաց , ի զէպ ժամու

29 Բ. իմին
1 Բ. խտտագոյն
2 Բ. փրկեա
3 Բ. ահաւաղիկ
4 Բ. չունի որ
5 Բ. փրկեաց
6 Բ. չունի մի
7 Բ. ազօրեա
8 Բ. փրկեցայ
9 Բ. աղայեա
10 Բ. կամանց
11 Ա. զրկեցայց
12 Բ. իմ
13 Բ. գառք գայլիմք
14 Բ. չունի սս
15 Ա. յիշտեմարան

ի սենեկի գտեալ որպէս եւ կամէր¹⁶ բունն հարել զպարկէշտէն լըբենին, բրտնարարէր ձեզալ առ ինքն գործել զանաւրէնութիւն: Իսկ¹⁷ նորա տեսել առաւել յանդգնութիւն կնոջն, վաղվաղակի ի բաց վաղեաց ի յանցս ընթացիցն, զոր աւրինակ եւ արծուի յորժամ տեսանէ զորսորդս՝ ի բարձունս համբառնա զինքն:

Այսպէս եւ Յովսէփ փախեալ յորսողէն զի մի ամենեւին զնասեսցի յորսողէն, բանիւ կամ գործով, ի ձեռս նորա թողել զիւր հանդերձն, խորտակեաց զամենայն մեքենայն սատանայի: Իսկ տեսել կնոջն թէ այնպէս փախեալ ի մեծի¹⁸ տրտմութեան եւ յերկիւզի եղեալ, եւ այնուհետեւ խորհէր զարդարն պաշարել բանիւ պարտաւորութեամբ առ այլն իւր, որպէս զի լուել տան բորբոքեցի ցասամբ, նախանձարեկութեամբ, եւ այսպէս սպանցէ զՅովսէփ:

Չայս առաւել զմտաւ ամելով կնոջն, Էթէ առաւել լուսադոյն է զի Յովսէփ սպանցի, եւ ես հանդատեան դիպեցայց, քանզի ոչ զաւրեմ յամենայն ժամ ի տան իմում տեսանել զզեղ նորա, եւ միշտ զրկել եմ ի վայելելոյ եւ յս(յ)գեանայոյ՝ յայտնապէս կամ ի ծածուկ ի զեղոյն Յովսէփա, եւ ի բազում համեստութենէն¹⁹: Եւ կոչել զծառայան եւ զազախնայան եւ ասէ ցնոստ. տեսէք զինչ գործեց ծառայն Երբանցի, զոր կացոյց տէր իմ ի վերա տանս, զի միանգամայն եւ ընդ իս կամեցաւ լինել անամութարար, ոչ շատացաւ Յովսէփա ի իշխանութիւն տան իմոյ, այլ եւ զիս կամեցաւ յառնէն մեկնել: Եւ առել զպատմուճանն Յովսէփա ցուցանելով առնն²⁰ իւրոյ մեղադրելով, իբրև զպարկէշտաբ տեսելով. Ահաւասիկ զու ամեր զպատանիս զայս հերբանցի²¹ թշնամանել զիս, եւ խաղալ ամուսնոյս քո:

Եւ լուել վաղվաղակի հաւատացեալ բանից կնոջն ասացելոցն, թէ արդարեւ այդպէս է, հրամանց²² զՅովսէփ արկանել ի բանդ բազում փութով եւ տրտմութեամբ, ոչ ամենեւին յիշելով զաւրհնութիւնան Աստուծոյ, որ եղև ի վերա տան նորա եւ յանդի յաղաղս Յովսէփա, եւ ոչ զարձեալ քննեց զբանն(ն) ստուգապէս, այլ վաղվաղակի վճիռ ի վերա հատ, ի վերա անիրաւ զատաստանին Յովսէփա, ի զուր բանդին հրամայեց արկանել եւ ոչ ամենեւին հասանել ներելոյ եւ կամ զթութեան: Իսկ Ած. Աբրահամու եւ Սահակա ե Յակոբա էր ընդ նմա, որ քննէ զսիրտս սպաղանացուաց, եւ տա զնա ի զթութիւն բանդապետին, զի յրճարձակութեան եղիցի, քանզի ոչ երբեք Աստուածն մեր քաղցրապութ²³ ի բաց լինի յայնցանէ²⁴ որ եւ կատարել սրտիւ Երկնին ի նմուէն:

16 Բ. կամէր եւ
 17 Բ. լըբենին բռ(կր պակտի մէկ տող)ուրեամբ. իսկ
 18 Բ. մեծ
 19 Բ. համեստութեանն
 20 Բ. առն
 21 Բ. նորայեցի
 22 Բ. հրամայեաց
 23 Բ. քաղցրապութ
 24 Ա. յայնցե:

(Շար. 1)

ՁԵՌԱԳՐԱԿԱՆ

ԻՐԼԱՆՏԱՅԻ ՏԵՊԼԻՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ

ԹԻԻ 556 ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳԻՐԸ

«Սիոն»ի 1972ի թիւ 3—4ի մէջ, էջ 161, ներկայացուցինք քանի մը հատը այդ ձեռագիրներուն: Այս անգամ կը ներկայացնեմ թիւ 556 Աւետարանը, որ դժբախտաբար չէր աննուեր հրատարակուած շարքին մէջ իր տեղը: Նախ հոս կու տամ այս Երկաթագիր մագաղաթեայ Աւետարանին բոլոր յիշատակարանները:

1. էջ 9ա, Մատթէոսի Աւետարանին մեծագիր Գ սկզբնագրին ձախ կողմը: Աղագրութիւնները սղարգած եմ բոլորգրով.

Քրիստոս Յիսուս Քո

ԱնճԱՌ

ԾՆՆԴԵ

ԱՄԲԴ Ո

ՂՈՐՄԵԱ

ԱՇԽԱՏ

ՈՂԻ ՆԿԱՐ

ԻՍ ԵՒ ԿԱ

ՁՄոցիս ԱԲԲՐահամի

2. էջ 40ա, լուսանցքին վրայ, կանաչ յատակով կլորակ դարգածէին մէջ, ղեղին ներկով անխնամ բոլորգրով. «Տ(է)ր ա(ստուա)ծ սղորմեա Դաւթի եւ եղբա(ւր)»:

3. էջ 45բ, նոյնպէս. «Տ(է)ր ա(ստուա)ծ նաեա յիս ե սղորմեա ինձ»: Իսկ էջ 55ա, նոյնպէս, սակայն անընթեանի: Իսկ էջ 82ա, նման նախորդներուն՝ ուր կը կարդացուի. «Քաղաքերից է աւետարանս»:

4. էջ 82ա, գրչէն, Մատթէոսի վերջը, Երկաթագիր.

ՄԵՂԱԽՈՐ ՈՄՆ ԵՒ ԱՆԱՐԺԱՆ ԱՅՍՄ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ

ԳՐՈՒԹԵԱՆ ՅԱԻԵՏԻՍ ԿՈՉԵՅԵԱԼ ԱՂԵՐՍԷ ՅԻՇԻԲ

Ի Քրիստոսի

5. էջ 103բ, կլորակ լուսանցարդի մէջ. «ՏէՐ ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԵԱ ԱԲԲՐահամի»: էջ 111բ, վերնոյն նման. «Տ(է)ր յ(իսու)ս լոյս խաւարելոց լուսաւորեալ»: Իսկ էջ 113բ, քառակուսի դարգածէի մէջ, կարմիր յատակի վրայ, ղեղին գրով. «աւգնեա ինձ ա(է)ր»:

6. էջ 147բ, կլորակի մէջ լուսանցքին, հաղիւ բնթեանի. «Տ(է)ր յ(իսու)ս եւ զիս Աւետիս»: Իսկ նման վերնոյն էջ 189, հաղիւ բնթեանի. «Պահեա զիս ի գայթակղութենէ»: Եւ դարձեալ նոյնպէս. «Ուղաբերից աւետարանս յիշեալ ի»:

7. էջ 216ր, Ղուկասի վերջը, գրչէն, Երկաթագիր.
 ՅԻՇԵԱ Տէր ՉՄԵՂԱՊԱՄԼՍ ԳՐԻՉՍ ԱԻԵՏԻՍ
 ՀԱՆԴԵՐՉ ԹՈՎՄԱՅԻԻ ԵՒ ԽԱԶԱՏՐՈՎ ԵՒ
 ՔՐԻՍՏԱՓՈՐ ԵՒ ՊԱՐԳԵՒԵԱ ՄԵՉ ՉՈՂՈՐ
 ՄՈՒԹԻԻՆ ՔՈ Ի ՔՈՒՄ ԳԱՍՏԵԱՆԴ ԱՄԷՆ :

Իսկ էջ 223ր, լուսանցքի կտրակին մէջ. «սարս է յիշել զրանն տե-
 օրն»: Ուրիշ մը, էջ 248ա, բոլորովին անընթեանյի մինչ էջ 262ա. լուսանցքին
 կտրակին մէջ հազիւ կը կարդացուի. «Պէնդակոստին»: Իսկ ուրիշ կտրակ մը,
 էջ 275ր, մասամբ կտրուած, կը կարդացուի. «Եղբայր»:

8. էջ 280ր, Բ. սին, Յովհաննու վերջը, գրչէն, Երկաթագիր.
 ՓԱՌՔ

ՆԻՆ Աստուծոց Ընդ ՀԱՍԻ ԻԻ
 ԸՈՒՄ ԵՒ ՍՐԲՈՅ ՀՈԳԻ
 ՈՅՆ ՅԱԻՏԵԱՆԱ
 ԱՄԷՆ .

ՉՇԱՐԱԳԾՈՂ Սուրբ ԱԻ
 ԵՏԱՐԱՆԻՍ ՉՅՈՔԱ
 ՅԱՆՅ ՊԱՐՏԱՌՈՐՍ
 ԱԻԵՏԻՍ ԵՒ ՉԽԱԶԱ
 ՏՈՒՐ ԵՒ ՉՔՐԻՍՏԱ
 ՓՈՐ ԵՒ ՉԹՈՎՄԱՅ ՓՈ
 ԽԵՅԵԱՍ Ի ՔՐԻՍՏՈՍ ԵՒ ՉՍԸ
 ՏԵՓՆՈՍ ՊԱՏԱՆԻ,
 ԱՅՂ ԵՒ ՉԾՆՈՂՄՆ ՄԵՐ
 ՅԻՇԵԱՋԻՔ Ի ՔՐԻՍՏՈՍ ՅԻՍՈՍ .

Ըստ 4, 7 և 8 թիւ յիշատակարաններուն, գրիչը ինքզինք կը կոչէ
 Աւետիս: Աւետիս գրիչ մը գրած է 1176ին Երևանի Մատենադարանի թիւ 5619
 ժողովածուն՝ կամբջաձորու վանքը, ստացող Քրիստափորի համար: Յուշա-
 կին համաձայն գիրը միասին, բոլորովին է, մինչ այս թիւ 556ը Երկաթագիր
 գրուած է: Գուցէ նոյն գրիչը գրած է թէ՛ բոլորովին և թէ՛ Երկաթագիր: Աւե-
 տարանը, իր սրբազան հանդամանքով, նախընտրուած ըլլալ Երկաթագրով
 գրուելու:

Թիւ 7 յիշատակարանին մէջ, գրիչը՝ Աւետիս, կը խնդրէ յիշուիլ
 «հանդերձ թովմայիւ և Խաչատրով և Քրիստափոր»: Նոյն անունները կը
 կրկնէ նաև թիւ 8 յիշատակարանին մէջ, ըսելով. «Պաշատուր և զՔրիստա-
 փոր և զԹովմայ փոխեցեալս ի Քրիստոս»: Ուրեմն զոնէ թովման վախճանած
 էր երբ Աւետիս գրչու թիւնը կը վերջացնէր: Ըստ իս, «Խաչատուր, Քրիստա-
 փոր և Թովմա» Աւետիս գրչին միարանակիցներն էին, որոնք զուցէ և սա-
 տարեցին նիւթապէս գրչութեան, և քանի որ գրչութեան ստացող չի յիշ-
 ուիլ, արդար է խորհիլ որ յիշուած անունները Աւետիս գրչին հետ միասնա-
 բար պատրաստեցին Աւետարանը իրենց վանքին Եկեղեցւոյն համար: Օժան-
 դակոյններուն շարքին պէտք է նշանակել նաև Ստեփաննոս «պատանի»ն:

Թիւ 1 և 5 յիշատակարաններուն մէջ այդ Աւետարանին ծաղկող,
 մանրանկարող և կազմող («աշխատողի նկարիս և կազմողիս») կը յիշուի Ար-
 բահամ: Իսկ թիւ 2 յիշատակարանին մէջ յիշուած կը գտնենք, լուսանցագրա-
 դին մէջ, Դաւիթ և Եղբայրը: Մանրանկարող և կազմող Արբահամ, իր կա-

բողոքներն արամադրած է՝ Հաւանարար անվարձք Աւետիսի գրած եւ իր բնկերներէն նիւթապէս օգնուած Աւետարանին կատարման: Հաւանական է որ Դաւիթ ու իր եղբայրն ալ բանով մը օժանդակած ըլլան մանրանկարչական եւ կազմարարական աշխատութեան եւ ծաղկոզր՝ Աբրահամ՝ յարմար գատեր է գայն յիշել լուսանցազարդի մը մէջ, ատիկա բաւ Համարելով Դաւիթ եւ իր եղբոր բերած օժանդակութեան Համար: Որովհետեւ Դաւիթ եւ եղբայրը ծաղկումի մը մէջ ձեռագրին սկիզբը կը յիշուին, ատիկա մեզի կը թելադրէ խորհիւ որ բուն գրչութեան շէն ստատրած, այլապէս գրչի յիշատակարաններէն մէկուն կամ միւսին մէջ պիտի յիշուէր:

Գրչութեան մօտաւոր ժամանակը յարմար է Երեւանի Մատենադարանին թիւ 5619 Ժողովածուի գրչութեան ժամանակին՝ որ է 1176 թուականը: Կարելի է որ, թէեւ պէտք է երկու գրչութեանց յիշատակարաններուն ոճը եւ այլն աւելի մանրակրկիտ քննել, Տրպլինի թիւ 556 Աւետարանին եւ Մատենադարանի թիւ 5619 Աւետիս գրիչները նոյնը ըլլան: Քիչ մը աւելի ուժ կը բոտանայ մեր այս կարծիքը երբ նկատի առնենք որ Մատենադարանի թիւ 5619ի ստացոյցը կը կոչուի Քրիստապիտր, որ Տրպլինի թիւ 556 Աւետարանին մէջ Աւետիս գրչէն երկիցս յիշուած երեք անուններէն մէկն է:

Գրչութեան վայրը կրնայ Կամրջածորու վանքը ըլլալ, ուր այդ ատենները կար գործունեայ միաբանութիւն, Ժ դարէն սկսեալ գտնէ:

Օրիորդ Սիբարսիի Տէր ներսէսեան, որ անդլերէն ցուցակադրած է Տրպլինի այս ձեռագիրները, կը կասկածի որ թիւ 556ի մանրանկարող եւ կազմող Աբրահամը նոյնը ըլլայ Մատենադարանին նշանաւոր Հաղբատի Աւետարանին (1211էն) կազմող Աբրահամին հետ: Սակայն վերջինս լոկ իբր կազմող կը յայտնուի եւ իր ծաղկող կամ մանրանկարող ըլլալուն մասին ոչինչ կ'ըսէ, մինչ թիւ 556ի Աբրահամ կազմողը որոշ է որ բարձր կարողութեամբ բնտիր ծաղկող մըն էր: Աբրահամ նկարող ունի ինքնուրոյն շարադրանք, մանաւանդ իր Աւետարաններու սկզբնաթերթերուն խորաններուն Համար: Յաւալի է որ իր ձեռքով իսկ կազմուած ձեռագիրը մեզի չէ Հասած իր այդ սկզբնական կազմով, որով իր կազմարարական արուեստին մասին շատ բան մը չենք գիտեր, սակայն զինքը զնահատելի կը գտնենք իբր վարպետ ծաղկող, արժանի՝ մեր բնտիր ծաղկողներու շարքին գաստելու:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

ԴԻՒԱՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈՒԲԻ

Ն Ա Մ Ա Կ Ա Ն Ի

ԳՐԻԳՈՐ ՇՂԹԱՅԱԿԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ

ՆԱՄԱԿ ԹԻԻ 34 (57Թ)

ՁԱՍՏԷ

Ի ձեռն բէլից Յովաննէս, Թէոդորոս, Փարբիէլ, Յովաննէս
վարդապետաց, ամուսայ տիրացու մահտեսի Փաղպարին, և
թէրճիման Պօղոս տիրացուն հասցէ դիրք՝ զի ի միասին
բացցեն ընթերցցին և իմասցին զանխուլ ծածկարար՝ և
այսպէս կտրատեալ այրեսցեն: Չայս աշտակս տրալէք լովյաք
իմ աչացս՝ և խաղաղութիւն Քրիստոսի մնացէ առ ձեզ՝ ամէն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ատուածոյ

[26 Օգոստոս 1736]

Կամ իմ և՛ս Գրիգոր մեղապարտ պետս՝ հնչից որդոց իմոց հարապա-
տից Սրբոյ Աթոռոյց՝ և բէլից Յովաննէս Հայր վարդապետի իմոյ զանխուլ
զամենայն զորպէսութիւնս իմ, և զՊատրիարկ վարդապետին, և զտեղոյս քր-
բխտունից՝ սիրով ծանուցանել. և զուք ի սրտի և մի՛ սմեք լատնիցէք բղ-
ղուելս ի սմա: Արդ՝ Ատուածոյ յիշանէ իմ արտասուտք ի Սուրբ Փաղաքէն
և ի Սրբոյ Աթոռոյց, և յանշատին ի սուրբ տեսութեանց ձերաց, թանկ
արտի հաւաք յեւ[ֆա] և խարջ բոզն. (2300) զտուլ լոյց զայց տեղացն տը-
ւած՝ և ահա առաջի Ատուածոյ խոսիմ զի ի տեղոյ՝ ու յայտ՝ և ու ի ծա-
ծուկ զրամ չունիմ պահած՝ միայն այն էր որ ի ձեզ թէլովմ արարի. և քանի
մի բտակ ի հետ մնաց և զնախ միտան որ Ազար շարապին վարձեր էր՝ ևտու
բոբն. (2200) զտուլ: Ի Յինիքէ՛ս որ ի Մէծահարչի կիրակին եի և ի Յուրի-
սի իզ. ի Ստամբոլ մտի. խարջ ևղևե. Ե. (1000) զտուլ և այլ տելի: Եւ ի մը-
տանէին իմ ի բաղաքս տեսի զՊատրիարկն իմ և ինչպոյն յոյժ. և յետոյ քն-
նեցի և զտի ի մէջ պարտուց ընկղմեալ զխեղճն մինչև ի հարիւր քիսի ի պար-
տուց տակն անկեալ մեր Պատրիարկ վարդապետն. զ. բաժինն շահոյ և մէն
բաժինն յետոյ թէ անշահ. և այն նախկին ցան զինքն տիրապետեալ՝ որ և
յՕգոստոսի իզ. յինէն զաղա գերանքն ետ ծակել, որ ք. հօխայ ջուր էլ ի զար-
մացումն տեսողաց և զեռես ի մահիճս անկեալ կայ՝ բայց Ատուածոյ լաւ
է: Եւ ի լսելն պարտատիրաց զգալն իմ, զբոհ ևտուն ինչքել զպարտան՝ զոր
մեք այլ զօղնութիւն սակաւ ինչ արարաք. և մերկ ի զրամէ ի վայր նստաք

դատարկ սպասելով սղորմութեան Աստուծոյ: Եւ ի տեսանելն զմեզ Հասարակ ժողովուրդքն խնդացին, նաև Համայնքն, բայց ոմանք մեղադրելով թէ ընդէ՞ր պատճառք եղեն եւ զայդ մարդտ ի տեղացն իւր խախտեալ անս բերին. եւ ոմանք թէ լաւ եղև զայդ երզնն. որ բարով չէի եկեալ զայս ասեմ եւ բզկեանս իմ աւաղեմ զի յանողուտ տեղ այսքան խարջ եղև. թող զիմ զահմէլթն եւ զանչափ հիւանդութիւնն զորս կրեցի ի դուր. եւ ամենեքին որպէս Եստուսյին հետի են ի միմեանց՝ նոյնպէս եւ սիրտք իւրեանց ստուալք ի միմեանց՝ ափսոս ազգիս մերոյ, զի ոչ տեսանեմ զքաղաքս ա՛յնպէս՝ զոր յառաջն տեսեալ էի: Եւ յազգէն մերով ի դրունս մեծամեծաց ո՛չ սք զոյ: Մահտեօի Սեղբոս ընդ Պատրիարքիս մեր խոսով էր՝ զնացի ի վէղիրխանն եւ միջնորդութեամբ մահտեօեացն՝ սուտուսուտ մի հաշտեցաւ՝ այլ ոչ ճշմարտութեամբ, զբզբոմամբ սարկնոս երէց Մարկոսին, որ նախքան զգայն իմ զմեծ կոխ արարեալ է ընդ մեր որդի աթոռակալ Յարութիւն վարդապետին բազում եպերանս խօսեցեալ. եւ այսպէս իրզնութեամբ կեայ վարդապետն իմ, եւ միշտ աղաղակէ թէ ազատ արա զիս ի դործոյս վասն Աստուծոյ սիրոյն: Եւ վասն անիծեալ խորամանկ ազգին Յունաց, զայն որ սափիրայի առնն անուանակիցն արծարծեալ է ի տեղո՞՞ ամենեւին սուտ է. բայց ի գայն իմ ի քաղաքս՝ զտեղոյս վէճերէն՝ ծերն չար՝ ա. բուռն ծաղկով յղեաց առ մեզ թէ բարի եկեալ ես՝ եւ մեք եւս նոյնակերպ զՅարութիւն վարդապետն եւ զՊապոյս օլաճազն յղեցաք առ նա թէ բարի տեսաք. եւ այնպէս մնաց. եւ բարեկամ մի յերեկեան օրն մէկ ֆէրմանի մի սուրէթ գաղտ երեր առ մեզ՝ որ ի լսելն զգայն մեր՝ զնացած է ի Արմրիլի առ փոխանորդն մեծին, եւ ֆէրման մի արած է զոսոյ ազգն ի վերայ տեղոյդ գատուորին, Շամայ փաշային եւ Երուսաղէմայ մուսալմին թէ մպէհ՝, թէ մեք հրամայեցաք որ ք. ազգն ընդ մի՛ մարտիցեն եւ արզուհալ ի դրունս մեր մի՛ տայցեն. այլ որպէս յառաջն էր՝ իւրաքանչիւր յիւր բաժին տեղն նստցի. վասնորոյ եւ ձեզ պատուիրեմ զի որ ազգն որ միւսոյն վնաս հասուցէ՝ գանս եւ կապանս ի վերայ նոցա հասուցէք, եւ թէ զիր խնդրեն՝ երկուցն այլ մի՛ տայք զի ոչ ընդունիմք. շարահարքն զայս հնարս գտեալ զի գտեալ արդն եւ բզմահասարն որ Յակոր վարդապետն բերեալ է՝ պաթալ՝ արացեն. զարմանք հիացումն սիրելիք իմ, զի յօրէ յօրմէ բերեալն են զսէնէտներն ընաւ մարդոյ ցոյց ո՛չ են տուեալ. մեք այլ բերաք եւ զիղեցաք ի վերայ առաջնոյն լուկեայն. եւ մերքն յոյս տան զատարկ թէ մի՛ տրտմիր՝ Աստուծով քան զյառաջն այլ լաւ կլինի: Եւ զօրքն փոխանորդիւ ի հիւսիսակողմն են. եւ թուի թէ այն ֆէրմանի սուրէթն ի մօտ Լատինացիք (այսպէս) զոյ՝ Պօղոս Հնարեա զուցէ առնուցուս. բայց կարի մի հետեւիր՝ զի բանի կերպն այնպէս է որպէս զբեցի վասրն զգոյշ լինելոյ ձեր, եւ մեզ վնաս յայնմ ֆէրմանէ ինչ ո՛չ զոյ. եւ ահա ընդ մեր որդի Աստուածատուր վարդապետին մէկ լաւ եազութ մատանի մի ծանրաղին յղեցի. եւ զու ո՛րդի Գարբիէլ վարդապետ առ քեզ պահեա՞ թէ քաղաքապետ նա մնաց՝ յորժամ գայ յերուսաղէմ, խորհուրդ արէք թէ պատշաճ կտեսանէք յիմ բերանոյն արզուհալ մի եւ զմատանին յինէն առանձին մատո իւրն թէ պատշաճ կտեսանէք եւ երես կգտանեն որպէս ի Շամ եւ Տէր զրոնաւուրաց սիրտն քաղցրացուցէ եւ զթշնամիս մեր զՅոյնս խորտակեցէ. եւ ստոյգն այս է՝ զի ի բարեկամաց կլսեմք որ մեր գայն աստ՝ մեծ ցաւ է եղեր իւրեանց

1 Պատուէր, հրաման:

2 Ձեզեալ:

զվասն էրն ոչ գիտեմք՝ բայց նորա ի մէնջ եւ մեք ի նոցանէ միշտ զկասկած կկրեմք՝ Աստուած զվերջն ի բարին առնէ՝ եւ ծառայիցս իւր ողորմեսցի։ Եւ ձեր քաջութիւն ա՛յս է, զի յորժամ Աստուած չէնէ բան մի լսէք եւ զստոյգն իմանայք, շուտով մէնդիլիւ մեզ ծանուցէք. նոյնպէս եւ մեք տոնեմք՝ Տերամք. եւ Տէր զշար խորհուրդս նոցա խափանեցէ. եւ մի՛ երկնչիք, Աստուած ողորմած է։ Եւս լուաք թէ իմաստիւ կժողովեն ի տեղդ, յղեն վասն իրեանց պարտուց. յետոյ Սիօնցի Մէհմէտն զԹահայի պէրաթներն երեր, յՎ. դուռ ուղեցէք եւ ապա տուէք թէ տայ. Սիօնցի ք. եղբարքն իւր խնդրելով կնեղեն զմեզ՝ Տէր է յոյս իմ՝ Զչեխ Ծէյրու բանն այսպէս իմասջիք. եւ դու ո՛րդի Պօղոս լու իմա՛՛ զի գիտեմ զցաւն աւելի դու կու քաշես. Աստուած գիտէ՝ որ քան զիմ գալն յատաջ, Յակոբ վարդապետն շատ ջանիւք հնարեր էր եւ չէր եղեր. յետ մեր գալոյն պատուիրեցի թէ ո՛րչափ դրամ կերթայ թող երթայ՝ միայն թող լինի. ոչ ես միայն՝ այլ եւ օրհնեալ Լատինքն՝ եւ անիծեալ Յոնքն ջանացին եւ ոչ եղեւ մուֆտիութիւն, զի Ապտլլաթիֆն ք. եղբարք որդիք Ապուսուտին երես գտին, եւ զբանն նշկահեցին. եւ զայժմախ քաղաքիս նոր եղածին կամելով՝ չեղեւ հնար դատնարոյ. ահա իւր ազգայինն եւս թող վկայէ որ աստ է, եւ չլինի թէ բարդէ ի վերայ մեզ թէ շար Յոնքն ձեր պատճառաւ՝ զի թէպէտ յամենայնի պարտական են անիծեալքն այնքիկ՝ այլ յայժմ կողմանէ անպարտք են. գիտեմ որ երկուքդ Գարբէէլ վարդապետդ՝ եւ Պօղոսդ՝ շատ սիթամ՝ կը կրէք ի նմանէ, այլ ճար չեղեւ՝ զի յամենայն կողմանէ՝ իւր թնամ միքն ցածացուցին զանուն շեխ Ծէյրուն. լինի թէ Անտոնիւ կաշառիցէք եւ համողիցէք զնա. ամօթով եղաք ի նմանէ, բայց Աստուծով կը ջանամ որքան աստ եմ, թող զիւր խաթրն խօշ պահէ։ Եւ լուայ թէ Ապտլլաթիֆն զմուֆթիութեան վէքիլութիւն առեալ է՝ եւ ընդ մեր նաւին ահա զաւոյց է. բայց այժմ պատուիրեմ սիրելեացդ իմոց՝ զի յորժամ նոր մուֆթին գայ՝ լու ծանօթք լինիք ընդ նմա, զի մեծաց ծանօթ է նա՝ եւ խորամանկ եւ բազմազէտ՝ ըստ մերոցն ասից. թէ կլինի ար. ժամացոյց յիմս կողմանէ շեխ Ծէյրուն տայք՝ վասն զխաթրըն շահելոյ։ Եւ թէ զիմ որպէսն հարցանէք թէ յի՛նչ բանի վերայ կամ՝ ճշմարիտն ա՛յս է՝ զատարկ նստեալ կամ տրտում եւ տխուր եւ անվաստակ՝ եւ հետըս եղածն այլ զնաց՝ եւ դեռեւս խնդրեն. մէկ անհասկանալի անչահ պարար մի է տեղոյս մեր բանն՝ միթէ Աստուած յիտակէ։ Թաթրդ շմնայ հո՛ղի ամուծայ՝ ինձ պարտ է զստոյգն զրել. այլ Աստուած ողորմած է. եւ վարդապետ Պատրիարքիս կենդանութիւն տայ. պարտքն եւ խորջն շատ՝ եւ կլլիրն սակաւ. եւ զանձանակքն նուազեալք. Տէրն ինքն ողորմի եւ ճար անէ։ Զնուիրակ Պալատցի Յակոբ վարդապետն ի Թօխաթ յղեցաք նուիրակ. Աստուած զբանն իւր յաջողէ. Մարաշցի նուիրակ Յարութիւն վարդապետն աստ առ մեզ եկն. յԱղամ վարդապետէն դեռ խապար չկա՝ բարով գայ։ Եւ յայժմ ամի ի կողմանցս յայցս... (Թուրք պատուում) ահա Աստուծով զձեզ աղատ թողի՝ յիս կրելով զամենայն զցաւս զի իմ վիճակն այսպէս էլ. միայն յանիծեալ Ահմէտ պէկի թէրճիմանի կողմանէ՝ որ Ապտլլահապի միջնորդութեամբ ի վերայ շար որդոյն նորա եղեւ՝ որ բարով չվայելէ. ի Պայատցի Պալոզլի մահտեսի Արբահամէն տարպխանանոց³ ձեռօք՝ չորս հարիւր զուռ շտաք եւ տուաք Ահմէտ պէկի որդոյ պէրաթներուն. եւ ես թէմէսիկ ետու՝ որ ի գալ Արբահամին զնորա զբամն տայք եւ ապա զգարպասն խնդրէք, եւ զինքն առ Ապտլլահապն

3 Դժուարութիւն, չարչարանք։
 4 Փողերանցի պաշտօնեայ։

յղէք զբոլ սոցա՝ եւ զպէրաթիւերն զբոլ թոյ մնայ ի մօտ Արրաճամին մինչեւ որ զգրամն առնու՝ թէ տայ. ա՛խ ի՛նչ անեմ. յասօջ գրարեւի զիրն տա՛ ի տայ յԱպարտիաճապն եւ զգրամն ուղէ՛. բայց զպէրաթիւերն առանց գրամի թոյ չի տայ. ս՛րդեակ Գարբէլ յարդապեա՝ զայդ է՛նչօտն զու գիտես՝ իմաստութեամբ հոգա՛ որ մեզ մնաս շիինի :

Նախիպեկնց Ապարտիաթիֆն որ եկն աճա րնդ նախն մերոյ՝ որպէս գիտես Գարբէլ յարդապեա որ ե Սօխիկ օղուց և՛մ. զսուչ փոխ առեր էր՝ ե թէ մէտիկ եւ պէրաթիւերն որ ու՛նէին էր՝ առ իտ մնաց ի փոքր խցիկն իմ յոր ննջէի. ս՛հ. ոչ գրամ խնդրօղ եղեւ եւ ոչ սուօղ՝ եւ ինքն ասա խնդրեաց. եւ մեք տասպար թէ առ սասաֆ մաստեաի Ապտույն է որ այժմ յերուսաղէմ է՝ Սօխիկ օղին ամանաթ է գրեր՝ զնա՛ գրատակն տուր՝ եւ առ զքո պէրաթիւերն եւ զթամատուկն. մասնորոյ ի ժամանիլ զբոյս զնա ի փոքր խցանակն իմ եւ սրնեա՛ ի մէջ կարմիր քօակի իմ է ամէն՝. ա՛ն տուր ի մաստեաի Ապտույն յնձն ուղճոյն մատու իւրն. եւ ասա թէ Սուրբ Տան խաթերն զայս բանս հոգայ՝ զգրամն առնու՛ եւ ապա զամանաթիւերն տայ. այս յետոյ եղև որ յիւր զիրն շարեցի՛ թոյ հաստայ եւ զբանն հոգայ եւ յիցի օրհնեալ :

Ղարդապետք՝ իմ աչացս յոյսք. աճա ռէնի. (1730) օխայ մեղրէ մտ յղեցաւ. Աստուծոյ համար գմտի եւ զգանձանակներու տէֆտէրն տեւէք որ րնդ զբոյս է. եւ զեկաւ հաստաի գրերն անպակաս բղրկէք, որ շամաշիմք ապաչեմ :

Իմ թէքիթիֆն ձեզ ա՛յս է. և. (100) զսուչ ի Ծննդեան մաստեաի եղիայն տայք որ նուիրակ Յակոբ յարդապետն ի Քօթաճեայ առեալ է ի Փիլիաճիէն. եւ իա. (21) զսուչ ի Մարկոս յարդապետն տայք որ միւս Յակոբ յարդապետն առեալ է ի նորա պարտատէրէն :

Եւ ի զարնան եղանակին, ձեռամբ մեր որդի Աստուածատուր յարդապետին թէ զինչ օղնութիւն կաննէք փտեալ ձերոյ հօրս ձերոյ՝ զայն զուք գիտէք եւ ձեր մարիթաթն. մինչեւ յիշէքիկս այլ զնաց եւ զեռես պարտքն զիղեալ կայ ի վերայ խղճոյն. երանի թէ մեռեալ էի եւ ոչ եկեալ զայսպիսիս տեւեալ. այլ վերջն ի բարին լիցի. ափսո՛ս զիմ հօր առատ հոգորդն որ ես յայս հայս կամ, փառք Աստուծոյ :

Թօփալ մաստեաի Պաշտուրն իրիճայ արար, զՄիթրու կիմն ի տանն շահնէք, ք. զօլթայ թոյ պակաս առնուն ի տան վարձէն զի շատ աղաչեաց :

Մեր սիրելի իրիթքի մաստեաի Ղարարի որդին եկն այդր՝ Աստուծոյ համար յա տիրութիւն անէք, եւ պատուէք զի աչօքս տեսի զհօրն զնեղութիւն որ մա՛ն. զանձանակին եւ մամին՝ յարկպարտի չհամարիք զգրեալս :

Թո՛րոս յարդապետ ս՛րդի է՞ր մատամբ զբոլ ինձ չես ծանուցեր՝ Նարոյին խապար կր զրկես թէ զգարպասն ի Պատրիարքաբանն առնումք. ս՛րդիք ես զիտէի թէ պիտիր յայս տարի գամ յայս տեղս եւ զառնամ ի տեղդ՝ եւ այժմ ա՛ն առաջին քէֆիկն զնաց իմ. Ն. տէք անդ եւ զարպասն տէք եւ ապրանապն տիրութիւն արէք՝ ի ձեռս մաստեաի Ներսիսին թասալմ արէք եւ յորժամ պիտոյ ինի տէք. աճա եւ զայտեղաց ապրանքն յղեցաք. զրանային առնէք բացէք եւ տեսէք. եւ որպէս պարտն է այնպէս արարէք. եւ ի մաստեաին թէպիմ արէք, ս՛չ ապաքնն ձեր է ամենայն :

Մեր Աստուածատուր յարդապետն զնաւի հիսապն ս՛չ կարաց յայս տեղս տալ՝ զի խոտն եղև բանն՝ յորժամ բարոյ ի տեղդ գայ՝ եւ նաւի կողմ մա՛ն. թէ պարտք ունեալ՝ տուէք՝ զի զահմէթ անշափ կրեաց. Աստուած օրհնէ զիրքն :

Չհստատեանքն եւ պատուանքն ցրուէք զլիսուոր միարանից . եւ մի՛ թու-
զուք որ մահտեանն պահէ :

Մահտեաի Դաւթի կինն եկն ի տեղդ՝ մեր տէմիրճի Յակոբն թէ տաւայ
ի նմանէ անէ՛ իմ խաթրս յիւրնէ կը մւայ : Չհասանիլ ուխտաւորաց այդը՝
փութով մեզ ծանուցէք . եւ սուա սիրով ընդ Յոյնն վարիցիք . եւ ի Տէր եւ ի
պարծանս հոգ Գրիգորի ողջ յերուք որ յՈգոստոսի իզ . յորում նաւն էլ բար-
եաւ զգիրս ծրեցի . ի պատեքին զՍրբոյ Տանդ տէֆտէրն կէլիւրին եւ զնացածին
բղբկէք . բաւ է :

ՆԱՄԱԿ ԹԻԻ 35 (40Բ)

ՀԱՍԾԷ

Ի սուրբ Երուսաղէմ ի Սուրբն Յակոբ .
ի ձեռս Թէոդորոս եւ Գաբրիէլ վարդապետաց
հասցէ զիրս ի բարին :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Է՛

[28 Յունուար 1737]

Իմոցդ հարապատից՝ եւ աշացս լուսեացդ բազմաշխատ փաստա-
կաւորացդ եւ հաւատարիմ ծառայիցդ Սրբոյ եւ մեծի Աթոռոյցի ե
իմ որդոցդ Աստուածարան վարդապետացդ եւ ամենայն միարան
իմ հոգէկից եղբարց եւ որդոցդ զսիրոյ ողջոյնն սիրատարսի սիրով
լալտա աշօք եւ բեկեալ սրտիւ ընծայեմ եւ յԱստուծոյ հայցեմ զի
ամբողջ կենօք կացջիք խաղաղութեամբ , անկեղծ սիրով եւ բարի
միարանութեամբ ի հաճոյս կամացն Աստուծոյ՝ եւ ի պարծանս
փառայ ծերոյս՝ ամէն :

Եւ յայտ լիցի իմ ազնուապատիւ սիրելեացդ՝ զի նախ ընդ սալիան-
ճուն զիր մի ի ձէնջ եկն՝ թէ ահա ուխտաւորքն եկին ի սուրբ յերուսաղէմ . եւ
թէ գտիրացու Յակոբն , զՄիքայէլն՝ եւ զԴուկասն բազում թխտերօք յղեցաք .
եւ յայնմ օրէ նայելով ի ճանապարհսն թէ՛ Ե՞րբ գայցեն՝ եւ վառն յուշանա-
լոյն՝ կարի նեղէաք . եւ ի Յունովարի ին . յորն գւարաթիւ ընդ երեկո Աստուծոյ
ողորմութեամբն եկին հասին աստ ի բիզանդ անփասս եւ զամենայն զգրեալ-
սըն ամբողջ ի մեզ հասուցին՝ եւ եղեւ խնդութիւն . ոչ սակաւ մեզ՝ եւ զսհա-
ցայ զԱստուծոյ . բայց Միքայէլն ի ճանապարհին խղճուի մահուամբ առ Տէր
փոխեալ էր՝ հոգւոյ նորա տէր ողորմեսցի եւ կեանք ձեզ լիցի . եւ բացեալ ըզ-
զիրսն ընթերցայ՝ եւ մի՛ մի՛ զբոց վերայ զբազում յոր արտասուս հեղի ընդ
զորով աղէտալի զիրս մեծացդ եւ փոքունցդ՝ զի՞նչ ասացից ա՛շացս իմ յոյսք .
զիտէ տէր զի որպէս դուք՝ նոյնպէս եւ ես խղճալիս՝ եւ ես աւելի . զի դուք
մխիթարիք տեսլեամբ սրբոց տեղեացդ արամահալած սրբոյ երկնանման Տա-
ճարիդ՝ եւ իրերաց մխիթարութեամբ՝ բայց զիս ո՞վ լացցէ գտառապեալս ըզ-
մենացեալս՝ եւ զի ներքոյ ցաւոց անկեալս՝ այլ ինքն տէր այց արասցէ եւ ա-

զօթից ձերոց լուիցէ՝ և միմեանց տեսութեան արժանացուցէ՝ և սգորմեացի սրբոյ Աթոռոյց՝ տառապեալ ազդիս՝ ձեզ և մեզ. և զորպէսն մեր թէ զննիցէք՝ տեսնն փառք եմք ի վայրս պանդխտութեան՝ բայց անզորք և անբուն՝ սպասելով սգորմութեան Աստուծոյ որ զանհնարինսն հնարաւորս առնէ. և օրով մի յառաջ քան զապացոյց զայն՝ Երեւելի իշխանօք զնացաք ի տեսութիւն Երկոբնո Քոանցադոց զերապատուելի Էլշի Պէկին. և նա իւր այնիւ Տիկնաւն և մեծամեծօք բնկայան զմեզ մեծաւ սիրով և փառօք բազմածախ խորակօք սեղանոյ և բնծայիւք. զոր տէր յերկար կեանս տացէ նոցա. վասնորոյ վասն այսմ իբի՝ ս'րդիք իմ զնայաք Յոանկաց վանքն, և յինքն ողջոյն տայք մեծի բէկոյին շնորհակալութեամբ վասն զրոցն զի բազում օգտութիւն եղև ի նոցանէ. և նոր վէքիլին բարի եկիր ասէք յիմս բերանոյ. և միտիթարէք վասն ննջեցելոյ հնոյ վէքիլին. և թէ հնար իցէ զի ի նոցանէ զիրն կրկնիցի յանձնարարութեան աստ՝ լաւ է. բայց ոչ սգորմամբ. և պատմիցէք նոցա թէ յոյժ չբնորհակալ է զմեծէն ձերմէ. և վասն մերոյ իրին աստուծով Երվնեբոնեալ աստ և անդ փայլին. այլ յոյս մեր յԱստուած է և ի սուրբսն իւր. ազօթից սաէպ կացէք. բնդ միմեանս սիրով կացէք, զմիմեանս շահեցէք, զօրհնեալ ուխտաւորսն սիրով շահեցէք և պատուեցէք. և զբամ սակաւ խարջեցէք՝ (լուսացիքին վրայ) զի ցնծութիւն սրտի իմոյ այն է՝ յորժամ լսիցեմ զձեր սիրով կեայն առ միմեանս և մի հոգայք և մի արտմիք՝ զի ոչ ի սոցառ մտանայ տէր զերկիւղածս իւր՝ այլ սգորմի բոս իւր քաղցր բարուցն. իմ աշացս յոյս բէկոյ վարդապետին, Սահակ վարդապետին և ամենայն Հարցս Արքայից կրկին զաջս նոցա համբուրելով՝ զողջոյն սիրոյ բնծայեմ և զազօթսն խնդրեմ : իմ Հայր ձերունի Մարկոս վարդապետիդ՝ թախծեալ սրտիւ զողջոյն սիրոյ բնծայեմ. յԱստուծոյ միտիթարիս իմ սիրելի վասն մահուան հոգեւոր որդոյ քո և մերոյ, տէր հանգուցէ զհօգի նորա և զսգորմութիւն սրտի քո փարատեսցէ, և կամք տեսնն լիցի օրհնեալ. Երեմիաս սուրբ ձեր վարդապետիդ զողջոյն սիրոյ բնծայեմ, և խնդրեմ ի քէն և յամենայն միաբան եղբարցդ՝ զի զտրտում սիրտ վարդապետին միտիթարիցէք : Սահական Յովաննէս վարդապետին, Կարապետ վարդապետին, յուսարար Աստուածատուր վարդապետին, Էմիրհան վարդապետին, Գաղպար իմ հօրեղբոր՝ հաճի յօհաննին, մահուանի Ներսիսին, Եղիային և Արքահամին տամ զօրհնութիւն աստուածային, և այլոցն ամենայնից ևս : Որդեակ իմ տիրացու Պօղոս. օրհնութիւն քեզ, և ի մէնջ զօրհնութիւն մատո մեծ մահուանի մամային և իւրոցն ամենայնի. և տիրացու արօյ արքահամին և իւր մօրն և շնորհակալութիւն. և վասն Յակոբին հոգս թող չկրեն, և տէր տացէ քեզ կարողութիւն ամէն :

Պատրիարկ վարդապետն՝ և իւրքն և մերքն ամենայն զօրհնութիւն և զսիրոյ ողջոյն ձեզ ամենեւցուն տան, և ողջ լերուք ի տէր և ի պարծանս հիւքոյս Գրիգորի, որ ի Յունվարի իր. զգիրս ծրեցի ստիպով ի մեծն Բիւզանդ ի Սուրբ Աստուածածնի Եկեղեցին. բաւ է :

Մէնզիլն ի դուռն կանդներ էր՝ լերուք անմեղապիր :

Աստուծոյ համար վասն քաղաքապետի զայլոյն և զնալոյն թէ ս'րպէս եղև ձեր հալիկն մեզ շուտով իմաց արէք. իմ սրդի Յակոբ վարդապետին և ձ' ողացն զօրհնութիւն տամ :

ՆԱՄԱԿ ԹԻԻ 36 (41Բ)

ՀԱՅՑԷ

(Զունի)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

[Մարտ 1737]

Սիրով սուրբ հոգոյն ծանիրք՝ խորհրդակա՛ն որդիք իմ սիրելիք՝ զիտէք իսկ՝ զի ոչ է ինձ ալլ ախորժ՝ քան թէ մերձ ընդ մերձ իմանալ զորպիսութիւն Սրբոյ Տանդ և զձեր . արդ Յակոբ տիրացուն ի Յունիարի ին . եհաս աստ . թագեալ զիսեղծ Միքայէլն ի ճանապարհին մերձ Դօնիոյ՝ հոգոյ նորա տէրն ուրբ՝ . այնպիսի սայուն՝ այնպիսի դալն ըմբոն . բայց այժմ անձուկն իմ այս՝ զի յայնմ օրէ որ տղայքն այդբուստ ելեալ մինչեւ յայժմ կրկին զորպիսութիւնս ձեր իմանալ ցանկամ . եւս յաւէտ վասն քաղաքապետի զալոյն եւ զնալոյն , եւ վասն կասկածանաց մերոց թէ ո՛ւր եղերեցաւ . վասնորոյ վասն Աստուծոյ շուտով մեղ զիր մի յամենայն որպիսութեանց տեղոյդ եւ ձեր շուտով յղեսջիք ազակեմ : Այլ եւ զայս զրեմ ձեզ զստոյզն . զի զինչ զորք առ իս՝ հովն տարաւ եւ դեռ եւս կիզիչ պապակ ոչ ոչնչացաւ . եւ փերեւետեկոց փետրաթափ եղեալ կամ . զյոյնն իմ յԱստուած ընկեցեալ եւ եղովմայցոց խաղճ ընդ յարգիւ կայ թաքուցեալ . արդ ձեզ զայս զրեմ պատուիրելով . զի զոր ինչ Աստուած տայ՝ յետ բարեաւ զնալոյ ուխտաւորացն տեսէք զհամարն , եւ որպէս յանցեալ ետու ձեզ՝ զհոգոյն Սրբոյ Տանդ՝ նոյն չափովն եւ ալլ աւելի , եւ թէ տէր յաջողեաց բանիկ մի յաւելի մնաց , ընդ հաւատարմին մերոյ կեսարացի Աստուածատուր վարդապետին՝ յօգնութիւն ինձ յղիցէք . նաեւ զորքըր ամի եկածն եւ զզնացած ի տէ՛ֆտէրն անպատճառ յղեսջիք . եւ ի Սուրբ Յարութեան կէլիրէն՝ ի բէիզէն բան շառնուք , զի առ մեզ յղիցէ , որ ի զին շրջաբոյրոր ծածկոցին տամք . զայս այսպէս տեսէք եւ հոգացէք անպատճառ , և զտեղոյդ զայլազգեաց զամենեցուն , թէ ո՛վ ոք են ճամբիտ բարեկամք մեզ եւ ո՛վ առ երեսորս՝ եւ ո՛վ ոք թէ նամի յայանի կամ ի ծածուկ , զամենայն մի ըստ միտջէ մեզ զրեցէք . եւ ընդ ամենեսին սիրով կենցաղալարեցիք . եւ առ լատինսն յատուկ զնայք շնորհակալութեամբ ողջոյն ի մէնջս սիրով տայք , զի լաւ յանձնարարութեան զիր զրեալ էին որ ընդ մեզ բերաք . եւ մեծն նոցա հրաւիրեաց զմեզ իշխանօք ի ճաշ եւ տիկնան իւրով անպատմելի սէր ցոյց ետ մեզ՝ մեծածախ սեղանօք եւ ընծայիւք եւ յուսադրական բանիւք , թէ պէտ յոյս մեր յԱստուած է . վասնորոյ անկեղճ սիրով ընդ նոսա վարիցիք , և ընդ միւսիցն ըստ խարդախութեանց : Հովուեան մահտեսի Յարութիւն աղայի ձեռօք սիոնցի կանաչին նն . զոռչ փոխ իբր մեր քէ՛ֆայաթութեամբ բայց փողն մեր է . թամասուկն զատաւորի թէրզիպաչու հետն է . զրեաց մահտեսին՝ մահտեսի Ապաիւլին . զրբեմ եւ ես ձեզ , մանաւանդ քեզ ո՛րդի Պօղոս , զի մահտեսի Ապաիւլի ձեռօք լինի թէզ խարապայն որ յետ մեր պարսպին է՝ հուպ պէրպէր Սարգսի կէցած տան՝ որ ժանտաթիղենօք լցեալ է՝ ի ձեռաց Սիօնցւոյն աննիցուք զնով յանուն մահտեսի Յարութիւնին եւ ոչ մեր . զի ինքն աստ ասացեալ էր թէ կծախեմ . մի՛ գուցէ այլոյ շարագունի ծախիցէ կամ շինիցէ . բայց զո՛ր լերուք ի վախրժ յանունէ , կամ յեղբարց հիսէէ՝ եւ տէր զբարին յաջողեսցէ՝ լաւ մուղայիթ լերուք . տիպտարն թէ ո՛ր մնասուպն խնդրէ ինձ ծանուսջիք . եւ բարեւ նմա . եւս եւ ի որդոյն տայք : Սարգսին Ապալիւհապ թէ ո՛րպէս ընդ ձեզ զե-

կուցէք. վասն պաշտօնաթիպութեան աստ յայտնի գրոյց ոչ գոյ, զժամուկն ոչ գիտեմ. ք. եղբարքն աղքատօրէն զմեզ միշտ կեղեքեն. շին ֆէյլ(դու) իրին մուզայիթ եմք՝ ալլ յաջողումն ալլ է. Օմէրէու ք. կանաչքն ի ն. զուսչէ զմեզ հանին. Աստուած ի՛նսաֆ՝ տայ տիպարին: Տեսէ՛ք ո՛րդիք ինձ կղբէք ՚ի՛լ բղղիրս համաշնչապէս զբեցաք սիրով, և ալլոց զբերն ի փոզոցսն կշրջի. թէ սուրբ Յակոբայ միարանքն մեծք և փոքունք ընդ միմեանս քէնոյ են. ևս յաւէտ զլիստուրքդ. ընդէ՞ր է իմ աշացս լոյսք. վասն է՞ր զմի՛ ամ ոչ կարացիք բարի միարանութեամբ կեալ. զի՞նչ կարեմք յաշխարհէ ընդ մեզ տանի: կամ զիտ՞րդ կարէք և ալլոց քարոզել. Աստուած զմեզ ի փորձանաց ազատէ. զիտէք զճշմարիտ բարեկամն մեր զգալՔայ Սալգիան թէ ո՞րպէս փոռուոր իշխան էր և ալսօր եղաւ ի հոդ տապանի դասն մահուամբ՝ զոր տէր փրկեաց զմեզ և զմեզ՝ վասն նորա մէկ քառասունք կատարել տայք զի էր երախտուոր Արքայ Տանդ և մեզ ամենեցուն: Արտասուօք աղաչեմ զմեզ բարձէք ի միջոյ զվէճո՛ շլինի թէ և ի վերայ Սուրբ Յայտութեան թափօրայտի զկոխ ասնէք. յօրն մէկդ լերուք. և Սահակ վարդապետին և ալլոց ծերոց Է՛ւս թէքլիֆ արէք. լուսարարն խեղճ տկար մի է, ո՛րդի Գարրիէլ վարդապետ՝ օղնեա նմա. ինձ իմ խեղճութիւն հէրիք է՝ մի՛ անէք որ զասն ձեռ՝ դասն բանիք ինձ խոցուտն. արտասուօք աղաչեմ, զկէլիւն ծա. զբեալ էիք ինձ, և ևս զգիրն թաղուցի, յալլոց լսեմ ծք. հոչակեալ. ալս ո՞րպիտ իր է և կամ միարանութիւն. Աստուած զգաստութիւն տացէ. աստ աւելի ևս պակաս զրոյց ոչ գոյ՝ շխարեն յձեզ սբտաղօզս առնելով. ի վերայ այնմ զրոյն է զոր ի տեղդ զայտ արարին. Աստուած հոգայ. վասն զբարբրիդ՝ որ է անցեալ ամի տաճարի մուկե՛կի. և յայսմ ամի կրկին եղև մուկե՛կի տաճարին և ահա ևկ՛ աղբ, սիրով լերուք ընդ նմա զի ի կողմանէ սեւագոյն է. և շշուն. իմն եկն ի տելիս մեր թէ պիտիք ի տեղդ մուսալիմ լինի հրամանաւ քաղաքապետին և ուժղնութեամբ տեղուոյս իրր տեսցէ զամենայն իր և աստ աղղ արասցէ՝ զի իրտուուն առնիցեն և ոչարսն պատժեցեն. զստոյզն ոչ գիտեմ, միայն թէ լուաք այսքան: Ընդ զրոյս գոյ ա. նամակ վասն ուխտաւորաց զի ի Սուրբ յԱտեանն ընթերցցի և մի զիք ի սեղանատունն ի մէջ միարան եղբարց ընթերցցի. և անմեղաղիր լերուք, զի ալլ կարողութիւն ոչ գոյ յատուկ զիր զբել, քանզի ցասն և կերպ կերպ հոգան մաշեցոյց զիս՝ և եմ ի նոյնն: Վասն Աստուծոյ զգրեալս զամենայն կատարէք, ծերոյս խղճացէք, զմիմեանս շահեցէք, և զբան սբրոյ աւետարանին ի միտ ձեր բերէք: Հոգեւոր Տէրն մեզ ընծայ յղեաց. լաւ գաւապոն, զեղեոխի չուրջատ, ք. խայիշայ, ա. Ֆէրածի. չէ՛ն մնայ. նուիրակ վարդապետն ի վերայ իր զործոյն է լաւ, Սահակ վարդապետն զԿարնոյ ք. վանքն մնասուպ և թրմեր նուիրակութիւն էատ ևս զնալոց է. զմեր Աւետիք վարդապետն Կեսարիոյ զէտ կարգեցաք. և Սարգիս պետն՝ որ ինչ մեր խղճուկ Յակոբ վարդապետին ի դահն սուրբ արար կեսարացիք ծպտտիկ յինքն հատուցին. ալլ ոչ մեր սագրլովն ալլ իրաւամբք տեանն. Մինաս պետն ի Վէնետիկ զնացեալ անուղղայ զբեր շատ ի քաղաքս զբեալ. որո՞յ հոգս. ի Համթայ Պետրոս վարդապետն՝ մեզ ոչ զիր և ոչ զրամ յղեաց ի նուիրակութենէն. եթէ ալլոր յղեալ է ինձ ծանուսջիք. զՀամթեցի Յօհանն վարդապետն յԱկն և յԱրասպիկ և զՅարութիւն վարդապետն ի Կեսարիայ նուիրակ յղեցաք. զոր ինչ պղնձեղէն պիտոյ է Սբրոյ Տանդ՝ ի Թոխաթ Յակոբ նուիրակին յղիցէք, զի հոգասցէ. իմ պանդոխտացեալ Յակոբ վարդապետն իւր խեղճ ծնօղօք յԱստուած և ի մեզ յանձին: Իմ հայր ծեր սուրբ վարդապետին պատիւ և շուք զբէք՝ զի զօրհնութիւն ժա-

1 Խիզն, գուր, արգահատութիւն:

անսկիզբ: Հին նախապի որդոյ բովանդակ գրերն եւ պէրաթներն ի մէջ կարմիր թալիս քիտէի մի մէջն եղեալ պահէի ի փոքր խցիկն իմ. եւ զիս՞րդ գրուեալ էք ինչ ոչ երևի. կա՛մ անդ է կամ ի միւս փոքր օտայն է, յայլ ուրիշ անդ չէ. որոնեցէք գտէք եւ ի տէրն տուէք: Լուան եղովմայացիքն թէ զատուարի արդն առ մեզ է՝ եկին տարին եւ այլ գրոյց մի ո՛չ ել. զլիններն ի քար՝ ա՛մէն: **Պօղոս** ս՛րդի ահա փոխանակ կանթեղին, զսուրբ Գլխազբի պատուական վարացոյրն հառս քեզ յիշատակ. զբամ հազրէ որ զպակասն տաս՝ Աստուած բնգունելի աննէ. եւ Ֆէյլու Անտոնին ի մէնջ ողջոյն եւ օրհնութիւն տամ. բղ-Փոանոցի առած փոխ զբամն ի մէնջ ստի՞ք թէ ոչ. եւ այլ բան ի միտս չի գար՝ ողջ լիք ի տէր, ա՛մէն:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Նամակը բուսական չուճի, սակայն, ըստ բովանդակութեան, Մարտ 1737ին գրուած պէտք է ըլլայ: Ունի պաշտօնական կարմիր մեյանով կնիք մը ճամակին սկիզբը, ճակատին:

ՆԱՄԱԿ ԹԻԻ 37 (49Բ)

ՀԱՍՑԷ

Ի Սուրբ յերուսաղէմ, ի Սուրբ Յակոբայ
 յօրհնեալ սեղանատունն բացեալ ընթերցեցի զիբոս
 ի յուր ամենայն եղբարցն իմոց միարանից
 բազմութեան:

ԲՈՎԱՆԳԱՅՈՒԹԻՒՆ

Է՛

Ի՛մ հոգեւոր աշացս լոյս քաղցր Հարցդ եղբար՛ցդ եւ որդո՛ցդ սիրելեացդ իմոց՝ Արք եպիսկոպոսացդ՝ Վարդապետացդ՝ Քահանայիցդ՝ եւ ամենայն Պաշտօնէիցդ տեառն. եւ համայն զործակալացդ՝ եւ քրձազգեաց միարան մահտեսեացդ.

[Մարտ 16, 1737]

Ի զողզօջ եւ ի հիւանդ յանձնէ՝ ի տառապեալ Գրիգոր մեղապարտ վարդապետէ՝ յանարժան սպասաւորէ Սրբոց Տեղեացդ Քրիստոսի Աստուծոյ մերոյ որ ի Սուրբ յերուսաղէմդ՝ հասցէ սիրարբորոք սէր եւ արտասուալից ողջոյն առ իմ ի սրտէ սիրեցեալ վերողբեալքդ ամենայն, հարցանելով զդիարզըն եւ զորպէսն ձեր՝ զոր ամենակարող աջն Աստուծոյ ընդ հովանեա ինամոց թելի իբրոյ պահեսցէ զձեզ զամենեսին. իսկ թէ զողորմելի եւ զողբալի բղկեանս իմ հարցանիցէք՝ տեսառն Աստուծոյ փառք, բայց եմ իբր եւ զկոճղ կիսայրեաց անկեալ աստ ի մէջ անչահ հոգոց եւ վարանմանց՝ զորս ոչ կարեմ ճատել եւ զրել մի ըստ միոջէ. եւ միւս եւս անտանելի քան զսոյն՝ զի յօրէ յորմէ էլ բաք ի նաէն մինչեւ ցայժմ, մէկ ամիս զկատարեալ առողջութիւն ոչ զբտաք. եւ այս յետինս որ եղև քան զամենայն ծանրագոյն՝ զի ի Սրբոց յՈսկեանց տօնին ի Նշարաթի օրն՝ ի Պ. ժամուն սարսուռ իմն անկաւ ի վերայ իմ եւ անկայ ի մահիճս՝ եւ այլ ոչ զիտեմ զորպէս լինելս՝ բժիշկք բազումք եկ-

ևայք եւ յուսահատեալք զչնացեալք են . եւ այնպէս մնացի ի մահի՞նս մինչեւ ի տնտեսի Կիրակին . սակայն ողորմածն տէր իւր սրբոցն բարեխօսութեամբ՝ եւ սրբոց տեղեացոյ շնորհիւ՝ եւ օղնականութեամբ ազօթից իմ քաղցր եւ սիրուն եղբարցոյ՝ կրկին ողորմեցու եւ ճշմարիտ իբր զՂազարոս յարոյց ի մեռելոց . զի մահիւ իւրոյ ողորմութեան . եւ զայս խնդրեմ ի ձէնջ զի յԱստուծոյ խնդրիցէք մին՝ զի յայս ցաւոցս կատարելապէս զիս ազատեցէ . եւ միւս՝ զի զոլործս մեր յաջողեցէ՝ զի պարզերեսութեամբ յայս տեղոյս ելցուք եւ առ ձեզ այլք ժամանիցուք . զի առաջինն չէ՛ մեծս այս Բիւզանդ . միթէ տէր ողորմեցի տառապեալ ազգիս՝ եւ երանի թէ ոչ էի տեսեալ այնպէս ժխորեալ . իմացայ բղմահ սիրելոյն իմոյ յուսարար Աստուածատուր վարդապետին՝ եւ սգացի . եւ զարձեալ երանեցի զնա՝ եւ զա՛յ անձին իմոյ ասացի . Հոգոյ նորա Աստուած ողորմի , եւ ձեզ ամենեցուն՝ կեանս շնորհեցէ . բայց ո՛չ է պարտ զմայրն մեր սուրբ ամայի թողուլ . վասնորոյ ընդ Պատրիարքին իմոյ զայս խորհեցայ , եւ ձեզ իմ աչացս յուսեացոյ զրեմ , եւ խնդրեմ զի զուք եւս սիրով հաճիցիք եւ բնդունիցիք . եւ զոր խորհեցաք այս է : Իմ բէիզ վարդապետի քուեր որդի Աստուածատուր վարդապետն թող ի Սուրբ Յարութեանն Ելանէ՝ ե զայ լինի Սուրբ Յակոբայ յուսարար ի տեղի վախճանելոյն . եւ ամենեցունցոյ կամօք զամենայն զրանալիք Սրբոյ Եկեղեցոյն յանձնեցէք ի նա՝ եւ Սարգիս Սարկաւազն լիցի Երկրորդ նմա . եւ մահտեսի Ներսէսն , օտապաշի մահտեսի Եղիսայն , շորապան մահտեսի Աբրահամն՝ օղնականք լիցին նմա՝ եւ խնդրեմ հայր բէիզ վարդապետն զի եւ ինքն ա՛յսպէս կամիցի . երկու Սիմէոն վարդապետքն բաւականք են իւրն օղնական՝ այս ա՛յսպէս թող լինի մինչեւ Աստուծով զամք մեք ձեր սուրբ ազօթիւք . եւ զսօն Սրբոյ Չատկին Հոչակաւոր աննիցէք որպէս յամենայն ամի զամենազեղեցիկ զՍուրբ Տաճարն զարդարելով մխիթարիցէք զօրհնեալ ուխտաւորսն . բայց յետոյ ամենայն ամփոփեցին որպէս յառաջն էր . եւ խնդրեմ զի վասն Աստուծոյ սիրով ընդ միմեանս եւ ընդ այլ ազինսն՝ զսուրբ Տօնն կատարիցէք . (Լուսանցքին վրայ) եւ տէրն ամենայնի ձեզ ամենեցուն՝ եւ նո՛ր յուսարար որդոյն իմոյ զկարողութիւն տացէ՝ եւ ամէնքդ թողութիւն արարէք . զի ամենեցունցոյ սիրոյ զրեքն ի մեզ եհաս եւ շնորհակալ եմ ի ձէնջ յո՛յժ . եւ է՛ս ոչ կարացի ուրո՛յն ուրո՛յն զպատասխանն զրեկ մնացի պարտական . բայց յուսամ ի ձեր կատարեալ սէրն՝ զի զայս զիրս ընդունիցէք ի տեղի զբոյ ձերոյ . Ա՛հ սիրելի՛ք իմ , հաւատացէ՛ք զի եւ զայս զիրս ի շորս յօրն ապա կատարեցի շնորհակալաւ . յազօթս ձեր յիշեցէք զիս զճուկս . եւ զուք ամենեքին ողջ լըրուք ի տէր եւ ի պարծանս զառամեցեալ ձերոյս՝ որ ի Մարտի ձգ . զգիրս ծրեցի զա՛յ եւ եղուկ կենօք՝ զողողջեալ մատամբս՝ ի Սուրբ Աստուածածնի Եկեղեցին՝ որ ի Սաամպոյ . բաւ է :

Հրատ. ԱՐԱՅ ԳԱԱՅՃԵԱՆ

(Շար. 7)

ՊԱՏՄԱԿԱՆ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԲԱՐԵՅԻՇԱՏԱԿ

Տ. ՊՕՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱԴՐԻԱՆԱՊՈԼՍԵՑԻՈՅ

Ի հասանել Պօղոսի խորհրդականք սիրով և հոգւով կապեցան ընդ նրմա և և վաստակէին ի գործն յառաջակայ. միարանք դուարձացեալք, թէ և յազբատութեան և և զուրկ ի մարմնաւոր մխիթարութենէ, այլ չորհ մեծ համարէին լինիլ Պօղոսի հայր և անուշ ինքեանց և և ոմանք ինքնայօժար կամօք մատուցին առ նա զմուրհակս և և զպահապարհս զրամս և և բարեմ ինչ ազատեցին յեկեղեցական: զարդուց: Սակայն Պօղոս և և խորհրդականք իւր կային ի տարապետի, զի այլազգիք քաղաքին անդադար մաշէին զսեմս զրանն խնդրելով պարզես և և աւայիտս, թէ՛ «Ի՞նչ պատրիարք և»: Եւ իրբու հաւանեցոյց զնօսա թէ չէ, այս ասեն. «Մեծ ոմն և և համբաւաւոր, չազատիս ի ձեռաց մերոց»: Եւ նորա տաղտկացեալ յերեսաց նոցա, և տ պատրաստել զանկողին իւր ի խորհրդարանի, և ի զայ առ նա ումեք բռնութեամբ ձեւանայր հիւանդ, մինչև և կարծել իւրոցն թէ արդարեւ հիւանդ է: ԶԳրիգոր և և զերեմիա վարդապետըս կարգեաց ժողովել տուամբաւ զարծաթեղէնս յեկեղեցեաց ի հայել: Եւ ինքն սկիզբն արար հատուցանել բաժնիւ զպարտս Աթոռոյն: Բայց անտանելի նեղութեամբ, զի պարտատեարք իրբու զմեղու խուսն ամբոխիւ կուտեցան ի գլուխ նորա. ոմանք հաճեցան մտանել ընդ բանիւ, և և ոմանք ոչ առին յանձն, և և զբամն զոր բերեալ էր ընդ իւր, առ ի՞նչ այնքան: պարտուց. որոյ վասն ձեռն արկ խորտակել զոսկեղէն և և զարծաթեղէն անօթս եկեղեցւոյ. այլ այնօքիկ և և չէին բաւական: 1829 ի 10 Յունւարի առաքեաց յեղիպոտոս զպղնձեղէնս և և զայլ կարասիս մաճառել ի ձեռն Կիրակոսի եպիսկոպոսի, յորոց զօյացան իրբ 20,000 զահեկան:

Մ Ա Ս Ն ԺԲ

Գրեցին միարանք Աթոռոյն առ հասարակ զիր բաղմակնիք, և և աղաչանօք ինդրէին վերադիւր զարձուցանել յԱթոռն զԳարբիէլ պատրիարքն ի մխիթարութիւն ինքեանց և և ի սիրտանս ձեռութեան նորին, զի չէր արժան թողուլ զԱթոռն առանց զահակալի և և զմիարանութիւնն առանց զլիտոյ (13 Մայիս): Թէ պէտ և և ինքն Պօղոս եպիսկոպոս ձեռն արկեալ և և կնքեալ էր զայն զիր, այլ յետոյ առանձին զրեաց առ Զարարիա Վարդապետ, ուր ասէ. «Թէ պէտ ցանկամք բարեկարգութեան Աթոռոյն, այլ առանց պատրիարքի ոչ յաջողի և և ոչ հաստատի, ուստի արժան է տալ նմա հրամանս զանալ յԱթոռն, որպէս զրեցին միարանք, զի չէր արժան անհոգութեամբ ի բաց թողուլ զբարեկարգութիւն միարանաց»: Եւ յուսայր նա զիւրաւ ստանալ զայն ի զալստեան նորին, և թէ մնայր անչարժ ի խոստմունս իւր մինչ էին ընդ Պօղոսի և և

մի լիցի վկնի դալստեան իւրոյ ժխտել և վարիլ ներհակօքն, որոյ վասն պարտ էր վերստին պատուիրել նմա ամիրայից, զի ամենայն գործս կառավարութեան Աթոռոյն համակամ հաճութեամբ խորհրդականաց վարել և մի պատրիլ իրբն և զտղայ ըստ առաջնոյն ի փառասիրութենէ կենցաղոյս: Ապա պատուիրէ ցուցանել ազգապետաց զայս զիր և զմիարանացն, և յանձն առնել ի կամս նոցա զանօրէնութիւնն ըստ վայելչութեան, յօգուտ Սուրբ Աթոռոյն:

Ի վերայ այսր խնդրանաց անօրինեցին ազգայինք զի Գարրիկէ Եպիսկոպոս պատրիարքական շքով և Չմիւռնիոյ առաջնորդութեան իշխանութեամբ նստցի անդ ուրախութեամբ և հանդարտութեամբ ժամանակ ինչ և ֆարութիւն Վարդապետի տեղւոյն երթալ առաջնորդ ի Պրուսա և ի Կուտինա (1829):

Ասացուք և վասն պարտուցն թէ զի՞նչ արար Պօղոս վկնի դալստեան իւրոյ յԱթոռն: Զառաջին բաժինս պարտուց մճարեաց բազում նեղութեամբ և տառապանօք 504,893: Այս է առաջին բաժինն և վասն երկրորդին վարանէր միշտ Պօղոս ի միտս իւր, թէ որպիսի՞ եղանակաւ ի զլուխ տարցէ դայն, զի առ նուազն 600 քսակ արծաթոյ պէտս ունէր, և ինքն դատարկացեալ էր ի զբամոց, և ի միւս կողմանէ տաղտկացեալ և զղուեալ էր ի բռնութենէ ալլազկեաց, և կոչէր զերուսաղէմ ասպարէզ ազահաց և զրկոզաց, և կամք իւրաքանչիւրոց՝ օրէնք. և բռնութիւն զիրաւունս ոչ ճանաչէ, և թէ՛ ուր բռնութիւն է, անդ շիք արդարութիւն: Զի չէր հանգիստ ինքեան և կառավարչաց Աթոռոյն յերեսաց կեղեքչաց. ոչ աղաչանաց լսէին, ոչ աղքատութեան ողորմէին, չզիտէին զայլ ինչ բայց միտն խնդրել պարզեւս, որում չէր կէտ և սահման, զի զոր կամէինն՝ զայն խնդրէին: Եթէ ընդզիմանային, բանային զրուես մեծամեծ միասուց յայտնի և ծածուկ, յորոյ վերայ զարմանայր Պօղոս, զի ոչ զիտէր, բայց ետես և ուսաւ: «Երանի թէ», ասէ, «յառաջագոյն ուսանէի, զի թերեւս ոչ անկանէի յայս վիշտ անտանելի»: Եւ զի վկնի ամսոյ ինչ պիտոյ էր նմա զբամ վասն երկրորդ բաժնի պարտուց, թող զայս սրք ոչ կամէին մտանել ընդ բաժնիւ, այսպէս տարակուսեալ մնայր Պօղոս Եպիսկոպոս:

Փոխանորդն երուսաղէմի Զաքարիա Վարդապետ ջանիւք և աջակցութեամբ ազգային երեւելեաց նորոզեաց զհրօթարտակն վասն պատարագելոյ Հայոց ի վերայ դերեղմանին Քրիստոսի: Զայս հրօթարտակ առեալ էր Եպիսկոպար Կաթուղիկոս ի ժամանակս իշխանութեան իւրոյ յերուսաղէմ: Եւ առաքեաց փութանակի զօրինակս նորին յԵպիսկոպոս առ Կիրակոս Եպիսկոպոս, հասուցանել յերուսաղէմ ի ցնծութիւն Պօղոսի և միարանաց, զրեալ թուղթ աղաչանաց և աւետեաց զի մի ի հակառակելոյ օտար ազգաց և ի ծանրութենէ պարտուց վիրաւորեցի, և մի երբեք տրամել թէ չէր ժամանակ այսպիսի իրաց: Ահա օր ընդունելի և ժամանակ փրկութեան, զի Աստուած է որ յաջողէ զամենայն յամենայնի: Գրեաց և Կիրակոս Եպիսկոպոս յԵպիսկոպոսն ընդ հրօթարտակին բանս ուրախութեան և աւետեաց, և աղաչէր զՊօղոս չեւանել յԱթոռոյն: Իսկ Զաքարիա Վարդապետ զամենայն զրեանս և զհրօթարտակս ետ հաւատարմին իւրոյ Կարապետին և ընդ մտասնելի սուրհանդակաւ և հան ի ճանապարհ հասանել ի Դամասկոս: Պօղոս Եպիսկոպոս սր ի վեր քան բոմարդկային միտս համարէր զայս գործ, զրեաց ի Դամասկոս առ Յովհաննէս աղայն և առ առաջնորդ տեղւոյն, զի ի հասանել Կարապետին անդ, ինամոյ զղուչացեալ հանցեն զիր ի կուսակալէն: Սակայն Կարապետն հասեալ ի մէջ Համա և Հոմա քաղաքաց, հարեալ ի խորչակէ մեռաւ, և զրեանքն ամբողջ հասին առ Յովհաննէս աղայն և անտի յերուսաղէմ:

Ընթերցաւ ի դատարանի հրովարտակ արքային առաջի բազմութեան եւ անտի ելեալ գնացին ի տաճարն Ս. Յարութեան : Հակառակեցան Յոյնք եւ Լատինք . դատաւորն անթերի կատարել զհրաման արքայի հրամայէր : Կատարեցաւ ամենայն ինչ եւ դատաջին փրկադորձ պատարագն մատոյց Պօղոս Արքեպիսկոպոսն՝ ծայրայոյն կառավարիչն Ս. Աթոռոյս, յամի 1829, յ2 Աւստեմբերի, Երկուշարթի գիշեր ժամ 7, յիշերով զհոգիս ննջեցելոց եւ զկենդանեաց օրհնեալ ազգիս Հայոց :

Այլ Լատինք բազում բնդդիմացան եւ ղեզերէին առ դրունս այլազգեաց խափանել զգործն Հայոց, այլ շահեցան եւ ոչինչ :

Իսկ Պօղոս թախանձանօք զբէր առ Զաքարիա Վարդապետ եւ յորդորէր զնա հասուցանել զսահմանեալ տուրս մարդաթուի վասն հատուցման երկրորդ բաժնի պարտուց, զոր կիսով չափ վճարեալ էր, զի մի ի ժամանակին պաշարեացի ի նեղութեանց եւ ի զգուանաց պարտատեարց, զի չունէր ակնկալութիւն յուստեքէ, եւ զոյք եկեղեցւոյ եւ վանաց սպատեալ էին, ուստի հարկ էր ծանուցանել զխաւորաց ազգին :

Պօղոս եւ Զաքարիա բազում աշխատութեամբ բարձին զղափար կոչեցեալ տուրքն եւ 75000 դահեկան տուրքն դատաւորին, զոր պահանջէին յետ լըրման ժամանակի իւրեանց իւր ծախս ճանապարհի :

Իսկ փոխանորդ Զաքարիա Վարդապետ զհետ պնդեալ էր սրտի մտօք լինել բաժանորդ ընդ Յունաց ի Գողգոթա, ի տեղի խաչելութեան Փրկչին, որոյ վասն խնդրէր յերուսաղէմէ զղաշնադիրն Սալահէտտինի, զի ի ժամանակիս նորին ի ձեռս Հայոց էր սրբաւայրն այն : Թէպէտ Պօղոս Եպիսկոպոս եցոյց նմա զիւրին ճանապարհ առանց այնր կատարել զգործն, զի արքայն Մահմուտ 1828 թուին հրովարտակաւ բաժանորդութեամբ վայելել սահմանեալ էր զտուր տեղիս, այլ Զաքարիա յեցեալ ի բանս զղաշնադրոյն, մատոյց զիւր ազաշանաց առ արքայ եւ խնդրեաց տալ հրովարտակ հաւասար բաժանորդութեան Գողգոթայն տեղւոյն ընդ Յունաց . եւ ի պատճառէ իմեքէ բարկացեալ արքայի հրամայեաց տարադրել զԶաքարիա ի Կիպրոս կղզին յաքսորս . եւ Զմիւռնացի Յովհաննէս Վարդապետն եկաց փոխանորդ ի տեղի Զաքարիայ :

Մինչ բացան ճանապարհք ուխտաւորաց եւ ամ բոտ ամէ յաւելոյր թիւ նոցա, Կարապետ Պատրիարք եւ ամիրայք ժողովեցան ի Պատրիարքարան ի 10 Հոկտեմբերի, ուր զկնի բազում բանից եւ վիճմանց ի վերայ ելեւմտից Աթոռոյն, սահմանեցին ի ժողովի անդ գրել եւ խնդրել ի Պօղոս Արքեպիսկոպոսն զի փութացուցէ զտուժար արղեանց եւ ծախուց Աթոռոյն ըստ ամենայն մասանց որոչ որոչ . զարդիւնս Ս. Յակոբոյ, Ս. Յարութեան, արտաքին վաճօրէից, կոնդակադրամ, նուիրակաց, ի վիճակս ժողովեալ ողորմութեանց, սակրս պարտուց եւ զզինս ի դանձարանէ Աթոռոյն վաճառեալ իրաց, այլովքն հանդերձ մի առ մի օրինակել ի մայր տումարէ : Նոյնպէս եւ զծախուցն, որ ինչ տուեալ են բղեշխին, քաղաքապետին, դատաւորին եւ այլոց, եւ որքան բաժնիւ պարտս վճարեալ են, եւ զայլ արտաքին եւ զներքին ծախս Աթոռոյն : Զայս ամենայն գրել եւ հաստատել կնքով Պօղոս Եպիսկոպոսի եւ խորհրդականաց, եւ ստաքել ի ձեռն խոհեմ եւ հաւատարիմ վարդապետի ումեմն, զի կարող լիցի տալ պատասխանի հարցմանց նոցին եւ լուծանել զտարակուսելի խնդիրս : Որոշեցաւ նաեւ ի ժողովի անդ պատուիրել, զի այլ մի եւս ստաքեացեն նուիրակուէն յարտաքին դաւառս, մինչեւ տնօրինեացեն զարժանն եւ ծանուցեն ինքեանց, զի հանդիցեն ժողովուրդք սակաւ ինչ : Յայս զիւր ձեռնարկ-

եալ կնքեցին նա ինքն կարապետ Պատրիարք եւ 15 դրամս ամիրայք 1830 յ30 Հոկտեմբերի :

Այլազգի դոնաւորներ տաճարին Ս . Յարութեան փքի փեղկն սրտաքին զբան միայն բանային : Չայս սահման եղեալ էր նա ինքն Սալահէտտին ի նախատինա քրիստոնէից , ի տիրել նորին երուսաղէմի : Ի ժամանակս ուխտաւորաց եւ յաւուրս հանդիսի տօնից շմային ժողովուրդք զերժ ի վտանգէ յեկանելն եւ ի մտանել անդ , մանաւանդ կանայք եւ մանկունք . որոյ վասն Հայք եւ Յոյնք ետուն զրել ի ձեռն դատաւորի քաղաքին ի Դուռն , զի հրամանաւ արքայի բացցեն զերկու փեղկս զբան ի կարեւոր ժամանակս : Սակայն ոչ ժամանեաց այն հրաման , մինչեւ տիրեաց Պաղեստինոյ փոխարքայն Եղիպտոսի Մէհէմէտ Ալի եւ որդին նորա Իպրահիմ փաշա ետ բանալ զայն , զինի սպրեւոյ ի վտանգէ մահուան : Զի ի 1833 թուին բարձութիւն մեծ էր յերուսաղէմ . միայն 7000 ողիք էին յազգէն Հայոց եւ աւելի եւս յօտար ազգաց : Յատուր ճրագաւորցի Չատկին ժողովեցան ի տաճարն Ս . Յարութեան ամենայն քրիստոնէայ ազգք սակս տեսանելոյ զհանգէս Լուսաւորեայի : Եւ եղև ի վտարի մոկեղինաց առաւել ջերմութենէ տաճարին , ժողովուրդն սկսաւ տաղնապիւ եւ Իպրահիմ աղաչէր զորս փրկել զինքն եւ հանել արտաքս . այլ ամենեւին անցք եւ ճանապարհ չիք : Չօրքն սկսան հարկանել զժողովուրդն հրացա՛մ իւր սակս ճանապարհի . բայց նոքա անկան ի վերայ միմեանց եւ եղև սոնակոխ , եւ հօգիւ զինուորքն հանին զԻպրահիմ յեկեղեցւոյ : Բայց ժողովուրդն սոնակոխ եղեալ մեռան 75 հօգի ի Հայոց եւ առաւել եւս յօտարաց . ուրախութիւն նոցա դարձաւ ի սուգ եւ ի տրտմութիւն : Չայսոսիկ զիականս բերեալ չարեցին ի գաւիթ եկեղեցւոյն Ս . Յակոբայ եւ եղև ողբ , կոծ եւ աղաղակ , մինչև չարիս մաղթել վանաց Ս . Յակոբայ : Սակայն յառաջագոյն Պօղոս Եպիսկոպոս յատենի ծանուցմամբ պատուիրեալ էր ժողովրդոց՝ ձերաց , պառաւանց , մանկանց , տկարաց եւ այլոց չերթալ ի Ս . Յարութիւն , այլ նոքա երբեք ոչ ունին մատուցին բանից նորա , յորմէ պատահեցան այսպիսի անակնունելի զժնջակ աղէտք : Յետոյ ի սազրելոյ Պօղոս Եպիսկոպոսի , Իպրահիմ փաշա ետ բանալ զդուռն զայն , եւ մինչև զայսօր բացեալ լինի յաւուր հանդիսից :

Մ Ա Ս Ն Ժ Գ

Մայրագոյն գործակալ Աթոռոյն երուսաղէմի Պօղոս Եպիսկոպոս , արդէն առանց սպասելոյ թաղսիտի կամ բաժնի , յարդեանց ուխտաւորաց հատուցեալ էր զպարտս Աթոռոյն , եւ յետ կատարելոյ գտօն սրբոյ պատեթին , առաքեաց ընդ ուխտաւորս տարւոյն ի Կ . Պօլիս զՏէր Կիրակոս Եպիսկոպոսն , յաղաղս կարեւոր գործոց Աթոռոյն , յանձն արարեալ նմա զտուժարս արդեանց եւ ծախուց վանաց , զորս բարձմ անգամ թախանձանօք խնդրեալ էին ամիրայք : Եհաս Կիրակոս ի թաղաւորեալ քաղաքն եւ զորս ի համբաւոյ յուսայն էր , ետևս աչօք իւրոյք զբարեկարգութիւնս ազգին : Քանզի ի շխանաւորք ազգին երկնէին հանապաղ ի միտս իւրեանց եւ փափաքանօք տենչային հաստատել ազգային ուսումնարան մեծ ի դատարարակութիւն մանկաւանդն , զի մի յստանախոսեան առ օտարս , եւ փոխանակ փարգապետութեան հայրենի եկեղեցւոյ ուսանիցին զդասնութիւն օտարին եւ զայլայլ սոխորութիւնս նոցին , որ ի սրմին ժամանակի սկսեալ էր տարածանիլ :

Եւ յարդունս ամել զայս խորհուրդ փրկարար , գումարեցան ամենեքեան առ Ստեփան Պատրիարք (1836) , ուր գտաւ Կիրակոս Եպիսկոպոս եւ փո-

խանորդ Յովհաննէս Վարդապետն . և ի ժողովի անդ հաստիքեամբ ամենեցուն սահմանեցաւ կառուցանել զուսումնարանն յԵրևանաքաղաք , ի տեղի խարխալեալ վանաց երուսաղէմի : Զբովանդակ ծախս տարեկան պիտոյից ուսումնարանին յանձն տոին իշխանաւորք ինքեանք հոգալ , բայց զչինութեան ծախսն հանել յերուսաղէմէ : Ապա խնդրեցին նախ յերուսաղէմէ ի ձեռն փոխանորդին 200,000 դահեկան ևւ առաքեցաւ փոխանակազրկն յԵրևանաքաղաքն առ Երեւելի վասնուսական Ստեփանէ Զիշինեան , զի ի լրանալ պայմանաժամին անթերի առցէ զգումարն յԱթոռոյն : Եւ յետ ամենայնի զրեցին իշխանաւորք զիր բազմակրներք առ Պօղոս Եպիսկոպոս յերուսաղէմ վասն այսր խնդրոյ . զրեցին նաև առանձին առանձին Ստեփան Պատրիարք , Կիրակոս Եպիսկոպոս և փոխանորդ Յովհաննէս Վարդապետ : Գրիգոր և Յովհաննէս ճարտարապետք թէպէտ և էին ի ժողովի ատա և կնքեալ զիրն , այլ առանձին մտերմարար իմն զրեցին առ Պօղոս , զարթուցանել զմիտս նորին ի գործադրութիւն խնդրոյն :

Եւ զկնի սուղ աւուրց սկիզբն արարին բնալ զհիմունս ուսումնարանին յԵրևանաք , ի տեղի որ կոչէր Վանք երուսաղէմի : Պօղոս Եպիսկոպոս կացոյց ի վերայ գործոյն վերատեսուչ զՊաղատացի Իսահակ Վարդապետ Տէր Գրիգորեան :

Բացաւ փակեալ դուռն Լատինաց ի Բեթղէհէմ , ի ներկայութեան Պօղոսի և եղև վերստին ոսմանկոս եկեղեցին Հայոց մինչև ցայսօր (1836) :

Այլ մինչդեռ տակաւին ի Կ . Պօլիս էր Կիրակոս Եպիսկոպոս , կոչեցին զնա ի Նոր Խան ի սենեակ Յովհաննէս աղայի , որ էր քուերորդի Բիշմիշեանի , ուր ժողովեալ էին միայն Քեահեայ ձանիկ , Բիշմիշեան Միքայէլ , և Երկանեան Յարութիւն ամիրայք : Եւ յառաջութեան անդ տեսին զհաշուոյ տուժար էլից և մտից Ս . Աթոռոյն ևւ բարուք զիտոզութեամբ ի նկատի առեալ վերահասու եղեն ամենայնի . ուրախ եղեն յոյժ ևւ զովեցին զխոհական կառավարութիւն Պօղոս Եպիսկոպոսի : Ապա հարցին ցԿիրակոս Եպիսկոպոս թէ յի՞նչ միտս են զլիսուորք միտրանաց ևւ զի՞նչ կամին առնել զյաւելեալ գումարն : Եւ նա արար պատասխանի . «Յաջողութեամբ Տեսուն յաւուրս ձեր ջանիւք Նորին Սրբազնութեան աղատեցաւ Աթոռն ի պարտուց ևւ յաւելլաւ ինչ . այլ այսպիսի աւուրք յաջողութեան ոչ մնան միշտ , զուցէ ի պատահիլ պատերազմաց ևւ այլ ձախորդութեանց նուազեցի թիւ ուխտաւորաց . յայնժամ հարկ լինի ի նկուսութեան պահու ձեռն արկանել յայն գումար : Եւ յայտոսիկ Երկուս ամս բազում տեղիք շինեցան յերուսաղէմ , ի Յոպպէ , ի Գամասկոս ևւ տակաւին պէտս ունիմք բազում շինութեան ևւ նորոգութեան» :

Այլ նոքա պատասխանի ետուն . «Ոչ բարուք թուի մեզ այսքան զրամոյ մնալ անգործ յերուսաղէմ . հայեցեալ ի փոփոխմունս ևւ ի պատահմունս աշխարհի , զուցէ մատենոցի ի ձեռս անխոհեմաց ոմանց , որպէս Երբեմն վասն քակման Բեթղէհէմի դրան վատնեցիք աւելի քան 200 քսակս զրամոց , զոր վերստին բացին : Ուստի մշտնջնանաւոր մնալոյ այնց զրամոց կամիմք առնել տրնորէնութիւն ինչ ևւ շահեցուցանել» : Եւ զկնի այսր խորհրդոյ զրեցին զիր առ Պօղոս Եպիսկոպոս յերուսաղէմ : Եւ զի մի անկցի այս խորհուրդ ի բերանս այլոց , զայն զիր ետուն զրել Կիրակոս Եպիսկոպոսի . յայլ զիր ստորագրեցին Երեքին իշխանքն : Գրեաց ևւ ինքն Կիրակոս առանձին թուղթ առ Պօղոս Եպիսկոպոս , յորում յորդորէր զնա լինել համախոհ կամաց ևւ խորհրդոց նոցին , զի չէր ինչ տեղի կասկածանաց : Եւ յետ բազում բանից յաւելլու ասել . «Գիտես , տէր իմ , Եթէ չէք տեսեալ զցուցակ զանձեան զրամոց հոգալոյ Տ . Գրիգորի Եղթայակիր հայրապետին , ոչ ի սպաս զիտէար , զի չիք ուրեք յիշատակութիւն ինչ . այլ ո՞ր մնաց այն զրամ , զի՞նչ եղև , առ ի՞նչ վատնեցաւ , ոչ

ոք գիտէ՞ : Ապա զբէ կարգել զմին միւթէ վէլլի Աթոռոյն և Կերկուան նազր և վերակացու , տեսանել զհաշիւն և հոգալ զգործս Աթոռոյն : Այլ այս խորհուրդ , որպէս երեւի , ոչ եհաս յարդիւնս յայնժամ , զի բացեալ էր դուռն խորհուրթեան և հակառակութեան ի մէջ ազգաց , և Պօղոս բազում դրամոց պէտքս ունէր և չէր հնար հանել զայն արտաքս :

Ապա , յետ բազմադիմի ծախուց , խորհուրթեանց և կոտուց , որուչեալ հաստատեաց Շաթր գատէ Արիֆի էֆէնտի ի սպառ կործանել զշինուածս Հայոց ի վերայ Համբարձման տեղոյն . ապա ժողովեցան անթիւ բազմութեամբ Յոնք և Լատինք և Արարացի Փէլլաճք , քակեցին և կործանեցին զբոլանդակ շինուածն և ոչ թողին նշմարանք ի շինութենէ Հայոց և այսպէս անխոհեմութեամբ յումպէտս վատնեցան այնքան քակս զբամոց և շարաշար աշխատութիւն , և եղին զայն յոտաջին աւերակ վիճակին ի 11 Աւգոստեմբերի 1830 ամի :

Ճեմարանն որ կառուցաւ յիւսկիւտար ծախիւք Ս . Աթոռոյն , կամեցան իշխանաւորք ազդին զի Աթոռն նպատակեցէ նաեւ օրական ծախուց նորին . ուստի խորհրդով սահմանեցին զի փոխանորդն Երուսաղէմի անխափան վճարեցէ յերաքանչիւր ամիս 10,000 և ի տարին 60,000 դահեկան . և վասն այսր ժողովք ամիրայից գրեցին առ միարանութիւնս Աթոռոյն և ի մասնաւորի ճարտարապետ Յովհաննէս ամիրա առ Պօղոս Եպիսկոպոս , տալ յարգել միարանութեան զխորհուրդ ամիրայից և շահել զմիտս նոցա : Իսկ Յովհաննէս Եպիսկոպոս զուշակելով զապագայ վտանգն , բազում անգամ զգուշաւոր բանիւք ազդ արար խորհրդականաց Աթոռոյն , ազաշանօք և կամ աղերսապրով անհետ առնել զգումարն զայն և ի սպառ բառնալ զյուժ զայն ծանր ի պարանոցէ Աթոռոյն : Սակայն այսոքիկ բանք ոչ միայն չեղեն լսելի և ոչ եղիտ յաճողութիւն , այլ առաւել ևս ծանրացաւ , զի զկնի ժամանակի եհաս տարեկան արոց զումարն 120,000 զոր վճարէր Աթոռն ամ բոս ամէ , և զժոււարին եղև այնուհետև բառնալ զայն բեռն ի թիկանց միարանութեան յանձնողութենէ ժամանակին : Եւ մինչ այսպէս տարուրերեալ ծփէին խորհրդականք ի վերայ այսր խնդրոյ թէ որով եղանակաւ հնար իցէ ապատել յայդր պարտուց , եհաս առ նոսա այլ իմն զիր ի զլխաւոր ամիրայէ ումեմնէ , յոր թախանձէր զնոսա վճարել զմնացեալ պարտս շինութեան ճեմարանին :

Ձկնի վախճանի Գարբիէլ Պատրիարքի , ծայրագոյն կառավարիչ Աթոռոյն և խորհրդական հարք գրեցին ի Կ . Պօլիս առ պատրիարքն և առ զլխաւորս ազդին , ծանուցանելով զմահ Գարբիէլի և զթափուր մնալն պատրիարքական Աթոռոյն . գրեցին զանուանս Եպիսկոպոսաց որք գտան յայնժամ ժամանակի ի վանս Ս . Յակովբայ , եղին նաեւ զանուն Յակոբ Եպիսկոպոսի Պատրիարքին Կ . Պօլսոյ , և յայտ արարին թէ յեպիսկոպոսաց աստի զո ոք և բնութեցէ ազգային ժողովն ի պատրիարքութիւն , հաճելի և բնդունելի է միարանութեան : Չայսոքիկ գրեանտ առաքեցին ի թաղաւորեալ քաղաքն ի ձեռն Գաղատացի Սահակ Վարդապետի :

Իսկ զլխաւորք ազդին ընթերցեալ զգրեանս , ծանեան զամենայն իրս և ձեռնարկեալ ի գործ բնորոթեան , բնութեցին նախ զԻրակոս Եպիսկոպոս . այլ նա կանխագոյն պատրաստեալ զհրաժարական իւր , տուեալ էր Սահակ Վարդապետի : Եւ ի լինել բանից ի վերայ նորա , մատոյց զայն թուղթ ի ժողովրն , և նոքա բնկալեալ զայն , բնութեցին զՉաքարիա Եպիսկոպոս ի Կոլր գեղէ Կարօնոյ (1841) :

Մ Ա Ս Ն ԺԳ

Պօղոս Արքեպիսկոպոս Գրեղորեան Ազրիանապոլսցի, զորոյ զինաստորութիւնն գրեմք, աշակերտ Պետրոս Պատրիարքի Եւզոկիացոյ, յետ մասնանի նորին յաղագս պարտուց Ս. Աթոռոյն զնացին չորս վարդապետք, յորոց մին էր ևս Պօղոս, ի Կ. Պօլիս և յայլ քաղաքս դտանել օչնութիւն: Սա դասնայ յԱթոռն (1805). վերասին երթայ ի Բիւզանդիոն, և ապա նուիրակ ի փիճակն Չմիւռնիոյ. հասեալ ի Միսլիճ, հրաւիրի լինել փոխանարդ ի Կ. Պօլիս: Մայրապոյն կառավարիչ Երուսաղէմի Աթոռոյն, ապառ ի պարտուց լղատարք Աթոռն, հանդիսացեալ իմաստուն անեսս, խոհեմ և հանճարեղ կառավարիչ:

Ի ժամանակս պատրիարքութեան Չաքարիայ կացին աչքն ի տեսութենէ, բայց դարձեալ ամենայն ինչ ակնարկութեամբ նորին անօրինէր: Եւ յետ մասնանի Չաքարիայ, ի սպաս նուազեալ ի զօրութենէ և բնկեալ ի բողոմամեայ ծերութենէ հասակին, անկաւ ի մահիճս իօթ, ուր համբերութեամբ և կաց ամս իրբև ևօթն, պարապեալ յաղօթս և ի փառաբանութիւնս Աստուծոյ բնդ պաշտօնէից և սարկաւապաց իւրոց: Ջերմեանդ ի կրօնս, պարկեշտ ի վարս, ժիր և աշխոյժ յուսմունս և ի գիտութիւնս, վարժ և հմուտ ի քաղաքական և ի տնտեսական յանձանձանս, և այսպիսի քաղաքավարութեամբ հասեալ ի խոր ծերութիւն, հանդես խաղաղութեամբ ի Քրիստոս ի 4 Մայիսի 1853 ի հասակի 90 ամաց, զորոյ զմարմինն բարձեալ թաղեցին ի դաւիթ և կեկեցցոյ Ս. Փրկչի, ի կարգս պատրիարքաց Ս. Աթոռոյն: Թողեալ յիշատակ և կեկեցցոյ զերիս հատոր գիրս կուէցեալ Չանագանուքիմի Էիմզ Գարուց, համառօտ պատմութիւն Հին և Նոր Կտակարանաց, հանդերձ բարոյական յորդորանօք գրեալ ի բարբառ տանկաց, և զգիրս Թանգարան Խրատու, յոճ հայկական պարզ բանիւ: Համառօտաց նաև զայլ գիրս և զմեկնութիւնս Ս. Գրոց, ձեռագիր: Բաղում ևն զորձք սորին, այլ զորով արտաքոյ նպատակի մերոյ, թողաք ի բաց:

Աբղ, զհակիրճ կենսագրութիւն անոն երեւելոյ, Պօղոս Պատրիարքին մեծին Բիւզանդիոնի, քաղեալ ի ժամանակակից պատմագրացն Հայոց, իմբարդեցի ի մի մայր յայտ ասպարէզ բնդարձակ և յայնձաւայ սպիտակափառ զաշտի ի գիւրութիւն փափաքող բնթերցանելաց, խորշելով յերկարութենէ և ի տաղտկացուցիչ բանից, և ոչ հաւանութեամբ զհետ զնացի անհասկանալի և կցկտուր ոճոյ, բանից, որ անաւել համառօտութենէ բնթերցողն զկարէ իմանալ և ի միտ անուղ զրան և զիմաստս զրուածոյն: այլ զմիջին և զարքունականն կալեալ շաւիղ և ճանապարհ, անխտոր բնթացիւք զորոճեցաք ի զիր զքաղաքական, զկրօնական և զտտանին զորձանութիւնս սորս, զի մնացէլ յաւերժական յիշատակ ազդատոհմին իւրոյ և Ս. Աթոռոյս և համայն օրհնեալ ազգիս: Եւ զիրահաս ցանկացողաց զիտել և իմանալ թէ որպիսի ոք էր նախկին պատրիարքն Բիւզանդիոնի Տ. Պօղոս Արքեպիսկոպոսն, թերևս կարող լիցի յինչ ինչ կէտս օրինակ անուել ի ցանկալի և օչտակար զորձոց նօրին, և այնպէս անտեսել զկեանս իւր յայժմ կենցաղոյս, ապաւինեալ ի շնորհս ամենասուրբ Հոգւոյն, բնդ որում Հօր և Որդւոյն Միածնի փառք, պատիւ և երկրպագութիւն այժմ և միշտ և յախտեանս յախտենից ամէն:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԵՊՍ. ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՅ

1898 Մայիս 9
 յերուսաղէմ
 (Շար. 5 և վերջ)

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԲԱՂԴԱՏԻ»

Նոր Զուգայի Ամենափրկիչ Վանքի թանգարան-մատենադարանում համար 596ի ներքոյ գտնուած է մի զրչագիր, որ պարունակուած է Բաղդատի պատմութիւնը:

Ձեռագիրը կրուած է «Փոքրիկ վէպ Այդինեանց» խորագիրը եւ զրուել 1872 թուին, Ղուկաս Այդինեանցի կողմից. նա խօսուած է Բաղդատ քաղաքի հիմնման մասին եւ տալիս մի շարք պատմական անցուդարձեր:

Ձեռագիրը զրուած է նոր ժամանակների նտարցրոյ, ունի 22·2×17·7 ս.մ. ծաւալ եւ պարունակուած է 68 թերթ: Սկզբի 13 թերթերի վրայ զրի են առնուած Մուհամեդի եւ Ալու կողմից հայերին տրուած հրովարտակների զբարար թարգմանութիւնները, ապա թերթ 14—59ը Բաղդատի անցքերի նկարագրութիւններն են, իսկ մնացեալ մասը՝ խրատ, ողբեր եւ այլ խառն նութեր*:

Առջն բնագիրը որ պատրաստել ենք մի քանի տարի առաջ, հրատարակուած ենք կրճատումներոյ: Յայտուել ենք սկզբի, աւելի ուշ ժամանակների զրած հրովարտակների թարգմանութիւնները եւ որոշ զլուիներ միջին մասերից՝ որոնք վերաբերուած են այլ յարանուանութեանց կողմից յարուցուած կրօնական պայքարներին եւ նրանց հասցրած վնասներին:

Ինչպէս «Փոքրիկ վէպ Այդինեանց»ի հեղինակ Ղուկաս Աբրահամի Այդինեանցն է յիշուած իր պատմութեան մէջ, ծնողները զաղթել են Տիգրանակերտից եւ հաստատուել Բաղդատում, ուր ծնուել է ինքը 1799 թուի Փետրուարի 14ին: Չրագուել է վաճառականութեամբ եւ իր լսածն ու տեսածը Բաղդատի եւ տեղի հայ կեանքի մասին 1872 թուին զրի է առել որպէս «Պատմութիւն Բաղդատ»ի:

- Բնագրից ներս կատարել ենք հետեւեալ փոփոխութիւններ.
 - ա. Բացել ենք բոլոր կրճատագրերը:
 - բ. Սովորաբար ստորակէտին փոխարինող բութերը վերցրել ենք:
 - գ. Պակաս եղած տառերն ու հայկական թուականներին համապատասխանող փրկչական թուականները, աւելացրել եւ առել ենք կոր փակագծերի մէջ:
 - դ. Սխալահնչիւնոյ զրած տառերի կողքին աւելացրել ենք ճիշդերը եւ առել անկիւնաւոր փակագծերի մէջ:
 - ե. Եղած աննշան տառասխալները, ինչպէս՝ յոյի (հոյի), օրօք (օրօք), Յերբորդ (Յերբորդ), ուղղել ենք:
 - զ. Այլ ուղղագրութիւնները, ինչպէս դերանուանների վերջին յն, թողել ենք նոյնութեամբ եւ որոշ բառերի մասին տղարտակելու տրուել բացատրութիւններ կամ զրել հարցական (?) նշան:

Յոյս ունենք որ սրա հրատարակումը օգտակար կը հանդիսանայ բազմաթիւ հայ զաղթօջախների պատմութեամբ հետաքրքրուողների համար:

* Ձեռագրի լրիւ նկարագրութիւնը տրուած է նոր Զուգայի «Ձեռագրացանկ»ի Բ. հատորում, համար 62, էջ 78 (Վիեննա, 1972):

Փ Ո Ք Ի Կ Վ Է Պ Ա Յ Դ Ի Ն Ե Ա Ն Յ

Որում բացատրի առ վերծանողաց նախասկիզբն գառիք կառուցմանն Բաղդատուոյ եւ յապայ գիանգամանս անցից նորին:

Ոչ որպէս թէ կամիմ ներբողելով վերահամբառնամ զբարեվիճակ վեհապետութիւն իշխանաց նորին՝ եւ ոչ հրատարակել զչարադէպ արկածից քշուստութեան հանգամանաց նորին, զի ոչ է ինձ փոյթ:

Այլ մանաւանդ անձկամ որ յապագայի վերծանողքն տեսրակիս՝ զի ծանիցեն թէ, որպիսի եղեն բնակութիւն քրիստոնէից ի նմայ՝ և որպէս կառուցումն եկեղեցեաց նաեւ որպիսի բարեվիճակ էաք նախ եւ ընդհակառակս նորին՝ այժմէն ծախ և գամ քան զգամ՝ առ ընդ ծախ:

ԱՌԱԿ ՆՄԱՆՈՒԹԵԱՆ ԱՌ ՍԱԿՍ ԻՄՈՅ ԹԵՐՈՒԹԵԱՆ ԶՈՐ ՕՐԻՆԱԿ

Յորում էք ի գաւառի միում¹, իսկ թեմական քահանայ մի խաժամութ աղիտաց ոմն, հանդուճանման որպէս զիս. եւ ի միում աւուրցն պատշաճի ըստ խնդրանացն բանասիրաց ոմանց՝ կասեցուցանեն զնայ ի յատենին առ սակս քարոզելոյ² ժողովրդոցն, բազմականաց եւ ցուպ մի եւս տուեալ առ ի ձեռս նորին, ըստ օրինակի գաւազան վարդապետաց: Եւ նա՞ ժամ մի անթար լուբեան կանգնեալ առ ընդ յատենն: Ըմբերանեալ անմասնէ³, որպէս թէ քարոզելոց է խղճալին, քանզի դիտէր եւ ոչինչ, եւ ապշեալ⁴ կանգնէր զինչ ասելն չդիտէր, որպէս զիս: Յայնժամ ոմն ի բազմականաց ընդոստեալ անտի եւ ասեց ցնայ. ⁵«Արդ տէ՛ր տէ՛ր առա մեզ զի տեսցուք զինչ է առարկութիւն բանից քոյ զի լուիցուք»: Եւ խոյն բացաւ զբերան իւր բարբառելով եւ ասէ. «Օրհնեալ ժողովուրդ, զի՞ ասէք զիս թէ առա. ո՛հ, ո՛հ, արդ զի ունիմ ի սրտի ասելոյ շատ բան, սակայն ի կոկորդի իմում արտարեբելոյ, չունիմ բնաւին զօրութիւն միանդամայն, զի արդ եւ իցէ եւ այլ եւ այլն»:

Եւ արդ հանդուճանման ըստ նմին օրինակի, մեղսամած յօբինոյ վիպոյս ունիմ ի կոկորդի բարբառելոյ շատ բան, սակայն զբիշս անգոր է համանդամայն: Ուստի աղբրեմ զի մի ոք անդոստեացէ զլօծն անձանց վերծանողաց անհարթութեան բանիցն տեսրակիս, վասն զի վախազիմ առ ընդ սակս գլեատագայի հանդամանաց եւ զիմ նուստութեան իսկական ծննդեան բնաւորութիւն զեկուցանել, ընդ իմում կնատ կարեօք եւ անհեթեթ իմատալիք, ուղղակի անուղղակի աւանդել առ ի ձեռն իմում ժառանգաց եւ առ սակս որոց բանասէր ընթերցողաց:

Նաեւ ստուգարանեմ առ ի պետս զերծուցանելոյ զիս ի պարտուց սրտութենէ, զի իսկական հեղինակութիւն վիպոյս ոչ է ընդ ամենայն մայր բա-

1 Ֆեազիք՝ միւմ (եւ բոյորն աղպէս):
2 Ֆե. քարոզելոյ:
3 Ֆե. նայ (եւ աղպէս):
4 Ֆե. անմասնէ:
5 Ֆե. ափշեալ:
6 Զակերտները մեր կողմից են:

նիցն յինէն, ալլ զհետեւեալ ճտից, առաջին զմասն առարկայից մինչև ի դաստեան Սուլթան Մուրատիան Աբքայի ի վիպէ վիրպասանաց իրազեկ լեալ իսկ յետագայեալ իմաստն բանից աներկեան իսկապէս յորոց, զորն ի մասանց ի նախնեաց իմում ընդ ունեկամբ լուեալ եւ զորն ընդ իսկ ականասես աշօք իմ տեսեալ:

ԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՎԻՊՈՅՍ ԱՌ ԸՆԴ ՍԱԿՍ
ԵՂԵԼՈՒԹԵԱՆ ԲԱՂԳԱՏՈՅ

Ըստ ժամանակագրութեան Առաքել պատմադրի եւ առ ընդ ալլ հետադոտեալ իսկութեան խնդրոց եւ ընդ կարեկցութեամբ նոցին իրազեկ լեալ անցից եւ ըստ այնմ գտեալ տիտոյքն հակիրճ համոտարար, առ ընդ յետագայի շծիւ վերծանողաց բացատրեմ: Այսինքն սկսեալ ի յերեւմանէ Ծեխ Մահմետի եւ ընդ աջորդաւք նորին, որում ի Աբքայ եւ Մաղինայ եւ ընդ երկիրն Գամակոսի ընդ ամենայն իշխանութիւն սոցին, իրբեւ իննսուն եւ եօթն ամ իշխեալք եւ կատարած նոցին ի Գամակոս բնաջինջ լինելով սերունդն հուսկ յապա փհահին ամիրապետութեան առ ի ձեռն Բ(ա)նի Աբպասեանց եղև, որում սյր էին իսկ արեանակցեալ հարապատ սերունդէ հօրեղբօր որդւոց Ծեխ Մահմադի սերացեալք, եւ էին եղբայրս երկուս ի մի հօրէ, յորոց անունն անդրանկի Ահմադ ըլ Սաֆֆահ եւ կրտսերոյն Մանուտ Գաքանքի մականուամբ յորջորջեալ, եւ ըստ այնմ ամիրապետութեան ժառանգութիւն Բնի Աբպասեանք տիրապետեալ վայելեցին առ ընդ ժամանակ մի:

Ըստ որում Ահմադ Սաֆֆահն անդրանիկ գլով իր բերք ամ իշխեաց առ ընդ երկիրն Բարեթնի—Քուֆայ յորջորջեալ տեղոյն, որում որ նարուզոտոնսորն իշխեր, փոխանակն Ահմադն իշխելով, տարածամ զբաւեցաւ ի կենաց: Եւ յապա ժառանգութիւն եկաց առ վասն Մանուտ Գամակոսին. եւ զՄանուտն յետ կատարման եղբոր սգոյն զգածեալ զայրապետութեամբ առ վասն զբաւման կենաց եղբորն իւրոյ, ուստի ակն ոչ զօրելով չուս առեալ ի սահմանէն Քուֆայէ անդուստ ըստ այնմ թափ առեալ, մոլորեալ, շրջակայելով առ ընդ զաշտոն եւ ի լրումն ի մի հարիւր երրորդի ամս ընդ ամենայն իշխանութիւնն մահմետականաց թւոյն եկն եւ եհաս առ այդր զաշտի. եւ ի յանդիմանն Բարեթնի յայս կոյս գետոյն Եփրատայ, առ ընդ եղերն Ասիոյ, յորում եւ էր անտառ մի ահագին, եւ ընդ տաղաւարաւ սակաւ մի զետեղեալ ընդ բանական հանգեաւ առ այդր տեղի, իրբեւ ետես զքաղցրաճաշակ ջուրն Տիգրիս գետոյն Ասիոյ եւ զառողջարար յօդն. եւ զբարձրեալ տեղիսն շինածոյ հաւանեալ ընդ այնմ յոյժ, եւ հաճեցաւ ի մտի առ ընդ այդր բնակիլ եւ հաստատել քաղաք մի եւ զաթոս պետութեան իւր առ այդր, յորում եւ լցաւ հարիւր վաթսուն երրորդի յամս թւոյն հայոց: Եւ մինչ էր ի հայթայթանս զայս, ահա եւ ի շրջակայելն նորին զորաց ի յանտառի, եւ զաին զոմն յոյժ ձերունիացեալ ընդ աւուրքք ի քրիստոնէիցն յազգէ Քաղզէացւոց փափաղաւանից, զի ճղնէր առ անտ ի զոյ անձառի միոյ. եւ իսկոյն լուր ետուն առ յիշեալ Մանուտ ամիրապետին, եւ Ամիրն եւս անմիջապէս կոչեալ զնայ առ ինքն, եւ զկնի հօլով բանից եհարց ի նմանէ զխորհուրդն զայն, զոր խորհեալ էր ի մտի. եւ բղձգնաւորն եւս մարգարէական հոյով զկարեւորութեան աւետեաց լուրն ետ առ նմայ. եւ ընդ այնմ բանի զուարճացեալ եկաց առ ընդ անդր եւ հաստատեաց զաթոս իշխանութեան իւր, եւ բնակեցաւ, եւ սակաւ առ սակաւ եղև քաղաք մի բարձրաճամբաւ աննման:

Ուստի եւ անդր խալիֆայն ընդ ճղնաւորի մտեմացեալ յորդորելով

արտօնութիւնն եւ ճգնաւորին, զի եւ բերցէ յազգատոհմէ իւրոց առ ընդ այդ բնակիրւոյ, եւ ձեռակերտեալ շինեցեն բնակարանք եւ եկեղեցիք եւ դամենայն պիտոյն իւրեանց, զոր ինչ եւ ցանկացեալ կամեցեն: Ըստ այնմ եկին եւ կուտեալ բազմանալով քանի մի եկեղեցիք, եւ յատուկ եւս մանասզր կրօնաւորաց վանդ, կառուցանելով ճոխացեալ ընդ բազմամիջոց ժամանակ, իբրեւ 550) ամք երջանկարար վայելչանային, մինչեւ ի դարստեան աշխարհակործան թաթար, չէնկիզ Հալաբուխան կուպաշտն, որում խողխողեաց զիտճալեացն, ընդ ամենայն մասմեաականօք հանդերձ:

Եւ նախքան զանցից տաղնապիցն հալածման յորմէհետէ, որում էր մինչդեռ յաւուրցն իշխանութեան Մանսուրի, եւ էին նոքայ եւս ընդ մէջ բարօրեայ վիճակի երջանկութեան. իբրեւ եղև զյրբումն կենաց ճգնաւորի, մարմինն հանդիսիւ յարդանօք ի յատուկ հաստատուն տեղի փառաւորապէս ամփոփեն, որոյ ըստ աստիճանն նախնեաց որում ի շուկայի հնամասնաց, ի սենեկի միում, եւ ի ծոց արկղւոյն ամփոփեալ, եւ ընդ քողով ծածկեալ տապանն, որ եւ մինչ ցարդ բաց երեւակի կայ երեւեալ պարզապէս, որում եւ մասմեաականքն եւս իւրեանց իմամ կարծելով, կանդնեն առ վասն հողւոյն Փաթհայ՝ եւ կարդան տգիտութեամբ. բայց միայն ո՛ր լինելն մեք զիտեմք:

Արդ որոյ ազապաւ տեղոյս կոչումն Բաղդատ յորջորջեցաւ զայն եւս ի հետակայի թերթոյն, առիթ նորին հարկ վարկանեմ սակաւ ինչ բացատրել, քանզի ի բնէ անտի երկիրն անպատուար զոլով, զանունն քաղաքի, ոչ կոչիր Բաղդատ այլ Զաւրայ, այսինքն անտառ:

Որովհետեւ ի դարոյն խալիֆայից, որպէսզի վիպասանքն, ի մատենիս իւրեանց պատմեն, տարբարդտապէս ի նուազիլ թաղաւորութիւն մերացնեաց, եւ որում օր ըստ օրէ ընդ արծակ պերճանօք յառ(ա)ջադիմութեամբն մասմեղականաց, ժամանակ առ ընդ ժամ(ա)նակաւ յաղթահարեալ նուաճելով ի մերազնից ոչ սակաւ բազմաթիւ հոգունց ի Հայաստանէ ձերբակեալ զերիքն կաշկանդելով զումարեալ են առ ընդ այդր տեղի. արդ եթէ ոք ցանկացի առարկայն վերձանիլ, ապաքէն ուսցի ի պատմութենէ մատենիցն Հայոց, եւ սղբալով աւաղեսցի, առ վասն շարաշար հալածանաց նոցին, որք եւ ընկալեալ են համբերութեամբ առ ի փառս հաւատոյն Քրիստոսի եւ արժանացեալք առ ընդ երկնային խորանս եւ փառացն լուսոյ:

ԱՌԻԹ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆՆ ՔԱՂԱՔԻ

Թէպէտ եւ բազմամիջոց ամք էր ի յօրէ անտի յորում ամօռն խալիֆայութեան հաստատեալ կայր ի յանտառ յորջորջեալ տեղոյն: Սակայն անուն քաղաքի Զաւրայ կոչիր, մինչդեռ տակաւին չեւ եւս էին ձեռակերտիք բերդ եւ պատնչաւ շրջապատեալ զնայ: Յորժամ վերոյիշեալ զերիքն ի Հայաստանէ ամին առ ընդ այդր, յայնժամ մշակ ձրի գտեալք, ուստի եւ սկսեցին ըզխողճալի զերիքն վարել առ ի պէտս աղիւսարկութեան դործոց եւ միտեալ հպեցան հիմնարկութեան նորին պարսպոյն շրջափակեալ ամբացուցանելուս եւ ընդ դամենայն պիտոյն քաղաքի պատկանապէս աղօթատեղիք զեղեցկազարթ բուրդ եւ աշտարակօք յերիւրեալ, ըստ տպաւորագոյն մայրաքաղաքաց զերացանց ընդ ամենայն մասամբ փառաւորապէս:

Եւ յորժամ հպեցան հիմնարկութեան պարսպոյն ընդ բազմամիջոց ամօք թոպեալ ընդ աշխատանօք, հայթայթէին եւ ոչ աջողէր առ նոցայ ամբա-

1 ննջեցեալի համար յատուկ ազօք (Լ. Մ.):

փակ պարփակեալ զպարխսն անվկանդ, որպէս զորօրինակ հիմն ի վերայ աւազուոյ եւ զոր ի դիմաց կապմէլին ի թիկանց փուշը եւ զթիկանցն եւս հանդուհանման, նոյնպէս եւ յաջմէլնն ձախմէլ եւ ի ձախմէլնն յաջմէլ, բոս նմին օրինակի. եւ զի ոչ կեար հաստատուն հիմն ի վերայ հիման եւ ոչ քար ի վերայ քարի, եւ ոչ եւս կարէին ի մի հնարք կասեցուցանեն նորին, ուստի աղչեալ կելոյ մինչեւ դերեւեցան ընդ ամենայն ճարտարութիւնքն զկարեւոր խնայանից, բոս այնմ եւ յապայ առ յապայ հետազօտեալ հետեւեն առ ընդ մոզուցն եւ զխնայանաց, խնդրել զճար եւ զկարեւորութիւն նորին: Եւ նոքայ եւս վրձսեն ասելոյ թէ ի զուր է աշխատիլն ձեր, եթէ ոչ ի սեւից մարդոյ կենդանեաց զույգ ի մօրէ երկուորեակ եղբարք, ամփոփեցի ընդ ի ներ հիման ոչ է հնար բրնա կանգնիլն պարսպի: Եւ յայնմ վայր հրամայէ սաստկարար խալիֆայն արարէք փութապէս բոս հրամանի մոզուց, եւ բոս այնմ չոքան պաշտօնատուրքն անմիջապէս ձերբակեալ ամին, երկուս մանկախ ի մի մօրէ զույգ երկուորեակ եղբարք, բռնարար կասեցուցեալ ի վերայ սաից եղին ի ներ հիման եւ ամբափակեալ հաստակցին ի վերայ մանկանց զհիմն պարսպոյն, ի ներկայութեան տկանատես մօրն մանկանց խղճալոյ նոյնոց(?) ի նոյնոց, զմին յարեւելեան եւ զմիւսն յարեւմտեանց, եւ բոս աստիճան անհատից թէ յորմէ անդրէն հաստատ եկաց զպարխսպ եւ պատնէչն քաղաքի, բայց ամանք եւս անհատից այլ իմն կերպ պատմեն զի արդ եւ իցէ: Եւ էր անուանք խղճալի մանկանց ընդ կական հեծութեամբ կոճելոյ կոճէր զկուրծս, վազէր յարեւելից առ յարեւմուտս, եւ յարեւմտից առ յարեւելս քաղաքի, ողբալոյ աղաղակ բարձեալ, կականմամբ եւ ասէր. ո՞ւր էք Բաղ եւ Դատ, սիրելիք իմ սրբիք, ո՞ւր էք, ո՞ւր եղին զձեզ. ուստի ի յօրէ անտի զանուն քաղաքիս անուանեալ յորջորջեցաւ Բաղատ:

Եւ մինչդեռ զի էին ընդ ամբափակ եւ զեղեցկակազմ շինուածոց, բաղմաճուլոյ ամօք զբողեալ ընդ կոչկոճիւս աշխատանօք թոպեալ Հայաստանի զերանելի զերեացն նորայնոց, ոչք արեամբ զնեալ Տեառն Յիսուսի էին, եւ մինչ զի տանջանօք զնոսայ եւ էլ աղաղակ նոցին առ ընդ վերին յարկն բարձրելոյն. բոս այնմ ահա եւ անդրէն ի վերուստ էջ ցասմամբ բարկութիւն Աստուծոյ ի վերայ արեամբ կասեցուցեալ երկրի եւ զհիման նոցին, մանաւանդ եւ առ վասն վրէժխնդրութեան ծառայիցն Քրիստոսի զոր բնաւ երբէք ի րատեղծմանէ աշխարհի մինչեւ ցոյսօր, չեւ եւս էր զիսկալ տպաւորագոյն նման ամին եւ ոչ մի:

Աղէ ունկնդիր լերուք այժմ եւ տեւէք, քանի՞ պատիժ, քանի՞ պատուհաս:

ՅՈՐՈՅ ԱՌԱՋԻՆՆ Է ՊԱՏՈՒՀԱՍԻՅ

Որում եղև ամիրապետութեան Մոթրհարն Բլլայ յորջորջեալ ի վերջին խալիֆայի որոյ եւ էր սայ ի տոհմէ Բնի Արսլանեանց եւ ի սերունդէ Մանուսի Դալիմաքոյն, մինչդեռ զի պանծացեալ իշխէր սայ ի վերայ ընդ ամենայն աշխարհն, զձով եւ (դ)ցամաքն նուաճեցուցեալ էր ի ներքոյ յօտից: Եւ բոս չիք հաճութեան տեառն Աստուծոյ ամբարտաւանից, զի ահա բարձրացոյց ըլլուրն բարկութեան ի վերայ նոցին, զի որպէս ապոն Բարայէլացուց ի դաշտին, մինչդեռ զի էր մանանայն ի բերանս նոցայ, եւ որպէս զՍողոմ-Գոմօրայ հանդուհանման էջ եւս բարկութիւն Աստուծոյ ի վերայ երկրին Բաղդատուոյ, որում եօթն հարիւր եւ տասներորդի թւոյն Հայոց, յանկարծակի եկն աշ-

խարհակործան թաթար Չինկիլ Հալաբուխանն ի վերայ երկրին տեղոյս, և հալածեաց երկիրն ընդ ամենայն, քանզի ի բնէ բացուստ անտի, ի խայկֆայութեան ի վիճակին Օմարի, որում ութսուներորդի թւոյն հայոց յարուցեալ Օմարն. իսկ անձամբ ի վերայ կոստաշտից ընդ հասարակօք սկսեալ ի Բարելունէ մինչ Պարսկաստան, որածելով խաթիք տաճկացբել էր ի կոստաշտութենէ գնոսայ, ըստ այնմ ուստի և զչարայոյղ Հալաբուխանն կոստաշտ զոյրով բուն, և զմտղեմի հալածմանց քեռաթմբութիւն թագուցեալ ի սրտի, ըստ որում յայնմ զարոյն ինքնակալ զօրեղ զոյրով սլարապ գտեալ, բաղմաթիւ զօրօք եկեալ ի Պարսկաստանէ սկսեալ ուր և որէք մահմետական գտեալ, սուր սուսերաւ խողխողելով հասեալ մինչ Բաղդատ, զիւր նախնեաց արեան բոցն նորին բարկութիւն բորբոքելով, առ ի վրէժխնդրութեան արեան նոցին: Ըստ այնմ ուստի և սկսեալ անխղճարար զմահմետականն անորիչ ընդ բնակեալ Քաղզ (Հացի) քրիստոնէից և ընդ համադունդ նոցին և զմեր աննպաստ, բաղմաշարչար զերկրն Հայաստանեաց, համակից ընդ միախումբ նոցին, արանց և կանանց, մինչև զտղայն ստնդեօք հանդերձ արմատախիլ և բնաջինջ արար սրով զամենայն: Հուսկ յետոյ աստ և անդ հետադօսեալ որոնելոյ՞ ի ծոց զաղտարանաց, գտեալ ըստ չափու իրր քառասնից օրիորդք և հարսից անէն առ յառեան անօրինի, և առ ընդ սակո նոցին ևս հրամայէ գումարել գնոսայ ի դաշտի և ի ներքոյ ոտից երկիրաց արշաւանօք սմբակոխ արարեալ, խորտակելով ճնշեալ, ևս ճմլեցին և գնոցայ, և հուսկ առ յապայ, ըստ կարեւորին գնտիր զրուակօք տեղոյն քաղաքի, և զաղօթատեղի ճամբքն տաճկաց ընդ զարմանատեսիլ բրդանքն աշտարակօք, և զեկեղեցիքն քաղզ (Հացի) քրիստոնէից և հոյակապ չուկայք և անթիւ կալածոց, որում նպատակ նոցին մինչ ցարդ, բաց երևակի երեւի զորն հրդեհեալ, զորն յատակելով և զերկիրն անբնակ, ամայի թողեալ, ի բաց կացեալ: Եւ յապայ ասեն թէ բանակաւ իւր հանդերձ զօրօք չուս առեալ, զիմեաց առ յնդխարտս և ի ճանապարհի ուր ուրէք, զմահմետականն հանդիպէր խողխողելով և հաս մինչ յնդխարտսն և պաշարեաց և ընդ սակաւ աւուրք¹ մի, ընդ բանակաւ անդանօր նստելով յանկարծակի ի միում զիշերի կաթուածական ախտի խեղդամահ լեալ անօրէնն սատակի և թափառեալ անտէր կելով, ընդ բանակի, զորք նորին Փժկի: Եւ ըստ այնմ յարեալ ազարացի և արարացիք, ի վերայ զօրաց նորին Փժկի, խողխողելով փոխադարձ արարեալ. վարեն գնոսայ մինչ Պարսկաստան, և բնաջինջ արմատախիլ արարին գանոյն Փժկոյն, մինչ ի սպառ, որպէսպի նօքայ առ սոցին ագնուական տոհմն, որում էր Բնի Արպասեանց սեռն ընաջնջեալ հատունելոյ առիթ եղեն, և զոր մահմետականքն աւազելով զգամձամբ տոչորին մինչ ցայտօր, քանզի որպէս հայրապետական սերունդ էր, մասն առ ազգի իւրեանց, զոր հատաւ և զերկիրն Բաղդատոյ, որում 274 ամ անտէր ամայի կելով, պարսխացիքն անդուստ տիրապետեալ իշխելով, մինչև ի 984 (1535) թրւոյն Հայոց ի Կոստանդինուպօլսոյ Սուլթան Սուլթանխանն եկեալ և ազատեաց երկիրն ի զերութենէ:

Եւ ընդ աւուրսն չարայոյղ ապիրատ Փժկի, յատակեալ կայուածոց, զմասն ի բաղմաց զեկուցանեմ, յորոց նարդեանս առ ընդ կանանց չուկայ յորջորջեալ ընդ արձակ տեղոյն, անտանելի մեծ մի տեղի աղօթից էր տաճկաց ի բացուստ, որում բարձրահայեաց զարմանատեսիլ բարձր բուրգն մինչ ցարդ, բաց երևակի անխախտ կայ, որոյ և այժմ անարդ և տղեղ չուկայ մի կաղմեալ, որում զերձանափաճառութիւն և անարդ իրացն առնեն, և անուն տեղոյն

1 Բնագրում՝ աւուրք:

յայն՝ Քարի Բագարի կամ Սուզլ Ղազըլ յորջորջեն :

Նայ եւս ի թաղին շուկայի հնախաճառացն այժմոյս , որում եւ սայ եւս էր ի բնէ մեծ , բնդարձակ ճամի մի , տեղի աղօթից նոցին եւ սրոյ այժմ գոյոյ բաղանիս կազմեալ փոխարէն տան աղօթոյն եւ Համամ Փէնջէ—Ալի յորջորջեն զանուն տեղոյն , որպէսզի զնոյն մտարանաց տեղի բուրդն քայքայեալ , եւ զոր մասն նպատակ նորին մինչ ցարդ ի մէջ թաղի բնակարանաց կալածոյն , կայ պարզապէս որում Մընարթլ Մաքթումայ եւ Քրրբկ Մինարայ յորջորջեն :

Այլեւ մանաւանդ զողբալի Քաղդ (էացի) քրիստոնեայքն զոր անօրինի սրբոյ խողխողեալ նահատակեցան , նոքայ եւս յ(ա)տկ(ա)ցեալ անտանելի մեծ մանասոր մանդլք) եւ գեղեցկաչէն եկեղեցիք ունէին , որ զկնի տարազէս արկածից , անբնակ ամայի կելոյ , որոց եկեղեցւոց մինն ի բացուստ հետէ տաճկաց աղօթատեղի բուրդ աշտարակաւ , բնդ զմբէթի ճամի կազմեալ , որում սր թասաքի ճամի յորջորջեն , որպէս եւ արդեանս կայ ի վայելման նոցին :

Նայեւ զՄանսոր մանդն զայն ի գետափոյն ճիւղի յատուկ փառաւոր զբուակօք ընդ խցերաւ եւ ընդ արձակ այլի պարտիզաւ հանդերձ զոր ականատես իսկ եմ լեալ , ի յամայի աւուրցն ժամանակի , որ զկնի յետ հալածանացն Հալաքուխանի , միջոց ընդ յեկար ամօք զքրիստոնէից սուրբ մանդն ամայի կելոյ , ընդ ժամանակաւ տաճկաց Մովսովի զէրփիշներ ի նմայ բնակելոյ եւ անուն տեղոյն Մովսխանայ յորջորջիւր : Եւ յետ զկնի 560 ամաց որում եղև ի կուսակալութեան Դափուզ փաշայի վրացւոց , որ ի Հայոց 1270 (1821) թւոյն յիշեալ փաշայն զսուրբ կալածն զայն փլուզելոյ եւ ի նմայ գոյոյ բուրդ , աշտարակ զմբէթի , առ սակս տաճկաց տեղի մտարանաց կազմեալ , բնդ շուկայք եւ խանութ կրպակօք , ձեռակերտեաց զվաղեմի մանասպրն զայն :

Իսկ արդ , յորժամ հուպ լեալ միեցան ի նմայ , նախնի հիմունքն մանդի փլուցանել ի բնուստ , առ վասն նորակազմ հիմունքն հաստատելոյ եւ ի բրել պեղման վարկեան , ահա եւ անդրէն զաղստարան մի երեւեալ բացաւ , եւ մտեալ ի ներքս մեծահոլոյ ոսկւոյ զանձ մի զտին , եւ էր պարունակեալ բնդ ի զոգ զանձոյն թաղ մի ոսկւոյ , ծանրազին ընդ քարեղէն մարգարտաւ յորինեալ , եւ տիրացաւ Դափուզ փաշայն զայն , եւ ամանք անհատից բառ կարճեաց զուշակեալ սակին իբր թէ թաղ նարուզոտոնոսորի է . բայց ոչ , թիւր էր կարծիք նոցին , քանզի ի զարոյն յայնձ անբնակ վայր եւ անտառ մի էր զաշան տեղոյն եւ հեռագոյն յոյժ ի սահմանէ Բաբիլոնի : Այլ մանաւանդ հաւանական է անկեղակարճ եւ հաստատապէս սակ թէ ի ժամանակի Քաղդէացւոց թաղ էր զայն պատարազիչ եպիսկոպոսաց , եւ զմթեր զանձն ընդ նմին աներկրայ : Սակայն Դափուզ փաշայն վրացւոց զաւակ զոլոյ , իսկ եւ իսկ զիտելոյ անձրոունջի տիրապետեաց եւ ի Հայոց 1280 (1831) թւոյն , յետ սաստիկ մահտարածմէն զկնի , տեղոյս Դափուզ փաշայն իշխանական արտօնութեան անկելոյն , պատժեալ զոլոյ , բնարար յուղղեւորեցին առ Պօլիս , եւ զայն թաղն յիշեալ ընդ բազմահոլոյ զանձ , մթերաւ առ վասն թողութեան յանձանաց՝ զոհ մատոյց , առ ի սպաս թաղաւորին Սուլթան Մահմուդիտան արքային Պօլսոյ :

ԴԱՐՁԵԱԼ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՊԱՏՈՒՀԱՍ

Եւ զկնի զայն տապնապոյն , որում ի հալածմանէ երկիրն անբնակ եւ ամայի կելոյ , յայն ժամ տակաւ առ տակաւ , պարսիացիքն ի յերթեւեկութեան առ ի յուխտատեղոյն իւրեանց , իբրեւ զի տեսին զքաղաքն ընդ զաւսոօք զատարկ անտէր մնացեալ , ուստի եւ նոքայ եւս , ձրի երկիր գտեալ , որպէս մեղուի եւ մռջիւնք , անթիւ զուժարեալ եւ իշխան մի եւս Սաաղիտան յորջորջեալ

ոմն դատաւոր ընտրեն ի վերայ երկրի եւ իբր 274 ամս իշխեալ տիրապետելով վայելեցին ընդ արգասեօք երկիրն ամենայն, քան զի յորմէ՛հետէ խալիֆայու թիւն կործանեցաւ, արդէն ութնուտասան ամ էր, զոր Օսման ջուկն գարկ[դ]ացեալ որում առ Բուրսայ թաղաւորեաց, հաղիւ զօրէր զանձն իւր կառուց[ի]արեւ, ուստի եւ պարսիացիքն ժառանգեալ իշխեալ վայելեցին, մինչեւ ի օսմանցոց զարգանալն բարգաւաճութեամբ, որ ի 970 (1521) թւոյն Հայոց, Սուլթան Սուլէյմանիսան արքայն ի թաղաւորելն իւրում, իրազեկ լեալ, առդ առականաց թշուառութեան Բաղդատոյ, որոյ եւ ի 984 (1535) թւոյն, ընդ որ բաջալերեալ ընդ գո[օ]րօք¹, եւ արձակեցաւ ի վերայ պարսից, ի թաղաւորութեան Շահ Թահմազի, բնաբանն սկսեալ ի Թարբիզէ մինչ Բաղդատ, խողխողելով տիրապետեաց զերկիրն, եւ զգաւառ, միջայերկրօքն եւ ազատեաց զամենայն, եւ միջոց եւս կացեալ աստ, առ վասն սահմանադրութեան, եւ յապայ առ սակս ապահովութեան կարգադրեալ շորեք անձինք, տեղապահ երկրի փոխանորդ արքայի, ընդ յատկացեալ զօրօք, յորոց ատաջին նախադահ մի կուսակալ փաշայ յորջորջմամբ, եւ ի ներքոյ ձեռի նորին աստիկան աջորդ մի սուրաշի յորջորջեալ եւ երրորդ եւս մի ոմն ենկիշերիբեր ազասի, ընդ քառասուն հազար զօրօք եւ շարրորդն օրէնսզէտ քատիրլ խլամ կոչմամբ, եւ ընդ այսու մատակարարութեամբ տնօրինելով ապահովեալ ի բաց կելոյլ սուլթանն փառաւորելով չոպաւ աստուսդ ել, եւ զնաց ընդ բանակաւն առ կոստանդնուպօլիս յաթոնն իւր, եւ յապայ շարունակարար ըստ վերին կարգադրութեան ընթացեալ կայր երկիրն ըստ նմին օրինակի մինչեւ ցթաղաւորութեան պայմանաց արքայի, յորոց ատաջին պայմանն էր այս եւ եթէ ի ձեռս պատահմանց յորժամ կուսակալն երկրի մեռանիցի, որում նորոգ ընտրութեան այլում արտօնութեան կախումն, կարօտեալ կայր առ ընդ հաճութեամբն արքային Պօլսոյ, եւ նորին շնորհիւ նոր ի նորոյ հրովարտակաւ նորոցեսցի սեւիցէ :

Եւ զկնի վերայիշեալ արքայի, զերկիրն Բաղդատոյ, կայր ըստ այժմ կարգադրութեանն ընթանալով մինչ եւ ի մեռանիլ արքայի ել զկնի այժմ 57 ամ եւս յայժմ կարգաւ ընթացեալ կայր մինչեւ ցթաղաւորութեան Սուլթան Մուրադիսան արքայի :

ԴԱՐՁԵԱԼ ԵՐՐՈՐԴԱԿԱՆ ՊԱՏՈՒՀԱՍ

Իրբեւ եղև 1072 (1623) թւոյն ի թաղաւորութեան Սուլթան Մուրադիսանի, ի ձեռս պատահմանց, ի կենաց զբաւման տեղոյս Օսման փաշայ կուսակալի եւ աջորդ նորին աստիկան Բէքիր աղայ սուրաշին, ըստ կարգադրութեան արքայիցն նախնեաց, որպէս զի հարկն էր, ուստի եւ Բէքիր աղայն ցանկալով կաշեալ ընդ ազդարարաւ խնդրամատոյց լեալ ի հաճութենէ տէրութեան Պօլսոյ արքունական հրովարտակաւ, արտօնութիւն առաքեսցեն առ վասն իւր կուսակալութեան :

Որովհետև Սուլթան Մուրադն ի եօթներորդի ամաց իւրում թաղ ընկալեալ, անարբունս զոլով եւ ի յայժմ աւուրց ի սահմանացն Պօլսոյ ապստամբեալ Չալալի ելուզակքն, պարապ գտեալ զերկիրն եւ զնահանգացն Պօլսոյն, լպիրջքն ասպատակելով նուաճեցուցեալ էին ընդ կեղեքմամբ, ուստի եւ զՊօլսոյ նախարարք եւ սպառապետ խորհրդականք, ընդ ելուզակաց զբաղեալ զոլով մարտուցմամբ, հաղիւ կարէին պատսպարել զերկիրն եւ զթաղաւորն իւրեանց անձամբ : Եւ ըստ գուշակութեան բանի, այսու ազգաւ էր եպերելով

¹ Բնագրում գրումս է գորօք, եւ այսուհետև գրում ենք ուղիղք՝ գորօք :

ոչ գոհացան արտօնութեան հրովարտակն տալ Բէքիր աղային, բայց ուր գրտէ, հաւանական է գոհիւք ոչ էք հաճեցուցեալ Բէքիր աղայն զսէր նոցին, եւ նորայ եւս անփոյթ եղեն, որեւիցէ բոտ այնմ եւ Բէքիր աղայն եւս վհատեալ վրդով, ապստամբեալ, զիմէ վաղվաղակի նամակ մի գրելով առ Շահ Արապին, հրաւէր սոնէ նմայ, զալ եւ սիրել գերկիրն, որպէս թէ նոյն ինքն հպատակելով գոնեայ ի նմանէ ստացել զկուսակալութիւն երկրի յուսով մշտնջենական, այլ ոչ գրտէր նախքան դամենայն, ինքն սպանուելոց է ընդ անակնկալ ժիւնակալ :

Ուստի եւ զՇահ Արապան լսելն ի բաց զուարճացեալ յոյժ եւ ի 1073 (1624) թուոյն քաջաբերեալ, բանկա արկեալ արշաւասոյր զայ վաղվաղակի, եւ նախքան զմերձ լինելն երկրի, զլուր տառաք[ա]լանաց, հասեալ առ Պոլիս, եւ անդէն նոր ընդոստեալ ի քնոյ ստրջացեալ, անընդմիջմալս առաքնն զհրովարտակն արտօնութեան Բէքիր աղայի առ սակս կուսակալութեան նորին վայելման, եւ ի ժամանելն հրովարտակի Բէքիր աղայն եւս ստրջացեալ թէ ընդէր հրաւէր արար Շահին, բոտ այնմ առաջարկեաց ի մտի, առ պատրաստութեան ապստամբիլ պաշարելոյ, եւ Շահն եւս զթիւր առաջարկութեան նորին իրազեկ լեալ եւ Շահն ցանկայր թէ թարց արեանհեղութեան տիրելոյ գերկիրն. յայնժամ ննչուութեամբ կալեալ բարեկամական սիրոյ նամակ մի գրեալ առ որդւոյն Բէքիր աղայի, երկպառակեալ խարելով յորդորէ, զի որդին հօրն եթէ սպանցէ եւ ի դալսեան Շահի, որդոյն մեծարելով տայ նմայ զկուսակալութեան իշխանութիւն, մշտնջենական երկրի անտարակոյս, եւ եթէ ոչ ընդ կցեալ ապստամբիցէ ընդ հօր : Եւ ի հասանիլ նամակի, յետ ընթերցման զտրամար խոթամուծ որդին, պատրեալ, անզննարար համոզեալ եւ ընդ հօր հակառակեալ, եւ եմուտ որդոյն սատանայն ի սիրտս եւ ի մի պարապաւ եհար ըզհայր իւր Բէքիր աղային եւ սպանեաց զնայ, եւ ընդ առանձին սուրհանդակի զաշնադրեալ ի միտին եւ ընդ պատասխանաւն նամակի ուխտեաց նմայ, զոր ի միտմ աւուրցն ուրբաթի, ի ժամու աղօթիցն միջօրէի, եկեաց զօրքն Շահի տիրելոյ գերկիրն բոտ այնմ զաշանց, եւ փութանակի եկն զօրքն պարսիացոյ ի մէջ ծոցոյն գահաւորակաց, արտաքուստ քող արկեալ իբրու համարումն զերգաստանաց, որպէս թէ ուխտաւոր դաւաբարաց հանդուանակ, սակայն ի ներքուստ էին լի զինազգեստեալ զինուորօք, եւ ի մտանելն նոցին, եւ գտին գերկրականն զրաղեալ առ զվճարանս աղօթիցն ուրբաթոյ, եւ ոչ ոք եղև կշտամբիչ եւ յանդիմանող առ ընդ առաջ ընդդէմ զօրաց նոցին. յայնժամ արեանրմբու պարսիացիքն պարապ գտեալ, խողխողելով արանց եւ կանանց, մինչև պղծեալ ապականելով զկուսանս երկրի. եւ ընդ նոցին որդոյն Բէքիր աղայ, բարեկամին իւրեանց, ընդ չարաչար տանջանօք սպանին, եւ զարիւնն որպէս աղբիւր լեալ, եւ ոտոզանէր գերկիրս. եւ ի զահէ տագնապէ անտի, դբաջ եւ նախագահքն երկրի ի սաստկութենէ պակուցման, մտանեն առ ի զող պանդուկի, որ էր ձղալի Օղլի խանն, այսինքն քարվանսարոյն պաշարեալ անդ, իբր քառասուն տիւ եւ զիչեր պատերազմեալ ընդ պարսիացիսն եւ յապայ թլիկեալ եւ նրքթեալ ի սոյու եւ առ յապայ բանան զուսն պանդուկի առ թշնամուոյն յանձնուելով եւ նորայ եւս խողխողեալ եղեն անրմբերելի տանջանօք : Եւ զկնի զաղարելոյն սրածութեանց Շահն միջոց կացեալ աստ, զուխտատեղոյքն իւրեանց չըջակ[ա]յայելոյ եւ յապայ ընտրեաց զԲաթթաշխան սպառապետ մարգպան իւր կուսակալ երկրի տեղոյս, եւ մեկնեալ Շահն, շուս առեալ, ընդ բանակաւ չողաւ եւ զնաց աստէն առ յաթոս իւր յԱպահան :

Հուսկ յետոյ, սկսեցին հետեւարար, պարսիացիքն անընդհատ չարաչար ստեղծութեանց, առ աղդին օսմանցւոյ, յորոց Սօնլիքի վերաբերեալ ուխ-

ստակերդին, որք են Շեխ Արղուլղաղըր, ևս և Արուհանիֆայ իմամ Աղամ, քահանայապետն Սօնլըբի, որում նոցին պաշտելույ տեղոյքն, զորն խոհակերաց կերակրելույ, և զորն մրտաբ անամնոց, ձխաստան, այսինքն թաւիլայ գլրատարից կազմեցին, չի ապականութեամբ, և ըստ այնմ, թէ և զձայն բողոքի հասեալ էր առ յունականն Պօլսույ տէրութեան սակայն որպէս ի վեր յիշեցաք, որովհետեւ Սուլթան Մուրադն մանուկ գոլով, մանաւանդ ևս այն զի, որ ի դարոյն յայնմ, ստահակ ելուզակ ջարալիքն, անդուլ ընդ յամենայն տեղիս, նոյնպէս և ի նահանգի Պօլսոյն յանդրնարար շրջակայեալ, անխնայ կեղեքելույ աղապառ ուստի սպառապետ ևս նախագահքն Պօլսույ, զրադեալ գոլով ընդ նոքաք, հաղիւ կարէին պատասպարել զինքեանս և զարքայն իրեանց միայն և և թի, մինչև ցեօթն ամ միջոց, անմտունջ լմբերանեալ կային ընդ ամենայն: և ի յամին ութերորդոյն Սուլթան Մուրատ արքայն արբունս հասեալ, և զձայնն գուժի որպէս աշխարհանցում բողոքն ազազակի և հաս ի Պօլսու առ յակաւճ[Ղ]ս արքայի. յորժամ արքայն լուսա զաղմուկն՝ Երկրի աւաղելով սպառ(ն)ացեալ հրամայէ վաղմազակի անմիջապէս բանակս արկանել, մարդպան և սպառապետք, և ընդ հոյլ զորոք բաղմաւ, առաքեաց Բաղդաստ, առ ընդ սարսիացիան ճակատիլ, իսկ կանխաւ եօթն ամ էր, յորմէ ի գերութենէ Երկրի ոչ ունելով ինքեան դատարողէպ լուրն արքայն, իրբեւ իրազեկ եղև եօթն ամ եւս ընդ միջնորդութեամբ մարդպանաց, հետեւարար անրդհատ մարտնջելով այլևս ոչ կարացան նուսճացնել թշնամոյն, մինչև լցան շարեքտատան ամ ամբողջ, որում զազանակուր էր լեալ Երկիրն Բաղդաստույ ի գերութեան:

Ուստի ևս զարքայն, գիղ[ա]ելով զթուլութիւն սպառապետաց, զայրացեալ յոյժ ըստ այնմ, ցասմամբ քաջալերեալ անձամբ արքայն, ընդ մեծաւ սպառապետութեամբ ի 1087 (1638) թւոյն Հայոց ևս իններորդ ամսոյն Ապրիլի, և ի Պօլսույ ևս վեցերորդի ամսոյն նոյնմբերի ամբողջ[ա]պէս ժամ(ա)նեաց առ այդր, և տասնչորսերորդի ամսոյն Գեղամբերի ճակատելով եւսանդազին ջանիւք յաղթեալ, և յաւուրն Ուրբաթի ևս տիրապետեաց զքաղաքն Բաղդաստույ այսպէս:

Իսկ իրբեւ եկն և հպեցաւ պաշարելով գերկիրն ճակատս տալ արքայն, որոյ ևս բերդն քաղաքի, յոյժ ամբափակ գոլով, ջանայր ևս ընդ զարմանասքանջ հնարիւք, ոչ կարեր յաղթել, ընդ որ սքանչացեալ ակընկառոյց լեալ զարմանայր ևս կայր ապշեալ ի յայնմ, իսկ ընդ բանակի Արքային, քաջ սքանչելարուեստ զգօն ոմն մի գոլով, Սօջա Կօկ Նազար անուն, յազգէ բուն հայկազնէից, ևս զյիշեալն ցանկայր ետանդազին ինքնարոյս հնարիւք, զի նորաստեղծ թնթանօթ մի ձուլեալ. սակայն ոչ գոլով ըստ գոյի շափուոյ զնիւթ մետաղի ևս այլ պիտոյից, ևս ըստ այնմ ազդ արարեալ զեկոյց բանն առ Արքային, հրամայէ արքայն վաղմազակի զարքունական սակէ սամանն² սեղանոյն ևս զսպաս պղնձեղէն խոհակերացն բանակի ընդ ամէնն ևս իսկոյն զրոպանդակն զուժարեալ ի զաշտին Սամարբայի. ևս ընդ այսինքն ոսկուոյ, արծաթ ևս պրղնձուոյ, ևս արդն³ ի նիւթոց, նովիմբք զանդեալ, մատակարբեալ, զոյզ մի հանդունման, ահազնատեսիլ թնդանօթք ձուլեաց ճարտարապետն Կ. Նազար, և ի ճակատին ընդ քաղաքի, միով ի յերկոցունց, ընդ արծարծմամբն առաջին ի մի բամբկի գնտակաւ ի հիւսիսային կողմանց քաղաքի ընդ յաջողութեամբն Աստուծոյ զպարիսպ բերդոյն ձեծեալ քայքայելով մինչև ի յերկիր

1 Բնազրում՝ զաղմուկն:

2 Սաման = գոյք, իրեր, տնեղէն սպասներ:

3 Եարազ = ապագէնք, նաեւ ձիւ քամբ ու ծածկոց:

Հաւասարեալ եւ տիրապետեաց զքաղաքն Արքայն: Եւ ի մտանկն զօրաց, որպէս սի անխիղճ պարսխացիքն, ի ժամանակի սպանդանոց էին կարմեալ, նոյնպէս եւս սպանդ վարեցան, եւ ապայ ի նոյն փլուզեալ տեղոյն սարսպի, դուռ մի կազմեալ քաղաքի եւ անուանեցին զնայ Այլ Քափի, այսինքն յաղթութեան լուսատու դուռ, որում մինչ ցարդ կայ ի դործի անդադար:

Եւ յետ ի սրածութենէ զաղարելոյն Արքայն, յիշելով զհնարազէտ պիտանութիւն Կօկ Նաղարի, ըստ այնմ եւ հրամայեաց կոչել զնայ առ ի ըսպաս տեսութեան Արքայի, զի ի ձօնիւ ըստ արժանոյն նորին տածելով սարդեաւարեաց ճամայ՝ փոխանակ աշխատանաց նորին, նայեաւ եկն եւ Երկրպագեալ կանգնեաց ի յատենին Արքայի, եւ զԱրքայն հրամայէ ասելով ճամայ, ս'յ գու որովհետեւ արարեր զհնարս այս, արդ ինչդրեայ յինէն, իսկ Երանելին հոգեւէր զտլով, եւ ի բնէ եկեղեցի չգտլով աստ, ուստի խնդրեաց յԱրքայէ եկեղեցի մի կառուցանել, առ վասն անուան Հայոց եւ զԱրքայն ստատելով ասէ. «Ոյ խեղադար, այս ինչ խնդիր է ջ. ջին, խնդրեա՛լ զոր ինչ կամիցիս տացից ես քեզ» եւ նա կրկին Երկրպագեալ ասէ. «Կեցցէ Արքայն յաւիտեան, է իմ փափագ հոգեւոր տուն մի հաստատելոյ, զի եւ մշտնջենական կրօնաւորքն մեր բնդ ազգի տիւ եւ զիշեր, անդադար, ի սաշաման աղօթից առ Աստուած փառարանեալ եւ առ Արքայիդ յերկար կենաց, մաղթելով ի յԱստուծոյ Հայցեսցեն հանապօր», ըստ այնմ, եւ ի նոյն ժամու զիջեալ ի խնդիր նորին Արքայն եւ հրամայէ փաղփաղակի անմիջապէս, ի յարքունական գանձէն, կառուցանել եկեղեցի մի, որոյ չորեք հարիւր գաղ երկայնութիւն, նոյնպէս եւ զլայնութիւն նորին հանդուանման, եւ զհանդատարանն ի գաշտի, ըստ նմին չափո: Եւ փութանակի բնդարձակ ի ծոց քաղաքի, տեղ մի որոշեալ, որում անուն տեղոյն Թիքէնլիկ, այսինքն տեղի փշարոյս: Եւ առ վասն հաստատութեան ետ ճամայ ոսկէգօծ հրովարտակի մի, յորում եւ էր գրեալ ի ճամայ այսպէս. «Թիքէնլիքէ, մարմուր օլայ Կօկ Նաղար մահլէսի, մէլքէմ Անա իսմինդէ, էրմէնիլեր քիլիսէսի»: Եւ անյապօղ շուտափոյթ բնդ սակաւ միջոցաւ կարմեալ եւ ի 1087 (1638) թևոյն, կատարելագործեցաւ եկեղեցին, առ ըստ յանուն Աստուածամօրն մերոյ: Իսկ առ ի չգոյէ ի ժողովրդոցն մերազնէից զերանելի Կօկ Նաղարն փոխանակ զնոյն բնդարձակ հրովարտակի եւ արտօնութեան, հակադարձ նորին, փոքրիկ մատուռ մի կառուցեալ, քանզի ի դարոյն յայնմ ոչ էր քրիստոնէսարնակ, մանաւանդ ե ոչ երբէք հայք, որպէս սի ի վեր թերթոց տեսակիս՝ դանապէս քարոզէ առ սերձանօրաց:

Եւ ի աւարտման եկեղեցւոյն, առ ի չգոյ մերազնէից բաղմաշխատ Կօկ Նաղարն, փակեալ զգուռն՝ ապշեալ բնդ բանալեալ թէ զինչ արտոցէ, անդր եւ քանի մի անձին յազգէ Քաղղէացւոց քրիստոնէից հանդիպելով ճարահատեալ միամտարար եկեղեցին բնդ հրովարտական հանդերձ, սահեցմամբ վրիպեալ աւանդ յանձնէ առ նոցայ, պատուիրելով զորքան ժամանակ առ ի չգոյ ազգիս Հայոց, որպէս աւանդ վայելեալիք գուք ի ճամայ, սակայն ի ներկայանալ նոցին յայնժամ իսկոյն անպատճառ յանձնեալիք եկեղեցին բնդ հրովարտական առ Հայոց, ե նոքայ եւս ժպտեալ յոյժ, որախոյթեամբ բնկալեալ տիրացան, եւ վայելեցին երջանկարար բնդ յերկար ամօք, ժամանակ մի, զի եւ իցէ:

Եւ բնդ հանդջին զործոց Արքայի, ել եւ չողաւ աստուոց բնդ բանական փառաւորապէս. եւ զերջանկայիշատակ Կօկ Խօջայ Նաղարն եւ բնդ ճամայ հանդերձ, ե զնոյն ահագին զոյգ զարմանատեսիլ թնդանօթաց, յորոց զոր բնդ ոսկւոյ գանգեալ, զմինն յաղթուին ի նոցունց Փաթհլիէր կոչեցեալն եւ զյաղթութեան թիւ նորին, ըստ տաճկաց 1043 թիւ քանտապորձեալ յիշատակաւ, ապատելով եթող առ այդր, ի դրան ներքին բերդոյն, որպէս սի մինչ ցարդ կայ

չգիտալիք շրջապատեալ եւ զմիւսն տարան ընդ բանակի Արքային, առ ի Պոլիսն Կոստանդինու :

Եւ իբրև եղև մէկնին Արքայի աստուտ, էր ի թւոյն 1088 (1639) Հայոց, ամսեանն Փետրվարի, մերձ ի քսան եւ չորեքերորդի ամաց հասակի, բաջայազի Արքայն, կնքեալ զկեանս իւր յճարեաց, նա եւս զմեր բարեջան Խօջայ Կօկ նազար հոգևոյն առ ընդ յապոյ յախճանեալ, եւ ընդ վերին արքայութեան արժանացեալ, որոյ յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի :

ԱՐԳ ՀԵՏԵՒԵԱԼՆ Ի ՆԵՐ ԶԵԿՈՒՅԱՆԷ ՆԱԽ Ի ԲՆԷ ՀԱՅ-
ԿԱԶՆԵԱՅ ԲՆԱԻՈՐԻԼՆ ԱՍՏ ԵՒ ԱՊԱՅ ՇԱՐՈՒ-
ՆԱԿԱՐԱՐ ՔԱՂԳԷԱՅԻ ՓԱՓԳԱԻԱՆԻՅ ՈՅ
ԱՏԵԼՈՒԹԻԻՆՔՆ ԱՌ ՄԵԶ

Եւ զվեր յիշատակեալ եկեղեցին, եկաց առ ժամանակ մի, մերձ ութսուն ամ, զերեալ առ ընդ ձեռս նոցին վայելման, ցորքան չեւ եւս էր ընալ, տակաւին բնակիչք Հայոց. եւ առ յապոյ ի շնորհէ բարձրագոյն նորին Արքայի, զերկրի խաղաղ, ազատութեան, եւ բարօրեալ համբաւ նորին, տարածելով, յայնմհետէ աստանդականաց մերազնէից ի լսել նոցին յայն ժամ սակաւ, հետեւարար սկսեալ հետզհետէ ի զանազան տիեղերաց, այսինքն ի Պոլսոյ, Գամասկոս, Եդեսիոյ, Ուրֆոյ, Վանայ, Կեսարիոյ, Թոխոթ, Արաստիւոյ, Եւզոկիւոյ, ի Կարինէ, եւ այլ զանազան քաղաքաց Անատոլոյ, եւ ըստ մեծի մասն Տիգրանակերտ եւ Ասորեստանէ եւ ի նահանգաց նոցին կուտեալք եւ եղեն ժողովածու ժողովուրդ մի աստանօր, վասն որոյ՝ անէր, անմիարան եւ անհամաձայնք են արդէն մերազնեաց ժողովուրդն տեղոյս, զի եւ իցէ, եւ ի վեր բովանդակեալ մերազնեայքն մեր, ոմանք տակաւ—տակաւ վաճառականութեամբ եւ ոմանք բարեհնար արուեստաւոր երիտասարդք, այլևս մերազնէից հպտտակքն Պարսկաստանի, սկսեալ ի 1176 (1727) թւականին Հայոց, ի թաղաւորին նազր Ղուլի Շահ Թահմազ Արքայի ի յԱսպահան քաղաքին, իբրու ամս քսան անյթար, մինչեւ ի 1196 (1747) թւոյն, որում սպանեցաւ ընդ դաշնակաւ արծաթագին ծառայէ իւրմէ : Եւ նորին չար անիրաւի տուտեալ կեղեքելոյն զմեր վշտագնեալ ազգին Ջուղայեցոց եւ Համազան եւ ընդհանուր զեղջկանան անբերելի ծանր հարկապահանջութեան, խտից աղաղաւ ըստ այնմ մոլորելով ճարահատ խոյս տուեալ չուեալ, թափառեցան առ ընդ զանազան տեղերաց¹, յորոց եւ եթ 1200 զերդաստան միայն առ ի Խարկ կղզւոյն, եւ առ յապոյ Բասրայ զետեղեալ բնակեցան, թողեալ բաց ի Հնդկաստան թափառեալ բնակելոց : Եւ տարաբազասպէս ի նոյն դարոյն, յետ զկնի միջոցաւ մահտարածամ անկանելոյն Բասրայու 1200 զերդաստանաց, որում 800 տանց դուռն Ջուղայեցոց ի նոյն հարուածով մահտարածամ ի վաղեալ առ Աստուած փոխեցան, եւ այլն եկեցուք ըստ մերում բանի, եւ մասն եւս Պարսկաստանէ խոյս տուեալ, չուելոցն անգրէն ուղղակի առ տեղս եկելոց, ի թողին Շօրճայի զետեղեալ բնակէին, եւ սոքայ հեղ եւ խոնարհ տարժանարար² քնջին [չնչին] իրաց վաճառականութեամբ, ընդ բաւականախրութեամբ բաւարարեալ վայելչանային, որում որ առ յապոյ ժամանակի զարդացեալ ի վիճակի բարբութեան, բարդաւաճեալ բարձրահամբաւ զերդաստանք զոյացան

1 Բնազգում՝ եզերաց :
2 Ոչ արժանարար :

ի նոցանկ , յորոց համազանցի մահատի Աղէքսանդրեան ժառանգքն սրբ եղևն առիթ շինութեան առ ի յանուան Ամենասուրբ Երբորդութեան եկեղեցոյն , որ ի թաղին Շօրճայի , որոյ յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի ամէն :

Իսկ այնուքիկ , որք ի նահանգէ օսմանցուց էին եկեալք , եւ ի թաղին Անկոյանի , շուրջ ընդ պայտաի տէրութեան զետեղեալ , եւ ի ներ գրօշակի հոյանաւորեալ , մերազնեայքն էին պետ եւ գլխաւոր արհեստականաց , առ ի սպաս տէրութեան գործոց , սյք էին կուսակալ բղէշխից սափրիչ , ժամագործ , սակերիջիչ , գերձիկ եւ զենքագործ , եւ այլ զան(ա)զան արհեստաւորաց պետ որոյ հանապաղ պատրաստարար կային ի պաշտամունս տէրութեան . եւ սոքայ ի շնորհ տէրութեան բարգաւաճեալ եւ ի վիճակէ բարօրութեան պանծացեալ եւ ընդ մերձաւորս իւրեանց փարթամացեալ երջանկարար կենցաղաւորէին ըստ մարմնաւորի հանապաղ , սակայն ըստ յամենայնի գօրիկ էին ի հոգեւոր վայելչութենէ , եթէ եկեղեցւոյ ազօթից եւ թէ առ վասն մատակարարութեան քահանայից Հայոց . ուստի եւ ճարահատեալ ընթանային առ Կօկ Նաղարեան եկեղեցին , զոր ի բացուստ զաղարեալ , գերի որոացեալ կայր ի ձեռն փափաղաւանից , եւ մերազնեայքն եւս , մինչ ցայն վայր , շէին զգացեալ , որում ժ(ա)ռանգութիւնն նորին , մերազնեաց է զաղարումն բաժանակալութեան , քանզի յայնմամ ծածկեալ անյայտ էր խորհուրդն այն , ուստի պարտաւորեալ առ ի սկստս մատակարարութեան , անխտիր խոնարհելոյ ընթանային առ նոցայ :

Այլ եւ ըստ որում մարդկային բնութիւնն , անզուպելի մեղանշտեան գոլոյ եւ ի բարեկենդանութենէ , շուայտեալ ջնոնուին , առ սակս ամուսնութեան ցանկալոյ , ուստի որոյ ազաղաւ եւս զիմէին առ օրիորդացն փափագաւանից եւ առ ազգին ասորացուց , սրովհետեւ յայնմ դարոյն , ոչ երբէք զայր բնակիչք եւ ոչ օրիորդք հայոց , նայեւ զքահանայքն նոցին փափագաւանից եւս կեղծ խորամանկութեամբ , ոչ խտրելոյ այլ արփեալ ցանկանային , առ ի պետարս որսաւորս զթափառեալ զառանցն հայոց խորասուզելոյ եւ որսալոյ առ ի ցանցս իւրեանց անզաղար որսային , եւ անխտրարար բնասնենալոյ , զոմանս բազմից շողմելոյ պարուանդեալ առ զիւրնց զաւանտութեան շրջէին , եւ ընդ զոմանս կեղծ սիրոյ թուլագրութեամբ վարուէին , քանզի յայնմ դարոյն յայժ ուժնակի գօրեղ էին մերազնեայքն շքամբ , թէ եւ ոմանք խնէչ կնամոյաց , ի լղբչութենէ վաւաչօտեալքն , խառնակելոյ ընդ նոցին եւ կօրեան , սակայն ջերմ հաւատոյ աշնուպարմքն ոչ , այլ ուրոյնացեալ կային փառաւորապէս : Իսկ սակայն փափագաւանքն , ի յօրէ հալածմանէ Հալաբուխանի եւ առ ապայ Աուլթան Բլղրում Պայաղիղէ , ստոր նկունացեալ զոլոյ ընդ ողորմելի վիճակաւ կենցաղաւորէին օր հանապաղ , գլխակորեալ զառնապէս :

Իսկ արդ ահա եւ մեք ելաք ընդ հուր եւ ընդ ջուր եւ եկաք ի հանդիստ այսպէս .

Այսօր երկնային դուռն ողորմութեան ծագեալ ի վերուստ զի որպէս յարոյց Աստուած ի շորէքօրեայ գերեզմանէն զՂազար հանգունանման ըստ նբմին , փոխանակ զմեր նախնի բարեաց յիշատակ Սօջայ Կօկ Նաղար յորջորջեալ հոգելուսոյն , առաքեաց Աստուած երկրորդական մի օմն ուստայ Նաղար , որոյ այսօր ընդ ձեռս շնորհիւ սորին լինի վերադարձումն փրկութեան եկեղեցւոյն առ մեզ , զի որպէս ի բնէ կանխու , մեր էր բաժանակալ , ժառանգութիւն նորին եւս :

Չոր ի թուոյն 1160 (1711) երբորդոյն Հայոց , ի ձեռս պատահմանց տեղոյս նախնի բղէշխին , ի կենաց զբաւելոյ եւ փոխանակ այլ նորին այլ օմն ի Պօլսոյ ընտրեալ գայ իշխելոյս ազանօր , եւ ընդ նմին պաշտօնատարից ի բանակի , առ ընդ սպասու նորին բղէշխի եկեալ մի օմն , իսկ բնիկ մերազնէից

Եւ ամական անուամբ ուստայ Նազար Քլիջէրաշի յորջորջիւր, որոյ ընդ հանապաղ կայր ի պաշտօնի տէրութեան, զսուր եւ զենք ճատտակարարեալ զործերոյ, եւ ի միտմ խանութի բնակեալ զիւր աշակերտօք հանդերձ, առ ընդ զործս իւր հետեւեր, եւ մասն իւր հնարապիտութեան բարձրաշուք էր ի սպասու տէրութեան: Եւ էր ընդակից աջորդ նորին երիտասարդ տն իսկ Բաղդասցի, եւ ընիկ ընդ ազգու հայ, եւ բառ մակ անուամբ Այդին յորջորջիւր, որ ի յապայ յետ զբաւման կենաց ուստայ Նազարի, Այդինն ժառանգելոց է ըզգահ պաշտօնն նորին: Ձի ահա ի սմանէ սերեաց ծնունդն մեղսամած Ղ. Ա.³ Այգ(ին)եանց եղկելուցն: Եւ այժմ ի բաց թողում գեղեղութիւն սորին անցից առ ընդ հետապայի թերթոցն բացատրել, մասնցի մի խափանեացի զպարունակութիւնն բանիցս պիտոյից:

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

Նոր Զուգա

(Շար. 1)

³ Գուկաս Աբրահամի:



ԳՐԱԾՍԱԿԱՆ

(Շարունակութիւն թիւ 11-12, 1972, էջ 478-486)

13. «Ընդհանուր կանոն է որ ածականը գոյականին հետ կը համաձայնի, երբ միավանկ է ... Իսկ երբ բազմավանկ է, կը համաձայնի միայն յետադաս ըլլալու պարագային» (էջ 52): — Սա ևս մի սխալ յայտարարութիւն է: Դիմենք ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԼԱՅԿԱԶՆԵԱՆ ԼԵԶՈՒԻ մահնաժտահանի փերականութեանը. «Նախադաս ածականը նախդրիւ կը հարով» (էջ 258), այսինքն՝ հարովով ու թուով չի համաձայնում գոյականի հետ. «Երկու երբեմն կրնայ իւր գոյականին հետ համաձայնիլ կամ մէկտեղ հարովիլ» (նոյն տեղում). «Երբեմն միևնոյն գոյականի երկու երեք նախադաս ածական որ ըլլայ՝ առաջին կամ վերջին ածականը գոյականին հետ կը համաձայնի, մնացածն անփոփոխ կը թողուի» (էջ 259, կանոն Գ.). և երկու դէպքում էլ օրինակներ մէջ ունենք բազմավանկ ածականներ. ուստի ճիշդ չէ հեղինակի յայտարարութիւնը, թէ երբ ածականը բազմավանկ է, «միայն յետագայ ըլլալու պարագային» կը համաձայնի: Արդէն հեղինակի սահմանած կանոնն ինքն իր մէջ սխալ է. իրր «Ընդհանուր կանոն է որ ածականը գոյականին հետ համաձայնի, երբ միավանկ է». մինչդեռ ինքն իսկ ասում է, թէ բազմավանկն է էլ համաձայնում: Խնդիրն այն է, որ նա անտեսել է «նախադաս» բառը, որ առեալ դէպքում յիշատակում է փերականութիւնների մէջ. հմտ. «Քանի մը միավանկ կամ երկվանկ (որ հեղինակը նոյնպէս անտեսել է. Մ. Մ.) ածականներ, ինչպէս են սուրբ, մեծ, վառ, հիւս, բարի, շաւ, և այլն ... նախադաս եղած ասան գրեթէ միշտ կը համաձայնին» (Քերականութիւն հայկական լեզուի, էջ 259, կանոն Բ.). ուշադրութիւն դարձնենք մեր ընդգծած բառերի վրայ: — Միւս կողմից՝ ճիշդ չէ՝ «Իսկ երբ բազմավանկ է, կը համաձայնի միայն յետագայ ըլլալու պարագային» յայտարարութիւնը, քանի որ յետագայ ածականը «կը գառուի նաև շիտհամաձայնում» (նոյն փերականութիւն, էջ 259, կանոն Գ.): Մանաւանդ սկանկներին ճիշդ կը լինէր սովորեցնել, որ գրարարում ածականը, նախադաս կամ յետադաս, կարող է համաձայնել կամ չհամաձայնել իր գոյականի հետ:

14. «Մեզնի մասակ էին, իսկ զորս ես զսի՝ արուք ես» նախադասութեան (էջ 57) «եսն գառի» բառերը հեղինակը թարգմանել է «ես ԶԱՆՈՒՔ» գառայ և աւելացրել է հետեւեալ բացատրութիւնը. «Մի կը կըրամ ն զիմորոք յօղի է որ 'զանսնի' իմաստը կու տայ, սակայն քանի որ ԶՈՐՍ (գորս, որոնք) բառը կայ արդէն, ուստի աւելորդ է կրկնելը» (էջ 60, բացատր. 32). — Սխալ է թէ՛ թարգմանութիւնը և թէ՛ յօդի գործածութեան բացատրութիւնը: «Զորս ես զսի» բառերը նշանակում են «որոնց ես գառայ» (արեւմտահայերէն՝ «որ ևս գառայ»): Ն յօդն այստեղ յիշեցնում է զորս յարաբերական դերանունի այն կամ այնօրիկ յարաբերեալը, որ լուրեւայն կ'իմացուի. այսպէս՝ «Իսկ այնօրիկ, գորս ևս գառայ»: Հեղինակն իր սխալ բացատրութեանը աւելացրել է «նման օրինակ մըն ալ՝ Թագաւորք կամեցան տեսանել զոր զուրճ սեսանի (Թագաւորներ ուզեցին տեսնել՝ ինչ որ զուր կը տեսնէ), ուր Գ յօդը նոյնպէս կրկնութիւն է ԴՈՒՐԻ» (նոյն բացատրութեան մէջ): Նախ՝ նկատենք, որ հեղինակի «նոյնպէս» բառի գործածութիւնն այստեղ անտեղի է, քանի որ յօդը

երկու օրինակներում նախադասութեան նոյն անդամի «կրկնութիւնը» չէ. առաջինում իբր ուղիղ խնդրի («զանսնք»), իսկ երկրորդում իբր ննթակայի («զոււք») կրկնութիւնն է: Երկրորդ՝ վերջին նախադասութեան մէջ, բայց այս անգամ Դ յօդը նոյնպէս յիշեցնում է լռելեայն իմացուող յարաբերակը՝ «Թագաւորք կամեցան տեսնել զայլ, զոր (սուայիկ) զուք տեսնէք»: Վերջապէս, հեղինակը իր սխալ բացատրութիւնները եզրափակում է նման դէպքերում յօդի կիրառութեան մտացածին ընդհանուր կանոնով. «Գրաբար, սակայն, կը նախընտրուի այլ յօդերը բայերուն կիւել (եան բէ եկրակսնեուն): Օր.՝ Չոր ասեմք քանիւ... կամեցան լսել զոր լսեմք... Զի՞նչ են բանքը վասն որոյ վիճիքի ընդ միմեանս մինչդեռ զկայմ...» (նոյն բացատրութեան մէջ): Նախ՝ նկատել տանք, որ տրուած օրինակներում Ս և Դ յօդերը չեն դրուել եկրակներէ վրայ լսկ այն պարզ պատճառով, որ դրանցում չունենք արտայայտուած ննթականեր: Երկրորդ՝ տուեալ դէպքում գրաբարի նախընտրութիւնը բոլորովին այն չէ. ինչ ուսուցում է հեղինակը, այլ՝ այն, ինչ կարգում ենք ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԶԱՅԿԱԶՆԵԱՆ ԼԵԶՈՒԻ ԿՐԻՍՏՈՒԹԵԱՆ «Յարաբերական բառերու հետ կապուած յօդառութիւն» վերնագրի տակ, էջ 297. «Գրաբարի մէջ շատ յաճախեալ ոճ է՝ յարաբերական բառէ մը անմիջապէս ետև եկող բառին վրայ ս, ղ, ն յօդերը դնել... Ասոնցմէ (այսինքն՝ յարաբերական բառերից. Մ. Մ.) ետքն եկած որեւիցէ մասն բանի՝ կ'առնու ս, ղ, ն յօդերը, թէպէտ հարկուած անուն կամ դերանուն ըլլայ կամ խոնարհուած բայ, մակբայ, կայն. նա և այն բառերն որ երբեք յօդ չեն կրնար առնուլ...»: Տրուած են երեք էջ օրինակներ, ուր շի երևում Պ. Պէտրեանի նշած վերոյիշեալ մտացածին «նախընտրութիւնը»: Քերականութիւնը սովորեցնում է, որ «Յօդին այս գործածութեան մէջ ալ ճշդիւ կը պահուի երեք դէմքերու հետ համեմատութիւնն ու կապակցութիւնը: Դէմք ըսելով կ'իմանանք նաև տեղոյ և ժամանակի յարաբերութիւնը, ներկայ կամ մօտաւոր կամ հեռաւոր» (էջ 297, կանոն Դ): Եւ վերջապէս, ըստ քերականի, տուեալ դէպքում յօդի գործածութիւնը կապուած է յարաբերակի զեղչուած, կամ տակայ լինելու հետ. բայց «Յօդին այս գործածութիւնն ազատ է. այսինքն եթէ յօդ չգրուի՝ սխալ չ'ըլլար. մանաւանդ ուր որ յարաբերակ բառը ներգործութեամբ գրուած է... Բայց յօդը կ'աւելցուի վայելչութիւն, ոյժ և շատ անգամ բացայայտութիւն տալու համար» (էջ 299, կանոն Զ): Յօդի նայնպիսի սխալ բացատրութիւն է տուել Պ. Պէտրեանը էջ 100, բացատր. 6. և էջ 192, բացատր. 11:

15. «Քեզ ասեմ, այր քաջ Արտաշէս» հանրածանօթ նախադասութեան այր բառի վրայ շեշտ դնելով, հակառակ հրատարակութիւններու, նրա մասին հեղինակը տուել է հետեւեալ երևակայական բացատրութիւնը. «Քնկհանգուպէս «այր մարդ, մարդ» կը նուանակէ, սակայն հոս յարմար է քարգանակ իբր բացազանչութիւն՝ «ո՛վ» (էջ 72, բացատր. 1): — Հեղինակի այս սխալը հուանաբար գալիս է իր ուսուցիչ Աշոտ Ա. Արրահամեանի հետեւեալ սխալ բացատրութիւնից. իբր այր բառն այդտեղ «Աւելագրութիւն է... իսկ երբեմն էլ դրուած է առանց այդ (այսինքն՝ սեռը ցոյց տալու. Մ. Մ.) անհրաժեշտութեան, որպէս աւելագրութիւն, ինչպէս այստեղ» («Գրաբարի ձեռնարկ», Երևան, 1964 էջ 409, ծան.

1 Հեղինակը սովորաբար անցեալ անկատարով է խօսում գրաբարի մասին, այստեղ բացառութիւն է արել:

15)։ Այր բառն այստեղ ամենին աւելորդ չէ, և այր քաղ Արսաեկս բառերը նշանակում են «քաջ աղամարդ Արտաշէս», ինչպէս թարգմանել է Սահփանսս Մալխասեանը (Մալխու Խորենացի, Հայոց պատմութիւն, Երևան, 1940, էջ 118)։ Առնձեռն բառարանը մի գեղեցիկ բացատրութիւն է տալիս այր բառին՝ «մարդ ըսելու մարդ, նաև՝ կարծ, մեծ մարդ»։ այս բացատրութիւնները միանգամայն յարմար են այստեղ։

16. Իբր թէ «Գրաբարի մեջ պարբերութիւններ շատ յանախ (ՔԱՆԶԻ) բառով կը սկսին, որ պարզապէս խօսքը կցելու միջոց է այս պարագային, ու շի բարգմանութիւն» (էջ 75, բացատր. 1)։ — Գրաբարի քերականութիւններին և բառարաններին մէջ էական շարժապի մասին այսպիսի դիտողութիւն չէ արուած. ուստի հեղինակի բացատրութիւնը անհիմն և անընդունելի է։ Այդ բառը նայնիսկ կարելի է թարգմանել Եղիշէից մէջ բերուած հատուածում. կարծում ենք, որ «Բանգի ի բառնալ ազգին Արշակունեաց» և յաջորդ տողերը՝ «և իբրև զնա ևս մերժեաց ի թագաւորութեանէն» հիմունքի կամ պատճառի պարագայ են թի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն» յայտարարութեան համար։

17. «ՈՐ ԸՆԴ ԶԵՌԱՄԲ ՆՈՐԱ» նախադասութեան առթիւ, ուր իրօք պահասում է եին բայը, հեղինակը գրել է. «Գրաբարին մեջ ընդհանուր կանոն է որ երբ նախադասութիւն մը կը սկսի ՈՐ յարբերականով, ետևան բայը (է կամ ԿԱՅ) զիցուի» (էջ 91, բացատր. 2)։ — Հեղինակն է սահմանել այս կեղծ «ընդհանուր կանոն»ը։ Այդպիսի կանոն չկայ, այլ «նոս անգամ յարբերականին (էական) բայը զօրութեամբ կ'իմացուի» («Գրաբարանութիւն հայկական լեզուի», էջ 348, Ի)։ Մեր հեղինակը «չառանգամ» բառերը փոխարինել է «ընդհանուր կանոն»ով։

18. Ներդրական «Ա» հոլովիչի մասին խօսելիս հեղինակը գրել է, թէ իբր այն աւելանում է «Բ-սաին (արմատին) ներսը, վերջին բաղասայնեկն առաջ (եղեկն — եղեկան)» (էջ 97, բացատր. Ա ՀՈՒՈՒՈՒՄ)։ — Բերուած և հոլովուած օրինակներից է նաև քաջութիւն բառը, որի հոլովիչը արմատի վերջին բաղասայնից առաջ չէ. ուստի փակագծերում պէտք չէ աւելացնել «արմատին» բառը, որ կարող է թիւրիմացութեան տեղիք տալ։

19. «ՅՈՐԴԻՈՅ ԱՍՏԻ ԻՄՄԷ» բառերի առթիւ կարգում ենք հետևեալ բացատրութիւնը. «ԱՍՏԻ, այլև ԱՅՏԻ, ԱՆՏԻ՝ առանձինն՝ կը նշանակեն «հոսկե», «հոսկե», «հոսկե». սակայն երբ կը գործածուին բացառականով դուռած ուրիշ բառի հետ՝ պարզապէս կը բարգմանուին «այս», «այդ», «այն»։ Օր.՝ ՅՈՐԴԻՈՅ ԱՍՏԻ ԻՄՄԷ — «իմ այս գուկեա» (էջ 108, բացատր. 11)։ — Նախ՝ խմբագրական կարգի երկու դիտողութիւն. 1) մեր ընդգծած «առանձինն» բառի փոխարէն պէտք է ասուէր «բայի հետ», քանի որ ասի, այսի, անի բառերը առանձին չեն գործածուում, այլ բայի հետ գործածուելիս են նշանակում «հոսկէ...» և այլն։ Հեղինակն իր այս շարժանքին» բառով յիշեցնում է իր ուսուցչի «Գրաբարի ձևանարկ»ի «անկախ գործածութեամբ» արտայայտութիւնը տուեալ դէպքում, (էջ 85) որ նրան թիւրիմացութեան մէջ է գցել։ 2) «Բացառականով դուռած ուրիշ բառի» փոխարէն պիտի ասուէր «գոյականի կամ փոխանունի»։ — Մեր բուն, քերականական դիտողութիւնն այն է, որ սխալ է սովորեցնել, թէ ասի, անի և այսի բառերը «պարզապէս կը թարգմանուին այս, այդ, այն», այսինքն միայն ցուցական անկաններով։ Այս հարցում հեղինակը շեղուել է իր ուսուցչի «Գրաբարի ձևանարկ»ից, որի էջ 85ում (1964ի հրատ.) կարգում ենք. «Սակայն նման դէպքերում (այսինքն՝

«գոյական – անունների հետ» (Մ. Մ.) նշանակութեամբ փոխադրում են ցուցական դերանուններին եւ ցուցական յօդերին: Պ. Պէտրեանը անտեսել է «և ցուցական յօդերին» բառերը: Սակայն Աշոտ Աբրահամեանի խմբագրութեան սխալն էլ այն է, որ առաջին շեշտը դրել է ոչ թէ յօդերի, այլ ցուցական անունների վրայ: Այս հարցի մասին «Քերականութեան» լեզուի աշխատութեան մէջ կորդում ենք հետեւելը. «Որոշույ յօյի տեղ կը բանին ցուցական որոշույ (անդական) մակբայները, դէմքին և հոլովին համեմատ» (էջ 329) որոշույ կամ տեղական մակբայներից են ասի, այի և անի: Բազմաթիւ օրինակներից յետոյ ասում է. «Տեղական (որոշույ) ցուցական մակբայները ցուցական դերանունաց տեղ կը դրուին՝ իրենց գոյականին հաղատ, – թէ՛ նդակի և թէ՛ յոզնակի թուռոյն մէջ» (էջ 33): Սակայն մի քանի օրինակից յետոյ աւելացում է հետեւեալ դիտարկութիւնը. «Այս ցուցական մակբայներուն անունական դերանունաց տեղ գործածութիւնը շատ յաճախեալ չէ» (նոյն էջում), և աղագուհի երկրորդ ծանօթութեան մէջ՝ «Աստի հասարակօրէն իբրև յօդ գրում են գրոց մէջ և ոչ իբրև ցուցական դերանուն. ինչպէս թարգմանութեանց բնագիրը կը ցուցնէ», և բերում են օրինակներ: Ուստի բացառական գոյականի հետ գործածուած ասի, անի և այի բառերը մեծ մասամբ յօդերի նշանակութիւն ունեն, յատկապէս Մարկոսի աւտարանի «յորդոյ ասի իմմէ» բառակազմութեան մէջ, ուր հեղինակը ասի բառը թարգմանել է «այս» – «իմ այս գաւկէս». այդու առակի տանուէրը, որ փոխաբերաբար թերևս Աստուած է, մի կ'արդի ունէր՝ «Յետոյ տառքեաց առ նոսա զուրի իւր («իր արդին») և ասէ. Թերևս ամաշխացեն յորդոյ ասի իմմէ». այստեղ ասի բառը համազօր է Ս յօդին:

20. «Ե՛բ անցեալ դերբոյին հետ ԼԻՆԻՄ բայը կը գործածուի՝ միշտ կրաւորական կը կազմէ» (էջ 119, բացատր. 6): Հեղինակն է ընդգծել իր սխալ յայտարարութիւնը, որ նոյնիսկ իր ուսուցչի «Գրաբարի ձևանարը»-ին դէմ է: Սրանում կարգում ենք. «Չի կարելի պնդել, որ անցեալ դերբայով և լինել բայով կազմուած դիմաւոր ձևերը միայն կրաւորական նշանակութիւն կարող են ունենալ», և բերում են օրինակներ (էջ 223): Աւելացնենք «Քերականութեան լեզուի» աշխատութեան հետեւեալ տողերը. «Հայերէն լեզուի յատկութիւն է՝ որ միևնոյն անցեալը թէ՛ անական և թէ՛ միանգամայն ներգործական բայ ըլլայ՝ իւր հայցական խնդրովն որ շատ հեղ հետն ունի... Ասկէ է որ ներգործական բազմաթիւ ժամանակներն՝ եմ, լինիմ բայերով ալ՝ հայցական խնդիր կ'առնուն. Նիւրեալ լինեք բաղաւորել շարուրիւն. Գտեալ լինիմ զիւրկուրիւն (գտած կ'ըլլաք)» (էջ 435, Ժէ): Այսպիսով՝ լինիմ օժանդակ բայի հետ գործածուած ամէն մի անցեալ դերբայ կրաւորական չէ, նոյնիսկ եթէ բայը ներգործական սեռի է:

21. Եղիշէի «Եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց մահումը պատերազմիս» նախադասութեան մեր ընդգծած բառի մասին էջ 149ի 12րդ բացատրութեան մէջ ասում է. «Ներգոյականի իմաստ ունի, սակայն առանց Ի նախադրի, բան մը որ բիշ կը հանդիպի»: Ոչ մի օրինակ չէ տրուած: Առանց Ի նախդրի ներգոյական ոչ միայն «բիշ կը հանդիպի», այլ բոլորովին չի հանդիպում բացի «գիշերի» ձևից. հմտ. Անթուան Մեյէ, «Լեռնապիմ դասական հայերէնի համեմատական կերականութեան» (Ֆրանսերէն), Վիեննա, 1936, էջ 95, «Ներգոյականը միշտ

ուղեկցուած է նախդրով»։ նոյնի «Հայ լիգուսք մնորեան եւ բանասիրութեան վերաբերող ուսումնասիրութիւններ» (Ֆրանսերէն), Լիգրոն, էջ 72, «Ներդաշտականը երբեք չի հանդիպում առանց նախդրի»։ Ուստի եզրչէի նախադասութեան մէջ պատկերավոր բառը ներդաշտական չէ, այլ՝ սեռական։ Երուանդ Տէր-Մինասեանը (Երեւան, 1946, էջ 177) այն թարգմանել է «այս պատերազմում», որ ճիշդ է նրա գրական թարգմանութեան մէջ։ «Սուրբ մահուամբ պատերազմիս» նշանակում է «այս պատերազմի (պատճառով) սուրբ մահով»։

22. «Իսկ թագաւորն Պարսից զարմացեալ ... ընդ ազատութիւնն, զի ոչ առար ինչ նմա յաղաքս կանանցն բեմամանս նախադասութեան մեր ընդգծած բառերը բացատրուած են իբրև «բեմամութիւն առնել (թշնամութիւն ընել կամ հանդէս բերել) բային անցեալ կատարեալ» (էջ 205, բացատր. 12)։ — Չարմանալի է, թէ ինչպէ՞ս հատուածի բեմամանք բառը, որ ըստ գրաբարի բառարանների նշանակում է «նախատինք», բացատրութեան մէջ դարձել է «թշնամութիւն»։ Շապուհը զարմանում է Հայոց Մուշեղ զօրավարի ազնուութեան, գրաբար՝ ազատութեան վրայ, որովհետեւ «իբրևն ոչ մի անարգունք չհասցրեց կանանց վերաբերմամբ» (թարգմանութիւն Ստեփանոս Մայիսեանի, Երեւան, 1947, էջ 237)։

Այստեղ նշեցինք հեղինակի քերականական բացատրութիւնների մէջ տեղ գտած թերութիւնները։

Գրաբարի այս դասագիրքն ունի նաև ուրիշ թերութիւններ՝ 1) գրաբար բառերի սխալ բացատրութեան, 2) քերականական բացատրութիւնների ոչ յստակ ձևակերպման, 3) աւելցանայեքների, 4) վտարութիւնների անհետադրականութեան։ Եւ, վերջապէս, 5) կան վրիպակներ, որոնք չեն նշուած «Նկատուած կարեւոր վրիպակներ»ի ցանկում, էջ 243։ Ի միջի այլոց, նախընտրելի էր այս ցանկը դնել գրքի ամենավերջում, և ոչ թէ առարկայացանկից և բովանդակութիւնից առաջ։

1) Այսպէս օրինակ՝ յարիւր բառը, որ ըստ գրաբարի բառարանների նշանակում է «յարիւ, միանալ», էջ 66ում, բացատր. 11, բացատրուած է որպէս «դիմել»։ «հոս» սահմանափակումը չի արդարացնում սխալ բացատրութիւնը։ Տե՛ս նաև վերևում 20րդ դիտողութիւնը։ Կամ՝ էջ 26, բացատր. 12, «Զեմեհնէս ՈՉ ԻնՉ էՐ Ամենել» բառերի դիմաց գրուած է. «Դարձուածք — կարելի չէր օգնութեան հասնիլ»։ ըստ բառարանի, ձեռնիցս բառը նշանակում է «կարող»։ ուստի հոս ոչ մի «գարձուածք» չունենք, և այդ բառերը նշանակում են «ոչինչ կրնար ընել»։ հեղինակի առում բացատրութեան մէջ կարել է ձեռնիցս բառի իմաստը։

2) Բերենք բացատրութիւնների թերի կամ ոչ յստակ ձևակերպման մի քանի օրինակ.

ա) «ԻՅԲՈՒ, ԻՅԲԵԻ — հոս՝ «երբ»։ Ուրիշ տեղեր այս բառերը, որոնցմէ երկուսը ակնի գործածական է, կրնան նշանակել՝ 'իբրև, որպէս, ինչպէս', 'իբր թէ', 'մտաւարարպէս'» (էջ 26, բացատր. 3)։ — «Հոս» և «ուրիշ տեղեր» անորոշ արտայայտութիւնների փոխարէն պիտի ասուէր, որ կրք իբրև կամ իբրու բառերը բային են վերաբերում, նշանակում են «երբ»։ հայցական հոլովով (յաճախ սրահալ հայցականով) գոյականներն կամ գերանունին վերաբերելիս նշանակում են «իբրև, որպէս, ինչպէս, պէս»։ Թուականին վերաբերելիս նշանակում են «մտաւարարպէս, չուրջ»։

բ) «Ի Քէն — դու անձնական գերանունին եզակի բացառականն է» (էջ 40, բացատր. 8): — Աւելորդ է «եզակի» բառը, քանի որ դուր բառն առանձին գերանունն է, և ոչ թէ դու գերանունի յոգնակին, ինչպէս այսի յոգնակին է այս կամ այսոյնի: Նոյնպէս անտեղի է Ի Զէնձ ձևի մասի գրելը, թէ «Գու անձնական գերանունին յոգնակի բացառականն է» (էջ 147, բացատր. 1):

գ) «ՇՆՈՐԶԵՍՁԻԹ — ձեռով նոյնն է, ինչ որ վԵՐՋԱԽՈՐԵՍՁԻԹ, սակայն, առանց շեշտի, ապառնիի իմաստ ունի» (էջ 45, բացատր. 22): — Գրաբարի քերականութիւնները սովորեցնում են, որ երկրորդ ապառնիի յոգնակի երկրորդ դէմքն է, որ չնչտ ստանալով դառնում է յորդորական հրամայական. հեղինակի բացատրութիւնից հակառակ ապաւորութիւնն է ստացւում:

դ) «ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ. Գրաբարի մէջ գոյականը եւ իր անակարգ, այլեւ յակասուցիչը (գերանուն) շատ յաճախ կը համաձայնին քիւով եւ հոլովով (աւելի նիւզ՝ անակարգ ու յակասուցիչն է որ կը համաձայնին գոյականին հետ)» (էջ 52): — Առանց սեթեթեթու պէտք էր մի անգամից «աւելի ճիշդ» ստեղծապահարսն և ուսուցչին: Բացի այս, փակագծեալ «գրաբար» գերանունն բառը պէտք է փոխարինել «ստացական անակարգով», քանի որ միւս բուն գերանունները իրրեւ յակասուցիչ գործածուելու դէպքում չեն համաձայնում իրենց գոյականի հետ: Հեղինակն այստեղ գործածել է «գերանուն» բառը, որովհետեւ արեւելահայերէնի արդի քերականութեան մէջ դեռևս ընդունուած չէ «ստացական անակարգ»:

ե) էջ 161-ում կարգում ենք. «Գրաբարի ներկան աւելարհաբարի ներկայիս վերածելու համար կը բաւէ որ ազգեր «Կ՛» աւելցնենք ... (անշուշտ աննշուշտ սրբեութիւններ կան, ինչպէս՝ հոգաՄ — Կը հոգանՔ, հոգաՄ — Կ՛ հոգաՄ եւ այլն)»: — Նոյն այդ տարբերութիւններն «աննշան» չեն, թէև փոքր են: Կարծում ենք, որ «հոգանք» պիտի ապագրուէր «հոգանք» վրիպակը: Իսկ էջ 171-ում անցեալ անկատարի կազմութեան ժամանակ այդ «աննշան տարբերութիւնները» նոյնիսկ յիշատակուած չեն:

զ) Հեղինակի իսկ բռնորով, «Ստորագասական եզանակի» ապառնիներին առաջինն իրր կազմուած է «ներկայի ձևերէն», «ուստի վերջաւորութիւններն ալ շատ նման են ներկային» (էջ 186): — Հայաստանում բարձրագոյն կրթութիւն ստացած «հայագէտը» (ինչպէս մամուլում նրան յորջորջել է Մեղիգանեան հաստատութեան անօրէնը) պիտի ստէր, որ առաջին և երկրորդ ապառնիները կազմուած են՝ առաջինը՝ ներկայի նիւզից, երկրորդը՝ կասարեալի նիւզից, և ոչ թէ «ձևերից»: Ճիշդ է, որ յարգեմ և յարգիցեմ ձևերի տարբերութիւնը միայն — ից — ներմասնիկն է: Բայց ի՞նչ նմանութիւն կայ հոգամ ներկայի և հոգայցեմ ապառնիի միջև: Ընդհակառակն, հոգաՄը «գարծել է» հոգայցեմ այսինքն՝ կարծէք բայը իր լծորդութիւնն է փոխել: Ստորագասականի երկրորդ ապառնիի մասին էլ հեղինակը գրել է. «Այս ապառնիին ձևերը, ինչպէս նկատուի է, անցեալ կասարեալի ձևերէն կը կազմուին: Հմմտ. անց. կատ. ՅԱՐԳԵՑԻ — ապ. ՅԱՐԳԵՑԻց ... , անց. կատ. ԹՈՂԵՐ — ապ. ԹՈՂԵՍ» (էջ 186): — Գործեալ պէտք է ասուէր կատարելի «հիմքէն» և ոչ թէ «ձևերէն»: Երկրորդ ապառնիի միայն եզակի առաջին դէմքն է կազմուել (բայց ոչ միշտ) անցեալ կատարելի նոյն դէմքին աւելանալով -ց՝ յարգեցի — յարգեցից. իսկ հեղինակի օրինակի տը-

ւած ԹՈՂեր կատարելի և ԹՈՂցես ապառնիի միջև ընդհանուրը միայն ԹՈՂ - հիմքն է, կատարելի հիմքը և ոչ թէ «կատարելի ձևեր»ից մէկը:

է) Շատ անգամ յատակ չեն և շփոթութիւն են առաջ բերում հեղինակի յղումները կամ «տե՛ս»երը, որոնք տասնականների հասնելով՝ ինքնին տողակալի են: Այսպէս օրինակ՝ «(Բաղաք) է՛ր . . . ԹԱԳԱՒՈՐԻ ՈՒՄԵՄՆ - տե՛ս ի՛նչ. դաս, ԱՌՆ ՄԻՈՋ է՛ին» (էջ 137, բացատր. 1): — Տեսնում ենք «տե՛ս»ը, ուր գրուած է. «Ասիկա գրարարի յատակ կառուցուածք մըն է. «էական բայ + սեռական» և այլն (էջ 65, բացատր. 1): Բացատրութիւնը եռաստղով է, ուստի վերաբերում է նաև աշակերտին. բայց սա նաևնարար չպիտի իմանայ, որ ուղիղն բառաձևը («էր . . . Թագաւորի ուղիղն») արական է, մինչդեռ «տե՛ս»ի կառուցուածքի օրինակի մէջ՝ «տուն միոջ էին», և արուած բացատրութեան մէջ համապատասխան բառը ՍԵՌԱԿԱՆ, հոյով է: Թերևս ուսուցիչը գիտենայ այս հանգամանքը, բայց չկարողանայ պատասխանել աշակերտի հարցին:

3) Հեղինակը դասագիրքը շարագրել է արևմտահայերէն, բայց որոշ բառեր գործածել է իրենց արևելահայերէն նշանակութիւններով: Այսպէս, էջ 8, բացատր. 6, ամեն բայը թարգմանուել է «բերել» և «օգլել». արևմտահայ աշակերտի համար վերջին բայը նշանակում է «թողնել»: Ի միջ առնուժը թարգմանուել է «կառնել, գլխի իյնալ». երկրորդ բացատրութիւնը յատակ է արևելահայերէնին: Ի չփնդալ առնուժը թարգմանուել է «միամտացնել. միամիտ ձևանալ» (էջ 209, տողակալի բացատր.). — երկու բացատրութիւններն էլ անիմաստ են Արևմտահայի համար, որ գիտէ, թէ միավիշ = պարզամիտ: Արևելահայերէնում միակցայնել բառը նշանակում է «միտքը հանգստացնել, կասկածը փարսախել»: Բացի այս, ի չփնդալ առնուժը զարձուածքը պատճառական կամ ներգործական բայի նշանակութիւն ունի, իսկ «միամիտ ձևանալ» բացատրութիւնը չկոսք բայի նշանակութիւն ունի և սխալ է:

Արդևն բառը բազմիցս գործածուած է հեղինակի բացատրութիւնների մէջ անտեղի կերպով, ինչպէս նեաեալ նոխարասութեան մէջ. «Մարդ բառը ունէր և մարդ յոգնակին, որուն բացառականը արդևն կ'ըլլար Ի մարգոց» (էջ 34, բացատր. 5, ծան. 2). արևմտահայերէնում արդևն բառի նման գործածութիւնը կարող է թիւրիմացութիւն առաջացնել: Նոյնը պէտք է ասել նրա բազմութիւ անգամ գործածած ալլել բառի մասին:

Նկատելի են մեղանշումներ արևմտահայերէնի քերականութեան դէմ. օրինակ՝ «իմ ձևաքով» (էջ 8, բացատր. 9), փոխանակ «իմ ձևաքովս». «Բառերուն վրայ կը դրուին թիւեր» (էջ 37, վարժ. 1), փոխանակ «դրուած են», քանի որ այդ թիւերը արդէն դրուած են վարժութեան մէջ:

4) Տրուած վԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐը մեծ մասամբ թարգմանական բնոյթի են՝ գրարարից աշխարհարար կամ հակառակը: Համարուած ենք, որ աշակերտները դրանց մեծագոյն մասը չպիտի կարողանան կատարել, քանի որ նրանք զինուած չեն լինում քերականական անհրաժեշտ, կանոնաւոր գիտելիքներով. նրանց ամբողջ գիտելիքները վերածուած են նմանութիւնների «զգացողութեան»: Երբեմն այդ էլ չկայ. օրինակ՝ էջ 11ի 2րդ վարժութեան մէջ պահանջուած է աշխարհարար թարգմանել անզգամք» յոգնակի ուղղականը. իսկ մինչ այդ աշակերտը հանգիպել է միայն «աշխուժք» և «արեգականք» յոգնակ իւղղականներին, որոնք


միայն Ք յոգնակերտ մասնիկի յաւելումով չեն կողմուել, ինչպիսին է «անզգամք»ը: Նոյն սեղում պահանջուած է նաև թարգմանել «ի տան իւրում», որի նմանը չի տեսել աշակերտը մինչ այդ և, հեռաբար, դրա «զգացողութիւնը» չուներ:

5) Վրիպականեր կան հեռեկալ էջերում՝ 13, 41, 75, 95, 123, 127, 150, 160, 171: Գիտակցական վրիպակ պէտք է համարել «Հայաստանի համալսարաններ»ը, քանի որ այդպիսիք չկան. կայ միայն Երևանի պետական համալսարանը: «Վրիպակ» է նաև «հաստատութեան» բառը հեղինակի տիպոսի մէջ՝ «Երևանի Խ. Աբովեանի անուան Հայկական Մանկավարժական Հաստատութեան...»:

Մանրամասնօրէն քննելով Պետրոս Ս. Պէտրիբեանի «ԼԵԶՈՒ ՆԱԽՆԵԱՅ, Գրաբարի դասագիրք»ը՝ մենք դալիս ենք այն եզրակացութեան, որ դրանում պակասում է քերականութեան հետեողական, աստիճանական և կանոնաւոր ուսուցումը, որ անհրաժեշտ է որևէ «մեղսած», այսինքն՝ այժմ չիստաւող լեզու սովորելու համար. ուստի այս դասագրքով չի կարելի գրաբար սովորել բառիս բուն իմաստով: Դասագրքում կան քերականական սխալ բացատրութիւններ:

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

Ծրուաղէմ



ԷԶԵՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԳԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ (յօդուած-
ներու ժողովածո) : Ուրաձայ, լաքահագմ, էջ 340, Երևան, 1971 :

Հատորը նուիրուած է Հանդուցեալ Աշոտ Գ. Յովհաննիսեանի ծննդ-
եան 80—ամեակին : Վ. Ա. Դիրյանի յօդուածով մը կու տայ անոր կենսա-
դրականը : Ինքը ևւ իրմէ վերջ Ս. Ն. Սարիճեան կը վերլուծեն՝ բարձր գնա-
հատելով՝ անոր գրական վաստակը մինչև էջ 60, որմէ վերջ կու գայ հատո-
րին առաջին բաժինը, նուիրուած միջնագարեան Հայաստանի պատմա—բանա-
սիրական Հարցերուն :

Շահեկան է Հ. Մ. Բարթիկեանի «Գրիգոր Մագիստրոսի քաղաքական
կողմնորոշման Հարցի շուրջ» յօդուածը, որ ցոյց կը տրուի որ Գրիգոր Մա-
ցիստրոս բիւզանդամու չէր, բնդհակառակը՝ ջանաց պայքարի բիւզանդական
մտանդին դէմ, մինչև որ յուսահատ՝ տեղի տուաւ, անոնց յանձնելով իր բը-
նաւայր Բջինն ալ :

Ս. Գ. Բարխուդարեան «Սոցիալ—տնտեսական բոլանդակութեան ար-
ձանագրութիւններ և դիտողութիւններ» խորագրով կը գրէ «Դեմեթրա հար-
կ»ի, «Շողչ»ի, «Գեղեղմանհարկ»ի, «Հարսնհարկ»ի և «Ջեռնաւոր—ձեռ-
նաւորհարկ»ի մասին, հիմնուելով հին հայերէն արձանագրութեանց վրայ :

Ա. Շ. Մնացականեան կը ստորագրէ «Միջնագարեան սիրոյ երգերի
նորայայտ անդրանիկ ժողովածուն և հայերեններէ հարցը», հիմ ունենալով
Մաշտոցի անուան Մատենագարանի թիւ 10208 բնաթի տաղարանը : Մնացա-
կանեան, ըստ իր սոցիոլոգիան, մեղի կուտայ շահեկան աշխատութիւն մը՝
որ հետաքրքրութեամբ կը կարդացուի :

Յակոբ Դ. Փափաղեան գիտնական պարսկադէտը կը գրէ «Ռայաթնե-
րի իրաւական պատմութեան հարցը արեւելեան Հայաստանում 16—18րդ դդ.
և Շահ Սուլթան Հիւսէյնի հրովարտակը», բնագրական յուսատիպ արտահա-
նութեամբ :

Վ. Ա. Յակոբեան կը պարզէ «Մաշտոցի անուան Մատենագարանի թիւ
1496 ձեռագրի ժամանակի և հեղինակի հարցի շուրջ», բաւլով որ այդ ձե-
ռագրին պարունակութեան («Պատմութիւն Օսմանցոց») հեղինակը նոյնինքն
Իդնատիոս Մուրաճայ դ'Օստենն է, արդէն համբաւել պատմիչ հեղինակ :

Հատորին երկրորդ մասը կը պարունակէ Հայաստանի նոր պատմու-
թեան պատմա—բանասիրական Հարցեր, որոնցմէ առաջինը՝ «Էջմիածնի վա-
նական տնտեսութիւնը 19րդ դարի սկզբին», ստորագրուած Վ. Ա. Դիրյանե-
անէ, աշխատուած գրութիւն մըն է, շահեկան :

Վ. Զ. Ղազարեան կը ստորագրէ «Արաբեանի և Բելլինսկու գաղափա-
րական սոնչութիւններէ հարցի շուրջ» յօդուածը, որուն կը յաջորդէ «Հայ
հին գրականութիւնը Միքայէլ Նայրանդեանի գնահատութեամբ», ստորա-
գրուած Մայիս Այգալբեղեանէ : Իսկ ասոր կը յաջորդէ վաստակաւոր Արամ
Տ. Ղանալեանի «Բելլինսկու, Դորրոյիւրոյի, Չերնիշևսկու և Նայրանդեանի
բնագիտական հայեացքներ բնդհանրութիւնը» :

Ս. Կ. Դարոնեան կը ստորագրէ «Մ. Նայրանդեանի գրական ստեղծա-
դարձութեան մի քանի հարցերի մասին» յօդուածը : Ասոր կը յաջորդէ «Էջեր
արեւելահայ պարբերական մամուլի գրաքննութեան պատմութիւնից», ստո-
րագրուած Մ. Հ. Մխիթարեանէ : Իսկ Ն. Բ. Սարուխանեան կը խօսի «Արեւել-
եան Հայաստանի միացումը Ռուսաստանին 20րդ դարի առաջին քսանամեակի

Հայ պատմահասարակական մտքի զննահամար» հետաքրքրական յօդուածը, որ բնդունելի կէտերու հետ կան եւ ատարկելիներ: Հատորին վերջին յօդուածը նուիրուած է «Նարեհ հանգէս»ին, Հ. Հ. Ֆելիքեանէ:

ԵՐԵՒԱՆ ԵՒ ՆՐԱ ՇՐՋԱԿԱՅՔԸ: Գրեց Ստ. Մնացականեան: Տասնելվեցածայ, քղբակագմ, էջ 200, բազմաթիւ նկարներ, Երեւան, 1971:

Մեծապէս զնահատելի կը գտնեմ ծանօթութեանց նման զիբք մը որ մատչելի է ոչ մասնապէս Հայաստան այցելող հայրենակարօտ սփիւռքահայերու: Թէև թուղթը մատորակ, նկարները՝ ոչ յատկ ու մաքուր, եւ սակայն այս հատորիկը անտարակոյս խոչոր պակաս մը կը լեցնէ բոլոր անոնց համար՝ որ Հայաստան կ'այցելեն եւ կերթան զիտելու մեր դարուսը բնտիր յաշարձանները՝ ոչ մէկ պատմական ճշգրիտ տեղեկութիւն ունենալով անոնց մասին: Երեւակայեցէք՝ Գառնի, Չուարթնոց կամ էջմիածին երթալ եւ չգիտնալ թէ ե՞րբ շինուած են, ի՞նչ է նշանակութիւնը, ո՞վ շինած է, եւ այլն: Մնացականեան ասիկա կատարած է լաւ կերպով, թէև կարելի էր կարգ մը երկրորդական մանրամասնութիւններ զեղջել հատորին մէջէն եւ աւելի պարզեւ պարունակութիւնը:

Իցիւ թէ այս հանրամատչելի պարունակութեամբ հատորը կարելի ըլլար հեշտութեամբ ձեռք բերել: Գինը՝ մօտաւորապէս 40 սէնդ Միացեալ Նահանգներու՝ իրապէս շատ ձեռնտու է եւ մտահօրէն Սփիւռքի ամէն Հայ որ հայրենիք կ'այցելէ պիտի ուզէր օրինակ մը ձեռք բերել:

ՅՕԳՈՒԱԾՆԵՐՈՒԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ: Գրեց Նուպար Տէր—Միխայէլեան: Ուրածայ, քղբակագմ, էջ 172, Անքիլիաս, 1970:

Հատորը նուիրուած է մազմեկի Եղուարդ Պօյաճեանի, մեկենասութեամբ Պր. Վահրամ Պօյաճեանի: «Առաջարած»ին մէջ հեղինակը կը յայտնէ որ այս հատորին մէջ ներառեալ յօդուածները արգէն հրատարակուած են Հայաստանի եւ Սփիւռքի գանազան պարբերականներուն մէջ:

Շահեկան են Յովհաննէս Երուսաղէմացույցի մասին իր գրածները, որոնք հատորին 25 էջերը կը զբաւեն: Սակայն ընդարձակագոյն յօդուածն է «Եղիպտոսահայ գաղութը ԺԱ—ԺԲ դարերում», որ կը զբաւէ էջ 80—124:

Յօդուածներուն մնացեալ մասը այժմէական ՚իւթերով, որոնց մէջ քաղաքական ալ կայ, մանր ծանօթութիւններով յօդուածներ են որոնք զուցէ ամանց համար հետաքրքրական ըլլան:

Տէր—Միխայէլեան պրպտող նկարագիր ունի:

ՊԵՏՐՈՍ ԳՈՒՐԵԱՆ. ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ: Խմբագրութեամբ ողբացեալ Պարոյր Սեւակի: Երկիստոր, լաքակագմ, փոքրածայ, Երեւան, Ա. Հատոր 1971, Բ. Հատոր 1972: էջ 368 եւ 564:

Հակառակ ընտիր տպագրական գործ մը չըլլալուն, երբ Երեւան էի 1972 Հոկտեմբերին բացարձակապէս կարելի էր 20,000 տպաքանակով այս

հրատարակութիւնը ձեռք բերել: Կրտսեն թէ հրատարակ չհանուած արդէն արտատեր են հատորները, մանաւանդ Բ. հատորը:

Բնագիրը հրատարակութեան համար պատրաստած է Ա. Շարուրեան, ինչպէս նաև կարելուր ծանօթութիւնները: Հրատարակութեան համար պատրաստել կ'երևի թէ խորհրդահայերէնի մերածել է, եւ այդպէս ալ եղած է: Գծուար հաւատարի է որ Հայկական Ակադեմիան նման գրեթէ սրբապղծութեան թոյլատու եղած բոլոր, երբ հրատարակը սղոյզուած է Գուրեանական հրատարակութիւններով՝ անոր գրածին մէկ ստորակէտն ալ չտեսելու խորունկ եւ սրբապան պրացումով նախանձախնդիր:

ՖԱՌՈՒՍԹ: Վալֆիկանկ Կէօթէ: Գերմաներէնի բնագրէն քարգմանեց՝ Կարապետ Գ. Իւլիւպէյեան: Քառաւայլ, քղբակազմ, 158 էջ, Անթիլիաս, 1970:

Մաքուր տպագրութեամբ հատոր մըն է ասիկա: Որքան որ գերմաներէն չենք գիտեր եւ չենք կրնար թարգմանութեան հարադատութեան մասին արտայայտուիլ, եւ սակայն հոս գործածուած լեզուն ազատ է խրթնութիւններէ, հեշտիւ հասկնալի, եւ հաճելի՝ ընթերցանութեան: Կարապետ Իւլիւպէյեան թարգմանութիւնը սկսած է 1944 Հոկտեմբերին եւ աւարտած 1946 Յունիս 12ին, որմէ ա՛մ իս ու կէս մերջ, 1946ի Փոքոտոս 2ին, կը մահանայ: Յետ մահու այս հրատարակութիւնը կը կատարուի մեկնեցողութեամբ Գրիգոր Ա. Ղազարեանի աշխիւն՝ Տիգրան Աննա Գ. Ղազարեանի: Հատորին սկիզբը Կէօթէի, Ղազարեանի եւ Իւլիւպէյեանի լուսանկարներէն զատ կայ խնամեալ եւ համառօտ ներածական մը՝ «Նոճան Վալֆիկանկ Կէօթէ»ի մասին, ինչպէս նաև թարգմանիչ Կարապետ Գ. Իւլիւպէյեանի կենսագրականը: Խնամեալ հայերէնով մը, ընտիր եւ հաճելի ոճով՝ ամբողջ հատորը կարելի է կարգալ գրեթէ մէկ շունչով եւ անձանձորով: Էջ 151ով կը սկսին «Մանօթագրութիւններ»ը, կենսական՝ բացատրելու Կէօթէի դազանածածուկ ակնարկութիւնները:

Անտարակոյս ընթերցանութեան համար ընտիր հատոր մըն է այս:

ԼՈՅՍ ՆԻ ՍՏՈՒՆԵՐ: Արտակ Արքեպոս. Մաճուկեան: Ուրաւաւ, քղբակազմ, 150 էջ, Պէլլուք, 1971:

Թեհրանի գերաշնորհ առաջնորդին պարբերական հատորներէն մին է ասիկա: Բացառիկ եկեղեցական մըն է Արտակ Սրբազան, խորունկ նուիրմամբ իր կոչումին, եւ կ'ուզէ լուսադոյն Հայ եկեղեցականներու շարքին արժանի ըլլալ, իր հօտին եւ համայն Հայութեան ծառայելով՝ գրական շինի, եւ ծանօթագրական արժէքաւոր գործերով: Արտակ Սրբազան իր այս հատորով ցոյց կու տայ գրական կարողութիւն, խորունկ եւ աղնիւ մտածումներով ներկայացնելով ինչ որ յաճախ տափակ տարագով կը ներկայացուի:

Շահեկան այս հատորին մէջ առնուած են նաև արդէն այլուր տպուած գրութիւններ, որոնցմէ մասնաւորապէս լիշեցի էջ 102՝ «Կտակիս մէջ կը ներառեմ»:

Արտակ Սրբազան իր այս կարճ ու իրապէս շինիչ գրութիւններուն մէջ կը յայտնուի իրը լաւ գիտող, կարճ ու կարուկ արտայայտուող մը, ըն-

տիր նկարագիր մը եւ բարոյական սկզբունքներու տէր գրող մը: Ներկայացուած պատկերները սամրոզական: Երանյները՝ պարզ ու տպաւորիչ: Հետո՝ ազգային կամ կրօնական մոլեռանդութենէ, սակայն իր գրելը կը շարժի տեսնոց նուիրումով, զինք իր պարզութեամբ բնթերցողին մրայ տպաւորիչ ընելով:

Սրտանց կը գնահատենք իր այս շինելի մաստակը: Մայթենք որ իր «Լոյս եւ Ստուեր»ը տարածուի բոլոր անոնց մէջ՝ որոնք կը ցանկան հսկայաբար զիրք մը կարգալ այս օրերուն՝ երբ լաւն ու զեղեցիկը պահաս են:

ԵՐԿԵՐ: Ա. Հատոր: Գրեց Եղուարդ Պոյանեան: Մեծ ութաձայլ, լաթա-կազմ, էջ 334, Պէյրուք, 1972: Մատենաշար Համագայիինի:

Յետ մահու հրատարակութիւն է այս գրական հատորը: Կարճ միպակներու շարք մը եղած է նպատակը: Գրելու կարողութիւն եւ անկէ աւելի՝ գրելու փափաք որոշ կ'ընեն զրեթէ ամէն տողի մէջ: Պատկերները խորհուած, շարագրուած են, որով շատ բոն կը կորսնցնեն հարագատ, տաք, անմիջական եւ նոյն ատեն իրական տպաւորութենէ: Ընթերցողը ստիպուած է կանց առնել եւ զիտել, որպէսզի հասկնայ բուսածը. սակայն անմիջական զգացական տրպաւորութիւնը արդէն պողած է, չզացած: Յուզուելու տեղ շուարած, հաշիւով ձեւով գրուածին մրայ կը մնայ նայուածքդ, մինչեւ որ քանի մը տող կամ քանի մը էջ մերձը յայնիս եւ մէկզի գնես զիրքը: Ձեռ ըմբռներ թէ ինչո՞ւ համար «Ժխախտտի արկղիկ» եղեր է (էջ 150) անխառ ծխախտտի «տոփիկ»ը:

Նրաթը առատ է հատորին մէջ, շատ առատ, միայն թէ ազն ու պղպեղը տեղին ըլլար, չափաւոր, համը առնուած:

ՆՈՐ ԶՈՒՂԱՅՅԻ ԱՆԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻԻՆԸ: Հաւաքեց Տիգրան Թ. Արգարեանց: Ութաձայլ, քղրակազմ, 226 էջ, Թեհրան, 1966:

Ոչ միայն նոր ստացայ այս մեծարժէք հատորը, այլ եւ բոլորովին անձանօթ մնացած էր ինձի: Որքան որ կը յիշեմ ո՛չ մէկ տեղ հանդիպած եմ ո՛չ թէ զբախտութեան, այլ նոյնիսկ հարեանցի ակնարկութեան: Պր Տիգրան Արգարեանց ազնիւ եւ ժրջան անձ մըն էր (իրեն ծանօթացած եմ 1937ին նոր Զուղա ուր գացած էի ձեռագիրներ եւ այլ ուսումնասիրելու): Ան մեծ պատրաստակամութեամբ ամէն կերպով օգտակար եղաւ ինձի: Իրապէս հանգուցեայը (մահձանեցաւ 1950ին) անսպառ շտեմարան մըն էր նոր Զուղայի մասին արժէքաւոր տեղեկութիւններու:

Հատորին առաջին մասը կը պարունակէ նոր Զուղայի յատուկ բառեր, առածներ եւ այլն: Երկրորդ մասը՝ հարսանիք, ծնունդ, սնտոխապաշտութիւն եւ այլն, ազգագրական արժէքաւոր նիւթեր՝ որոնցմէ սակայն մեզ կը հետաքրքրէ մասնաւորաբար բառարանը: Նոր Զուղայի ճշմ գիւանը կը պարունակէ բաղմաթիւ բառեր, որոնք զժուար կարելի պիտի ըլլայ հասկնալ ուսումնասիրելու համար՝ առանց տեղական բառարանի մը: Տիգրան Արգարեանց տոփիկ անչուշտ կրնար ընել, սակայն այդ չէ եղած իր նպատակը:

Յետ մահու այս հրատարակութիւնը արդարեւ ընտիր յուշարձան մըն է անոր համար:

Յ. ՔԻԻՐՏԵԱՆ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՕԹՆԵԱԿԸ Ս. ՔԱՂԱՔԻՍ ՄԷՋ

Անցեալ տարուան նման, այս տարի եւ, 21—28 Յունուարի միջև, Եկեղեցիներու Միութեան Եօթնեակը նշուեցաւ պատշաճ հանդիսաւորութեամբ, Ս. Քաղաքիս մէջ իր ներկայացուցիչները ունեցող Քրիստոնէական Եկեղեցիի անդամներուն կողմէ :

Առաջին աղօթաժողովը տեղի ունեցաւ 21 Յունուար, Կիրակի Երեկոյեան ժամը 6ին, Անկիլիքաններու Աէյնթ ձորճ Եկեղեցիին մէջ : Զանազան լիցուներով կատարուած Ս. Գրական ընթերցումներէ եւ Երգեցողութիւններէ ետք, Գերշ. Տ. Շահէ Եպս. Աճէմեան խօսեցաւ Եկեղեցիներու միութեան վսեմ ու սրբազան գաղափարին շուրջ, Եղբակացնելով թէ սերոյ եւ իրարհասակացողութեան ճամբով միայն կարելի պիտի ըլլայ իրագործել Երկար դարերէ ի վեր բազմացուած միութիւնը Քրիստոնէական Եկեղեցիի զանազան շարժումներուն միջև :

Երեքշաբթի, 23 Յունուար, Երեկոյեան ժամը 5ին, բազմութիւն մը լիցուցած էր Լուսերականներու Եկեղեցին, ուր մեծ մասամբ զերմաներէն լիցուելով երգուած հոգեւոր երգերէ, Ս. Գրական ընթերցումներէ եւ Տէրունական Աղօթքի մեկնարանութեան նուիրուած ընթերցումներէ ետք, Հայր Միւրէյ Ռօճրոս, Անկիլիքան Եկեղեցիէն, ներկայացուց անհրաժեշտութիւնը քրիստոնէական միութեան, մանաւանդ ներկայ օրերուն, հակադրելու համար Եկեղեցիին սպառնացող վտանգներուն :

Մեր կողմէ ներկայ էին Գերշ. Տ. Շահէ Եպս. Աճէմեան եւ Հոգշ. Տ. Պարէտ Վրդ. Երէջեան, որոնք ապա, այլ հիւրերուն հետ, մասնակցեցան Եկեղեցիին սրահին մէջ տրուած ընդունելութեան :

Հոգշ. Տ. Պարէտ Վարդապետ ներկայ եղաւ նաեւ յաջորդ Երեկոյ (Չորեքշաբթի, 24 Յունուար) Սիոն լեռան Տորմիսիոններու վանքի Եկեղեցիին մէջ տեղի ունեցած աղօթաժողովին, եւ հայերէն լիցուելով Ս. Աւետարանի ընթերցումը կատարեց : Անկիլիքան Եկեղեցիի երէցներէն մին խօսք տանելով, մաղթեց որ Աստուած ընդունելի ընէ աղօթքները Եկեղեցիներու միութեան համար՝ մատուցուած զրացնութեանը մէջ Սիոնի այն վերնատան՝ ուր Պննտեկոստէի օրը Ս. Հոգիին իջմամբ հիմնուեցաւ քրիստոնէական առաջին Եկեղեցին : Հաւաքոյթի ներկայ էր Լատինաց Պատրիարք Մօն. Տ. Ճիաքօժօ Պէլթրիթի, որ Երեկոյթը փակեց միութեան համար տարուած ջանքերը օրհնարանող աղօթք—մաղթանքով :

Յիշեալ հաւաքոյթներու ամենէն խորհրդաւորն էր սակայն յաջորդ օրուան (Հինգշաբթի, 25 Յունուար) Երեկոյեան ժամը 6ին, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուածը (առաջին անգամն էր որ Ս. Հրէշտակապետաց Եկեղեցիի փոխարէն Մայր Տաճարը կը տրամադրուէր սրբազան այդ նրպատակին) : Ժամանակէն առաջ բազմութիւն մը փութացած էր տեղ ապահովել Տաճարին մէջ :

Շուրջ 40 վայրկեաններու ընթացքին, խորհրդաւոր կրտսմութիւն մէջ, Եկեղեցիի կամարներուն տակ լսուեցան բազմաթիւ լիցունքով ընթերցումներ եւ «Եկեղեցի»ի կարգին յատուկ հոգեզմայլ մեղեդիներ : Յայտարարին մաս առին Հայր Հաննա Հատատտ՝ Արար Լուսերական, Հայր Ռաֆիք Փարահ՝ Արար Անկիլիքան, Հայր Իկնազիօ Մանչինի՝ Ֆրանսիսկեան, Հայր Րայնհարա Շիւպէթթ՝ Գերման Կաթոլիկ : Իսկ Ս. Աւետարանը կարդացուեցաւ հինգ տարբեր լիցունքով. Հայր Պարէտ՝ հայերէն, Արշիմանտրիթ Քօրնէլիուս Ռօտուսաքիս՝ յունարէն, Արար Անկիլիքան Եպիսկոպոս Նէճիպ Քուպէյն՝ արա-

րերէն, Հայր Շարլ Գուանոն՝ Փրանսերէն եւ Բրորսթ Կլաթթ՝ զերմաներէն :

Հոգշ. Տ. Մուշեղ Արեղայէ արտասանուած «Որդի Աստուծոյ» նարեկացիի զոհար աղօթքէն ետք, Շնորհալիի «Հաւատով խոստովանիմ»էն տուներ կարգացուեցան, զարձեալ զանազան լեզուներով. Հայերէն՝ Տ Գեղամ Մ. Վարդապետէ, արարերէն՝ Ուրարակիր Կարապետ Յակոբեանէ, անգլերէն՝ Ժառ. Վարժարանի անգլերէն լեզուի դասախօս Տէյլլիտ Քրրրիլ, Փրանսերէն՝ Հայր Վոլքրնէ, զերմաներէն՝ Հայր Բիքսընրէ եւ խոսյերէն՝ Յրանսխկեան Միւրանութեան անդամ Հայր Բարսեղ Թարթիւնեանէ :

